

# ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԵԴԻԱՏԵԶՍ.  
ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԵԴԻԱՏԵԲՍ.

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2022

ՀՏԴ 070  
ԳՄԴ 76.0  
Պ 505

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի  
գիտական խորհուրդը:*

**Խմբագիր՝**

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. **Ա. Ա. Ստեփանյան**

**Գրախոսներ՝**

բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Ն. Ն. Մարտիրոսյան**  
բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Մ. Մ. Կարապետյան**

**Պետրոսյան Դ. Վ.**

Պ 505 Մեդիատեքստ. ժամանակների երկխոսությունը /Դ.Վ.  
Պետրոսյան, Եր. ԵՊՀ հրատ., 2022, 186 էջ:

Գրքում փորձ է արվում քննելու մեդիատեքստի հաղորդակցական ներքին սահմանները և արժեհամակարգը, դիտարկելու դրանք գրույթի հնարավորությունների համատեքստում և ժամանակների երկխոսության մեջ:

Առաջադրված հիմնախնդիրները ներկայացված են հոդվածների տեսքով, որոնց ուսումնասիրության հիմքում դրված է միջգիտակարգային հետազոտության սկզբունքը:

ՀՏԴ 070  
ԳՄԴ 76.0

ISBN 978-5-8084-2567-5

© ԵՊՀ հրատ., 2022  
© Պետրոսյան Դ. Վ., 2022

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ժամանակն առարկայանում է մարդու ֆիզիկական և հոգևոր կենսագրությանը համընթաց: Մշակույթը ժամանակի ուղեկիցն է և իր հաղորդակցական հնարավորություններով իմաստավորում է նրա ներկայությունը: Մշակութաստեղծ գործունեության ոլորտները բազում են, ժամանակը՝ բազմադեմ: Հետազոտողները, ելնելով իրենց գիտական նախասիրություններից, հետամուտ են դրանց բնույթին, փոխառնչություններին, ներքին ու արտաքին կապերին և սրանցից բխող այլևայլ նրբերանգների:

Այս համատեքստում մենք քննության ենք առել մշակութաստեղծ իրողություններից մեկի՝ **մեդիատեքստի** ներքին սահմանները և արժեհամակարգը, դիտարկել դրանք գրույթի հնարավորությունների և ժամանակների երկխոսության մեջ: *Ներքին սահմաններ* եզրույթի արծարծումը փորձ է՝ խորանալու մեդիատեքստի պատումային շերտերում՝ վերջինիս իմաստային, երբեմն էլ նշանագիտական առանձնահատկությունները վեր հանելու նկատառումով: Ի տարբերություն գեղարվեստական տեքստի՝ մեդիահրապարակումներն ունեն իրենց ներքին կանոնները, բայց երկուսին էլ բնորոշ է ընդհանրական մի գիծ. նրանց հիմքում դրված են **ժամանակի, տարածության և դրանք միավորող արժեքային համակարգերը**:

Գրքի առաջին բաժնում («Հաղորդակցության արժեքային սահմանները») ներառված հոդվածների զգալի մասում առաջնային հիմնախնդիր է մեդիատեքստին, նրա հեղինակին բնորոշ **ներքին ժամանակի և ներքին տարածության** ուսումնասիրությունը, ինչը անսովոր կարող է թվալ մեդիատեքստի պա-

րագայում: Նման խնդրի իրագործումը հնարավոր էր միջգիտակարգային հետազոտությամբ, որի դեպքում, լրագրագիտությունից զատ, մեր տեսադաշտում են եղել պատմության, հոգեբանության, գրականագիտության և մշակութաբանության այլ ոլորտների մոտեցումները:

Մեդիատեքստերում հեղինակի հաղորդակցական գործառույթները հիմնականում պայմանավորվում են արտաքին աշխարհից եկող ազդակներով: Գրքի մի շարք հոդվածներում փորձել ենք կենտրոնանալ հեղինակի ներաշխարհում ծավալվող **ներքին ժամանակի** վրա: Դրա շնորհիվ նա խաղարկում է պատումի ժամանակային ռիթմը, նոր հնարավորություններ բացում իր աշխարհայացքի, նյութի մատուցման, լսարանի հետ փոխառնչությունների ուշագրավ կողմերը ներկայացնելու համար: Այդ ժամանակի երեք հատվածները (անցյալ, ներկա, ապագա) փոխլրացնում են իրար, ներքին տարածք տրամադրում հեղինակի մտքի որոնումներին և հոգեբանական մղումներին: Այս համատեքստում բացահայտվում է նաև ներքին ժամանակի **երկխոսայնությունը**՝ մարմնավորվելով տեքստերում առկա ներքին երկխոսություններում:

Երկրորդ բաժնում («Ավանդականի ներկայությունը») ներառվել են հոդվածներ, որոնցում փորձել ենք արժևորել հայ մտավորականության վերաբերմունքը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարասկզբին հայ մամուլի էջերում լուսաբանված **քաղաքակրթական և մշակութային արժեքների հանդեպ**: Իբրև հաղորդակցության հիմնական միջոց՝ այստեղ առաջնային են դառնում ազգային ինքնության առանցքային գործոնների քննարկումները: Անդրադարձել ենք դրանցից մի քանիսին՝ պետականության, ազգային և մշակութային ինքնության, համալսարանի գաղափարի, մասնավորապես հայոց

համալսարանի քաղաքակրթական արժևորման, ինչպես նաև ազգությանը և քաղաքական ազատությանն առնչվող հրապարակումներին: Դրանք տպագրվել են ավելի քան հարյուր տարի առաջ, սակայն չեն կորցրել իրենց արդիական հնչեղությունը: Հայկական պարբերականների ճկուն գործունեությունը՝ ազգային առաջնահերթությունների ճիշտ գիտակցմամբ, հիմնախնդիրների շահագրգիռ քննարկումներով, 20-րդ դարասկզբին մեծապես արժևորեց մամուլի դերը: Նրա էջերում առաջադրված գաղափարական, բովանդակային, թեմատիկ ուղղությունների և մերօրյա մեղիայում շարունակվող ուշագրավ զարգացումների **գուգադրական պատկերը** նորովի է իմաստավորվում, երբ դիտարկվում է ժամանակների երկխոսության մեջ:

Ինչպես նախորդ գրքում, այստեղ նույնպես հողվածների թեմատիկ բազմազանությունը իր ամբողջության մեջ համադրվում է ներքին տրամաբանական միասնությամբ: Ուստի այն կարելի է ձևակերպել իբրև **հատվածային մենագրություն**: Այլ խոսքով՝ մենագրություն **մեղիատեքստի մասին**:

Թե՛ անցյալում և թե՛ այսօր հայ իրականությունը վիրտուալ տարածքում մարմնավորող մեղիատեքստը ստեղծել և ստեղծում է զուգահեռ հոգեմտավոր իրականություն, որի ուսումնասիրությունը խիստ կարևոր է մեր օրերում հայ հանրության արժեհամակարգային սահմանները ուրվագծելու համար:



ՄԵՂԻԱՏԵՔՍ.  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԱՐԺԵՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ



# ՆԵՐՔԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

## Մուտք

«Ներքին ժամանակ» հասկացությունը փիլիսոփայության, գեղագիտության մեջ մեկնությունների երկար ճանապարհ է անցել՝ իմաստավորվելով նշանավոր մտածողների աշխատություններում՝ Պլատոնից մինչև Հայդեգեր<sup>1</sup>: Ներքին ժամանակի ընդհանրական բնութագրումներից մեկում նշվում է. «Ժամանակը պատկանում է ոչ միայն արտաքին աշխարհին, այլև **մարդու ներաշխարհին**: Մարդը ոչ միայն ճանաչում է ժամանակը, այլև **վերապրում է նրա գոյությունը**»<sup>2</sup> (ընդգծ. մերն են - Դ. Պ.):

Մարդու և ժամանակի փոխհարաբերությունները տարբեր դիտանկյուններով դրսևորվում են հատկապես արվեստում և մեղիայում: Այստեղ ներքին ժամանակի չափումները նման չեն արտաքին ժամանակի չափումներին, ինչի մասին խոսվել է դեռևս նախաքրիստոնեական շրջանի իմաստասերների աշխատություններում: Այս առումով հետաքրքրական են Ավգուստինոս Երանելու մտորումները «Խոստովանություններ»-ում: Իր երկասիրության մեջ նա կենտրոնանում է հիմնականում ներքին ժամանակի վրա, իսկ ժամանակային հատվածներից կարևորում է **ներկան**. «Գոյություն ունի երեք ժամանակ՝ անցյալի ներկա, ներկայի ներկա և ապագայի ներկա: Այս երեք ժամանակներն առկա են մեր հոգում, և այլ տեղում ես դրանք

---

<sup>1</sup> Տե՛ս **Гуссерль Э.** Феноменология внутреннего сознания времени, в 2 т. М., 1994, **Бергсон А.** Непосредственные данные сознания. Время и свобода воли, Л. Изд-во ЛКИ, 2010, **Хайдеггер М.** Бытие и время, Харьков, 2003 և այլք:

<sup>2</sup> Философский словарь (под ред. **И. Т. Фролова**), М. «Республика», 2001, с. 103.

չեմ տեսնում: Անցյալի ներկան հիշողությունն է, ներկայի ներկան՝ անմիջական հայեցումը, ապագայի ներկան՝ սպասումը: Հոգին և՛ սպասում է, և՛ ներընկալում, և՛ հիշում: Այն, ինչին նա սպասում է, անցնում է այն բանի միջով, ինչը ներընկալում է, և հեռանում է այնտեղ, որի մասին հիշում է»<sup>3</sup>:

Հետագայում գերմանացի փիլիսոփա Վ. Դիլթայը, վերաիմաստավորելով Ավգուստինոսի մտքերը, հաստատում է, որ իսկական ժամանակը ներկայի անդադար շարժումն է, որտեղ ներկան դառնում է անցյալ, իսկ ապագան՝ ներկա. «Եթե ներկան լի է ապրումներով, ապա անցյալում և ապագայում գերիշխում են հիշողությունները և հույսերը»<sup>4</sup>: Այլ խոսքով՝ ներկան իր շարունակական գոյությամբ անհատին հիշեցնում է երկրային կյանքում նրա ներկայության կարևորությունը՝ իմաստավորելով նաև անցյալի ու ապագայի գոյության անհրաժեշտությունը:

Ներքին ժամանակի անհատականացման ու կերպավորման գործընթացը հետաքրքիր դրսևորումներ է ստանում նշանավոր արվեստագետների ստեղծագործություններում, նրանց գրավոր ելույթներում (հրապարակախոսական հոդվածներ, խմբագրականներ, ուղեգրություններ, նամակներ և այլն):

Խմբագրականները՝ իբրև լրագրային ժանր, հաճախ էին կիրառվում 19-20-րդ դարերի հայ պարբերական մամուլում: Դրանք լսարանին տեղեկացնում էին տվյալ պարբերականի խմբագրական քաղաքականության հիմնական ուղղությունների մասին, ներկայացնում քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքին առնչվող սեփական դիրքորոշումները: Հա-

---

<sup>3</sup> **Наумова Н. Ф.** Время человека, «Социологический журнал», М., 1997, N 3, с. 163.

<sup>4</sup> **Дилтей В.** Категории жизни, «Вопросы философии», М., 1995, N 10, с. 132.

ճախ էլ դառնում էին այս կամ այն պարբերականի հետ քաղաքական բանավեճեր մղելու հարթակ<sup>5</sup>:

1910 թ. սեպտեմբերից մինչև 1911 թ. հոկտեմբեր ամիսը Հ. Թումանյանը եղել է «Հորիզոնի» խմբագիրը, անմիջականորեն արձագանքել արևելահայ լսարանին հուզող հիմնախնդիրներին: Նրա հրապարակումներն ընդգրկում են բավականին լայն թեմատիկ շրջանակ՝ հանրային կյանքի տարբեր ոլորտներ, մասնավորապես՝ դպրոց, եկեղեցի, մամուլ, գրականություն, թատրոն, ազգագրություն և այլն:

Հոդվածի նպատակն է վեր հանել Թումանյան խմբագրի հոգեմտավոր հայացքի սահմաններում ձևավորված ներքին ժամանակը՝ վերջինիս բնորոշ արժեքանական մի քանի հատկանիշներով:

### **1. Արտաքին ժամանակի իմաստավորումը խմբագրականներում հեղինակի ներքին ժամանակի դիտանկյունից**

Եթե, ինչպես նշվեց, ժամանակը պատկանում է ոչ միայն արտաքին աշխարհին, այլև մարդու ներաշխարհին, ապա կարող ենք ենթադրել, որ այդ ներաշխարհում ձևավորվող ներքին ժամանակը հեղինակի ապրումների, խոհերի ու մտորումների բազմաշերտ համադրությունն է: Այս համատեքստում հետաքրքիր է քննել Թումանյան խմբագրի վերաբերմունքը իրենից դուրս տեղի ունեցող իրադարձություններին, որոնց

---

<sup>5</sup> Նման բանավեճեր ու բանակոխվելեր 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ մամուլում հաճախ էին տեղի ունենում լիբերալ հոսանքը ներկայացնող «Մշակի» և պահպանողական «Մեղու Հայաստանիի», «Արձագանքի», «Նոր դարի» խմբագիրների միջև: 20-րդ դարասկզբին «Մշակի» բանավեճերը նույն ակտիվությամբ շարունակվում էին ՀՅ Դաշնակցության պաշտոնաթերթ «Հորիզոնի» հետ, որի խմբագիրներից էր Թումանյանը:

ամբողջական պատկերը դիտարկել ենք իբրև **արտաքին ժամանակ**:

Նկատենք, որ արտաքին ժամանակը Թումանյանի գրչի տակ առարկայանում է հիմնականում առօրեական երևույթներով: Դրանք, ի վերջո, բացում են հայ հասարակության դեմքը, ընկերային-քաղաքական և մշակութային երևույթների հանդեպ մակերեսային վերաբերմունքի տարբեր կողմերը: Այդ ժամանակը հեղինակը բնութագրում է հիմնականում ոչ դրական գույներով: Դա նկատելի է հատկապես իր օրոք, այսինքն՝ թումանյանական **ներկայում** տեղի ունեցող իրադարձությունների ու երևույթների գնահատման արժեչափերում:

Հայ հասարակության մակարդակը Թումանյանը առավել հաճախ գնահատում է բարոյական հարթության վրա: Ուստի, իբրև խմբագիր, քննադատում է մասնավորապես հայ մամուլում նկատվող կողմնապահ վերաբերմունքն ու հիշաչարությունը («Մեր մամուլն ու իր ընթերցողը»), դպրոցներում հայ ուսուցչի նվաստացուցիչ վիճակը («Հայ ուսուցչի ռոճիկը»), եկեղեցու ներսում անձնականով առաջնորդվող հոգևորականների անմիաբանությունը («Էջմիածնի ցավը») և այլն:

Շատ դեպքերում խմբագրի անմիջական անդրադարձը անմիջական ներկային փոխարինվում է **մնայուն ներկայով**, այսինքն՝ երևույթներով, որոնք ոչ թե տվյալ պահի, այլ դարերով չափվող մեծ ժամանակի ընթացքում կարծրացած ոչ բարոյական իրողություններ են, որոնք հիմք են տալիս նրան ընդհանրացնելու. «Անձնականը. դա Էջմիածնի այն հին հիվանդությունն է, այն սոսկալի ախտը, որ այնտեղ վարակում ու ճարակում է **անվերջ**: Դա հորինում է մի խելակորույս կռիվ, որի մեջ սպառվում ու չեզոքանում են ամենքի ուժերը, դա ստեղծում է մի խեղդուկ մթնոլորտ, ուր մեռնում են ամեն

եռանդ ու ոգևորություն, թունավորվում են ամեն բարի ցանկություններ, խեղդվում են ամեն առաքինություններ»<sup>6</sup> (ընդգծ. մերն Է-Ղ. Պ.): Այլ խոսքով՝ արտաքին ժամանակի ներկան, որ սնվում է «անբովանդակ հնի», այսինքն՝ անցյալի ակունքներից, հուսահատեցնում է գրողին, առավել ևս, երբ այդ ամենին տոն տվողը մամուլն է. «Նրա հալածանքից ու հայհոյանքից չեն ազատվել ո՛չ մեր գրականությունն ու գրողները, ինչքան էլ տաղանդավոր լինեին ու անմեղ, ո՛չ մեր հասարակական հիմնարկությունները, ինչքան էլ նրանք լինեին բարեգործական, հրատարակչական կամ կուլտուրական, ո՛չ մեր գործիչները, ինչքան էլ նրանք լինեին մաքուր ու պատկառելի, մի խոսքով ոչ ոք և ոչինչ»<sup>7</sup>:

Արտաքին ժամանակի անցյալն ու ներկան, ըստ Թումանյանի, միսիթարական չեն, քանի որ հայ գավառական կյանքի տխուր վիճակը, նրանում ծաղկող արատավոր երևույթները արտաքին ժամանակի անցյալ-ներկա հարթության մեջ լավատեսության հույսեր քիչ են ներշնչում: Այդ լավատեսությունը երբեմն առկայծում է Թիֆլիսում տեղի ունեցող ուշագրավ միջոցառումների հենքի վրա («Պետք է խրախուսել», «Գավառական երեկույթներ», «Ազգագրական գործը մեզանում»): Իսկ **ապագային** միտված գրողի հայացքը նրա խմբագրականներում սահմանափակվում է ընդամենը ցանկություններով. «Եվ ես այդ տպավորության տակ մտածում էի, թե ինչքան լավ կլինեի, եթե մեր գավառները իրար հետևից հանդես գային Թիֆլիսում այսպիսի երեկույթներով՝ իրենց առանձին տարագով

---

<sup>6</sup> **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 6, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 267:

<sup>7</sup> **Թումանյան Հովհ.**, ԵԼԺ, հ. 6, էջ 252:

ու բարբառով, իրենց սարք ու կարգով, վարք ու բարքով [...] և ինչքան բան կտովորեցնեն»<sup>8</sup>:

Ընդհանուր առմամբ այս իրողություններն են մղում Թումանյան խմբագրին, արտաքին ժամանակին իբրև ընդդիմություն, մարմնավորելու սեփական **ներքին ժամանակը**, որտեղ հոգու և մտքի չափումները կառուցված են ազգի քաղաքակրթական ներուժի, Մեծ հոգիների ստեղծած ժամանակի և դրանցով պայմանավորված մնայուն ռիթմերի վրա:

## **2. Բարոյական և գեղագիտական արժեքները խմբագրականների ներքին ժամանակի տիրույթում**

Անհատի, տվյալ դեպքում՝ արվեստագետի ներքին ժամանակը մեծապես պայմանավորված է նրանում ապրող մշակութային ժամանակի գոյությամբ: Որքան մեծ է արվեստագետը, այնքան լայն ու խորն են այդ ժամանակի հորիզոնական և ուղղահայաց սահմանները: Իրավացի է հետազոտողը, երբ գրում է. «Մշակույթը անցյալի, ներկայի, ապագայի տարբեր մշակույթների տեր մարդկանց **համաժամանակյա** կեցության և հաղորդակցման ձև է»<sup>9</sup> (ընդգծ. մերն է - Դ. Պ): Ընդ որում, համաժամանակության դեպքում չի պահպանվում գծային ժամանակին բնորոշ անցյալ-ներկա-ապագա հերթագայությունը, ինչն էլ զգալիորեն ընդլայնում ու մեծացնում է ներքին ժամանակի հնարավորությունները:

Հ. Թումանյանի խմբագրականները ներժամանակային այդպիսի տեքստեր են, որոնցում առաջնային դեր ունեն հատկապես բարոյական ու գեղագիտական արժեքները:

---

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 302:

<sup>9</sup> «Диалог культур», Новая философская энциклопедия, <http://iph.ras.ru/elib/-0958.html> 10. 04. 2019.

## Ա) Բարոյական արժեքները

Մրանք մշտապես եղել են Թումանյան հրապարակախոսի տեսադաշտում: Նրան հուզում էր հատկապես Բարոյականի փլուզման վտանգը, որի նկատմամբ խիստ զգայուն էր և որին հաճախ էր անդրադառնում ոչ միայն մարդկային, այլև ազգամիջյան փոխհարաբերությունների, կրոնական դավանանքների համատեքստում:

Ի՞նչ փոխակերպումներ են ստանում դրանք խմբագրականների ներքին ժամանակի սահմաններում:

Գրողի հայացքը բարոյական բարձր արժեքների քննության ժամանակ առավելապես ուշադիր է անցյալ-ներկա ժամանակահատվածներում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ. ներկայի հանդեպ՝ մռայլ, անցյալի հանդեպ՝ հայեցողական մտորումներով: Նրա հողվածներում խորն է բարոյական արժեքների (արդարություն, ազնվություն, խղճմտանք, բարություն և այլն) կորստի ցավը, որ հայտնվում է հատկապես **մերձավոր անցյալի** մատույցներում: Ներկայից ընդամենը օրերով հեռացած այդ անցյալի հուզական ապրումներով հագեցած են հատկապես կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանի մահվան առիթով գրված հողվածները: Կաթողիկոսին տված բնութագրումների մեջ Թումանյանը մի շարք անգամներ շեշտում է նրա մարդկային կերպարի եզակի հատկանիշներից մեկը՝ ազնվությունը. «Ամենադժարն ու ամենաբարձրը, ինչ որ կարող է լինել մարդ-արարածը: [...] Այո, հայ ժողովուրդը տվել է և կտա շատ խելոք մարդիկ, քաջ մարդիկ, տաղանդավոր մարդիկ, բայց անպայման ազնիվ մարդիկ դժար են

երևում: Եվ այսօր [...] մենք գերեզման ենք դնում այդպիսի մի հազվագյուտ ազնիվ դեմք»<sup>10</sup> («Ազնիվ մարդը»):

Անցյալից և մասնավորապես մերձավոր անցյալից ներկային վերադառնալիս Թումանյանի խոհերը դառնում են ավելի քան մռայլ, իսկ իր ապրած ժամանակը՝ առօրեական ներկան, բնութագրումներից մեկում շեշտադրվում է առանձնակի խստությամբ. «Ճշմարիտն էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությամբ»<sup>11</sup> («Դառնացած ժողովուրդ»):

Բարոյական արժեքների և իրականության հակադրությունը չի սահմանափակվում միայն ներկա-անցյալ փոխառնչություններով: Գրողի մեծ հոգին տրոփում է նաև առօրեականից վեր գոյություն ունեցող մեծ ժամանակի տարածքներում, ուր բարու, արդարության չափումները՝ իբրև հավերժի շարժուն ներկայություններ, լուսավորում են Թումանյան խմբագրի ներքին ժամանակը: Այդ արդարության մեծագույն կրողը Աստծո որդին է, որին նվիրված Զատկի օրերի մասին Թումանյանը գրում է իմաստունի խոհեմությամբ: «Մեծ և անմահ» հողվածում Հիսուսի խաչելության տեսարանը դառնում է գրողի **ներքին ժամանակի նվազագույն միավորը՝ պահը, և առավելագույնը՝ հավերժը** միավորող մի ինքնատիպ խոստովանական վերլուծություն: Նրա կարծիքով՝ Աստծո որդու չարչարանքի մեծությունը հենց այն է, որ «այս ամենը ամեն տեղ, աշխարհքի ամեն անկյունում է կատարվում, և **անմահությունն էլ**

---

<sup>10</sup> **Թումանյան Հովհ.**, ԵԼԺ, հ. 6, էջ 272:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 223:

հենց այն է, որ **ամեն ժամանակ է պատահել և կրկնվում է ամեն օր»**<sup>12</sup> (ընդգծ. մերն է - Դ. Պ.):

### **Բ) Գեղագիտական արժեքները**

Ուշագրավ արտահայտություններ են ստանում նաև խմբագրականների՝ գեղագիտական արժեքներով հագեցած ներքին ժամանակի հատվածները: Ներկայի առանձնապես չհուսադրող համապատկերի մեջ Թումանյանին ոգևորողը մարդուն տրված **արարչական** գորությունն է, որ «կրում է իր մեջ աստվածային ուժն ու ստեղծագործական շնորհքը, ամենաբարձրը, ինչ որ կարող է աշխարհքում վիճակվել մահկանացուին»<sup>13</sup>: Այն կրող Մեծ հոգիները ժամանակ և տարածություն չեն ճանաչում, ուստի Թումանյանի ներքին ժամանակի սահմաններում նրանք մշակութային ներքին երկխոսության մեջ են միմյանց հետ<sup>14</sup>: Այս դեպքում գրողի ներքին ժամանակի մնայուն ներկան ներքին երկխոսությամբ մերձեցնում է ժամանակագրական առումով միմյանցից հեռու գտնվող գրողներին՝ Ն. Քուչակից, Ն. Հովնաթանից մինչև Խ. Աբովյան, Ա. Շիրվանզադե և Լ. Տոլստոյ: Վերջինիս մահվան առիթով գրած իր հոդվածներում Թումանյանը հետևյալ կերպ է բնութագրում ռուս հանճարին. «Գերագույն ապավեն էր որոնում, աստված էր որոնում տառապող ու դժբախտ մարդկության համար և գտնում էր նրան ոչ թե ուժի մեջ, այլ արդարության, ճշմարտության, ներքին, բարոյական մաքրության և այն սիրո մեջ, որ հավասարեցնում ու եղբայրացնում է մարդկանց...»<sup>15</sup>:

---

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 309:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 336:

<sup>14</sup> Ներքին ժամանակի մեջ Մեծ հոգիների (ի մասնավորի՝ արվեստագետների) ներքին երկխոսությունը թերևս առանձին հոդվածի թեմա է:

<sup>15</sup> **Թումանյան Հովհ.**, էջ 260:

Թումանյանի խմբագրականներում հետաքրքիր մի անդրադարձ կա ներքին ժամանակին բնորոշ «**մենակություն**» գոյավիճակին: Այս խնդրին նա հետաքրքիր լուծում է տալիս Մեծ հոգիներ-միջավայր փոխառնչությունների համատեքստում: Երևույթը փորձենք մեկնաբանել բարոյական ու գեղագիտական արժեքների տեր երկու խոշոր անհատականությունների համեմատական գուգահեռի միջոցով՝ **Մասթեռու Իզմիրյան և Լև Տոլստոյ**: Առաջինը բարոյական լավագույն արժեքների կրողն է, երկրորդը՝ գեղագիտական: Երկուսի մենակությունն էլ խմբագրականներում մեկնաբանվում է յուրովի:

Մ. Իզմիրյանի պարագայում անցողիկ ժամանակի, «անպատկառ մարդկանց» ներկայությունը ճնշում է ազնիվ հոգուն. բարոյական արժեքներն ընկճվում են չարի առաջ, և մենակությունը դառնում է անհատի ֆիզիկական գոյությանը սպառնացող մեծագույն վտանգ՝ արագացնելով Իզմիրյանի մահը. «Նա մնաց մենակ ծանր հոգսերի հետ, դավադիրների դավերի մեջ: [...] Մարդ նոր է հասկանում նրա ազնիվ աղաղակը, որ աղաղակում էր ամեն պատեհ դեպքում, թե մենակ եմ, մենակ եմ, մենակ եմ...»<sup>16</sup> («Չպաշտպանեցինք»):

Նույնպիսի ծանր կաշկանդումների մեջ էր նաև Տոլստոյի հոգին: Բայց նա՝ իբրև գեղագետ, չի ենթարկվում ճնշող միջավայրին և գտնում է լուծումը, ինչը Թումանյանը բնութագրում է իբրև «զուխգործոց»: Եվ սա արդեն **ուրիշ մենակություն է**: Այն հոգեհարազատ կեցություն է արվեստագետի համար, որ դժվարին պահերին հանդարտեցնում է ներքին ժամանակի ու տարածության մեջ ի հայտ եկող հոգևոր մակընթացությունները. «Նրա դժգոհ հոգին այլևս չկարողացավ հանդուրժել այս

---

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 270:

կյանքին [...] ու մեջքն արավ նրան, երեսը դեպի անապատ, այն մեծ դժգոհների նման, որոնք անապատ են քաշվել իրենց հոգու հետ այնտեղ ապրելու և խորհելու, այնտեղ վայելելու այն ցանկալի խաղաղությունը, որ ստեղծագործող ու բարի հոգիների հայրենիքն է...»<sup>17</sup> («Լ. Ն. Տոլստոյի մահվան առթիվ»):

**Ամփոփենք:** Հովհաննես Թումանյանի խմբագրականները թեմատիկ լայն շրջանակ են ընդգրկում, որոնք անմիջականորեն առնչվում են 20-րդ դարասկզբի արևելահայ կյանքի տարբեր ոլորտներին: Մեծ գրողի ներաշխարհի չափումներով բնութագրվող ներքին ժամանակի մեջ իրականությունը, տվյալ դեպքում՝ արտաքին ժամանակը, իմաստավորվում է առաջին հերթին բարոյական ու կենցաղային հարթության մեջ: Նրանից եկող ազդակները, որոնք ակտիվ են անցյալ, ընթացիկ ներկա և մնայուն ներկա ժամանակահատվածներում, ձևավորում են խմբագրի ընդդիմադիր կեցվածքը հանրության ստեղծած ոչ բարոյական արժեքների հանդեպ:

Սրա հետ մեկտեղ խմբագրականներում առանձնակի վերաբերմունք է դրսևորվում գրողի ներքին ժամանակը կերպավորող բարոյական ու գեղագիտական բարձր արժեքների նկատմամբ, որոնք հիմնված են ազգի կենսունակության, Մեծ հոգիների մշակութային ժամանակի և դրանցով պայմանավորված մնայուն ռիթմերի վրա: Իրողություններ, որոնք մեկ անգամ ևս իմաստավորում են «Հորիզոն» թերթի խմբագրի, մեծանուն գրողի և մտավորականի վաստակը հայ մշակույթի պատմության մեջ:

2019 թ.

---

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 261:

# ՀԵՂԻՆԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՄԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

*(Ա. դր Սենտ-Էքզյուպերիի «Գիշերային թռիչք» վիպակի  
օրինակով)*

## **Մուտք**

Ժամանակը մարդու մնայուն ուղեկիցն է նրանից դուրս և նրա մեջ: Մարդուց դուրս «ապրող» ժամանակը, որը դիտարկվում է իբրև արտաքին ժամանակ և բնութագրվում միազիծ ուղղվածությամբ, հետազոտության առարկա է հիմնականում բնագետների համար: Թերևս ավելի սևեռուն ուշադրության է արժանացել մարդու մեջ ապրող ներքին ժամանակը: Այս համոզումն է հիմք տվել իմաստասերին (Պլոտին) ձևակերպելու. «Ժամանակը հոգու կյանքն է»<sup>1</sup>:

Մինչ կոնկրետ նյութի վերլուծությանն անցնելը փորձենք հստակեցնել նաև «հեղինակի ներքին ժամանակ» և «գեղարվեստական ժամանակ» հասկացությունները:

Հեղինակի ներքին ժամանակն իմաստային առումով ավելի ընդգրկուն է: Այն ներառում է գեղարվեստական ժամանակից դուրս ապրող և ստեղծագործող անհատի ժամանակային սահմանները, որոնք կարող են ի ցույց դնել նաև այդ անհատի ոչ գեղարվեստական (օրինակ՝ անձնական, հոգեբանական) ժամանակի ռիթմերը: Ըստ այդմ՝ ներքին ժամանակի սահմաններում հեղինակը սեփական ապրումների, գործողությունների կարգավորողն է: Գեղարվեստական ժամանակի մեջ նրա ուղղորդող դերը նվազում է, քանի որ հերոսները կարող են

---

<sup>1</sup> Плетшков А. А. О времени и вечности в философии Платона и Плотина, C:/Users/Comp/Downloads/o-vremeni-i-vechnosti-v-filosofii-platona-i-plotina.pdf

ստեղծել սեփական ներքին ժամանակը և դառնալ հեղինակից անկախ ու ինքնակառավարվող:

Հեղինակի ներքին ժամանակի մեջ ժամանակային երեք հատվածները՝ ներկա, անցյալ, ապագա, հիմնականում տեսանելի են ու կանխատեսելի: Այնինչ գրողի երևակայության միջոցով նրա հերոսների ներսում ապրող գեղարվեստական ժամանակը կարող է դրսևորվել ժամանակային հատվածներից որևէ մեկով, և գործողությունների պատկերման հիմնական բեռը, կախված պատումի ստեղծագործական մղումներից, այս դեպքում «իր վրա է վերցնում» ժամանակներից մեկը՝ պատկերվելով իբրև մնայուն ներկա, մնայուն անցյալ կամ մնայուն ապագա<sup>2</sup>:

Ա. դը Սենտ-Էքզյուպերիի «Գիշերային թռիչք» վիպակն ասվածի բնորոշ դրսևորումներից մեկն է, որտեղ օդաչու գրողի **ներքին ժամանակը սահուն կերպով փոխակերպվում է գեղարվեստական ժամանակի:**

«Գիշերային թռիչք» վիպակի պատումն առանձնապես հարուստ չէ սյուժետային իրադարձություններով, հերոսները նույնպես քիչ են: Էքզյուպերին փորձում է բացահայտել մարդու ներքին ժամանակը կյանքի, մահվան և ժամանակի եռակի չափումներում, ինչպես նաև իմաստավորել մարդու կեցությունը երկրային ու երկնային տարածություններում: Այս առումով հեղինակի ներքին ժամանակն առանցքային դեր ու-

---

<sup>2</sup> Գեղարվեստական ժամանակի ընկալումների մասին տե՛ս նաև **Брежнева Е. В.** «Время внешнее» и «время внутреннее» в поэтике романов Вирджинии Вулф, «Вестник Пермского университета», 2011, вып. 4 (16), էջ 225-231, **Косенкова И. О.** Субъективное время в романе Гайто Газданова «Возвращение Будды», Вестник КГУ им. Н. А. Некрасова, 2012, N 4, էջ 85-88, **Пилипюк Л. А.** Субъективное восприятие времени героями Оноре Бальзака, «Молодой вчeний», N 7 (22), часть 1, липень, 2015, էջ 150-154:

նի: Մեր տեսադաշտում այդ ժամանակի գեղարվեստական պատկերման երկու հիմնական ակունքներն են՝ երկինքը և գիշերը:

### **1. Երկինքը և հեղինակի ներքին ժամանակը «Գիշերային թռիչք» վիպակում**

Երկինքն այս վիպակում հեղինակի ստեղծագործական որոնումների կենտրոնում է: Իբրև տարածություն՝ այն կենդանանում է, երբ լցվում է ժամանակով: Իսկ ժամանակն ավելի շոշափելի ու առարկայական դարձնելու գլխավոր նախապայմաններից մեկը կերպարների հոգևոր աշխարհը բացահայտելն է, նրանց համապատասխան հուզական լիցքեր հաղորդելը: Սրանով իսկ յուրաքանչյուր հերոս ներկայանում է իր ներքին ժամանակով: Նրանց կարելի է ներառել երկու խմբի մեջ.

ա) հերոսներ, որոնք երկրից նայում են երկնքին,

բ) հերոսներ, որոնք, հաճախ լինելով երկնքում, այլ չափումների մեջ են տեսնում երկինքը, երկիրը և իրենց երկրային կյանքը:

**Առաջինի** լավագույն ներկայացուցիչը «Գիշերային թռիչք» վիպակի հերոսներից **Ռիվիերն է, երկրորդինը՝ Ֆաբիենը:**

Ռիվիերը «Աերոպոստալ» ավիաընկերության ղեկավարն է: Նրա համար երկինքը տարածք է, որը շարունակ պիտի հաղթահարեն ինքը և իր ենթակայության տակ գործող օդաչուները: Ռիվիերի ներաշխարհում ձևավորվող ներքին ժամանակը հիմնականում ներկայի, երբեմն էլ ապագայի մեջ է: Նրա

ներսում ապրող **ներկան** առավելապես **մնայուն** է<sup>3</sup>, քանի որ օրն անցնում է օդաչունների թռիչքներից ստացվող հաղորդազրույթուններով, աշխատողների հետ գործնական շփումներով, որոնք հնարավորինս տեսանելի են դարձնում նրա մարդկային կերպարը: Այդ ներկայի և երկնքի հետ Ռիվիերի կապը բնութագրվում է հիմնականում նրա հոգեվիճակի մի շարք նրբերանգներով, որոնց մեջ նկատելի է հատկապես **անհանգստությունը**. «Շուտով Ռիվիերը կլսի օդանավի հոնոյունը, գիշերը արդեն նրան էր հանձնում մի ինքնաթիռ... [...] Իսկ քիչ հետո գիշերը կհանձնի մյուս երկու օդանավերը ևս: Այն ժամանակ այս օրը վերջացած կարելի է համարել: Այն ժամանակ հոգնած անձնակազմերը կգնան քնելու, և նրանց կհերթափոխեն նորերը: Բայց Ռիվիերը չէր հանգստանալու: Այս անգամ եվրոպական փոստը կմտահոգի նրան: Եվ այսպես կլինի միշտ...»<sup>4</sup>: Անհանգստությունը, այսպիսով, Ռիվիերի հոգևոր աշխարհում ապրող մնայուն ներկայի հիմնական արտահայտությունն է: Իսկ այն պահերին, երբ նա հեռանում է երկնքի և օդաչունների մասին մտքերից, գերիշխող են դառնում աշխատողների հետ փոխհարաբերությունների, **ապագայում** անելիքների մասին մտորումները, և երկինքը մղվում է երկրորդ պլան:

Մեր նշած երկրորդ խմբի (հերոսներ, որոնք, հաճախ լինելով երկնքում, այլ չափումների մեջ են տեսնում երկինքը, երկիրը և իրենց երկրային կյանքը) ներկայացուցիչը օդաչու Ֆա-

---

<sup>3</sup> «Մնայուն ներկա» ասելով՝ նկատի ունենք հերոսի տարբեր հոգեվիճակներում ներկայի պատրանք ստեղծող հատվածները, որոնք միավորվելով՝ հերոսի ներաշխարհում ներկայի համար տևականություն են ապահովում:

<sup>4</sup> **Սենտ-Էքզուպերի Ա. դը**, Գիշերային թռիչք, [https://lib.mskh.am/images/books/Gisherayin-trichq\\_Antoine-de-Saint-Exupry.pdf](https://lib.mskh.am/images/books/Gisherayin-trichq_Antoine-de-Saint-Exupry.pdf)

բիենն է: Նրա կերպարին հեղինակն անդրադառնում է վիպակի սկզբում և երկրորդ հատվածում: Սկիզբը համակված է լավատեսությամբ: Ֆաբիենը հաղթահարել է երկնքի դիմադրությունը (փոթորիկներ, ամպրոպներ, կայծակներ): Դժվարություններն անցյալում են, բայց այդ անցյալը նրա հիշողություններում չկա, և տրամադրությունն էլ համահունչ է երկնքի խաղաղությանը. «Երկինքը հանդարտ էր, ինչպես ակվարիումի ջուրը, և իրենց առաջ գտնվող բոլոր օդանավակայանները նշում էին. «Պարզ երկինք, առանց քամու»<sup>5</sup>: Օդաչուի ներքին աշխարհում նույնպես նկատելի է **մնայուն ներկայի** գոյությունը: Հեղինակի կիրառած այս հնարանքը կոնկրետ նպատակ ունի՝ հնարավորություն տալ Ֆաբիենին երկնքից դիտելու երկիրը և հիանալու նրա գեղեցկությամբ: Ըստ էության, Աստծո ստեղծած երկու հրաշալիքները՝ երկինքն ու երկիրը, փոխլրացնում են իրար, և եթե երկրից դիտողին երկինքը գեղեցիկ է թվում իր աստղային համաստեղություններով, ապա նույնքան «աստղերով» լցված է նաև երկիրը. «Այն հասարակ աստղը խավարի մեջ մեկուսացած տուն է: Մյուսը, որ հանգավ, տուն է, որ ամփոփում է սեր... կամ թախիծ... [...] Նստած լամպի լույսի տակ, արմունկները սեղանին հենած՝ գյուղացիները իրենք էլ չգիտեն, թե ինչ հույսեր են փայփայում: Նրանք չգիտեն, որ իրենց ցանկությունները շրջապատող խավարի մեջ հասնում են այնքան հեռունները»<sup>6</sup>:

Ֆաբիենի կերպարը նոր գծերով բացահայտվում է վիպակի երկրորդ հատվածում, երբ նա հերթական թռիչքի ժամանակ պայքարում է երկինքը պատած «ամպերի ամրոցների»,

---

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

փոթորիկների դեմ: Այս անգամ պայքարն անհույս է: Հերոսի ներսում փոթորկվող ապրումները կրկին բացվում են նրա ներքին ժամանակի **ներկա հատվածում**: Բայց այդ ներկան շուտով **ճեղք է տալիս**: Մի կողմից հերոսն իր ծանրագույն վիճակում երագում է միայն ցանկալի վայրէջքի մասին, ինչը նրա մտորումները մղում է դեպի երկիր, այսինքն՝ **վաղվա հանգիստ օրը** իր երկրային կացարանում. «Ֆաբիենը մտածում էր արշալույսի մասին, ինչպես մի ոսկեավազ ծովափի մասին, որտեղ վայրէջք կկատարեն այս ծանր գիշերից հետո: [...] Օ, եթե միայն կարելի լիներ, ինչպե՛ս կլողար դեպի արշալույս...»<sup>7</sup>:

Երկրորդ անցումը ներկայից ուղղվում է դեպի **անժամանակություն**, որը վայրկյան առ վայրկյան դառնում է ավելի իրական, քանի որ սպառվում են ինքնաթիռի վայրէջքի բոլոր հնարավորությունները: Եվ հեղինակն այս անցումը, այսինքն՝ հերոսի անցումը երկրային կյանքից դեպի հավիտենություն, պատկերում է գեղարվեստական վարպետությամբ:

Դանիացի փիլիսոփա Ս. Կիերկեգորը գտնում էր, որ մարդն անցողիկի ու հավերժականի համադրությունն է, բայց այն հավերժականի, որն ստեղծվում է մարդու մեջ որպես **կայացող հավերժություն** (ընդգծումը մերն է –Դ. Պ.)<sup>8</sup>: Ֆաբիենն այս դեպքում նման հոգեվիճակի կրողն է, որի կերպարի միջոցով էքզյուպերին «կայացնում է» հավերժի ներկայությունը. «Ֆաբիենը մտածում էր, որ հասել է դրախտի նախադռներին, որովհետև ամեն ինչ լուսավոր էր դարձել՝ ձեռքերը, զգեստները, օդանավի թևերը: Որովհետև լույսը աստղերից չէր իջնում,

---

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Տե՛ս **Haymova H. Փ.**, նշվ. աշխ., էջ 163:

այլ բխում էր ներքնում և իր շուրջը գտնվող այդ սպիտակ պաշարներից»<sup>9</sup>:

Երկինքը, այսպիսով, կտրում է հերոսին երկրային ժամանակից և նրա հոգում դեռ չմարած **ներքին ժամանակը միաձուլում երկնայինին՝ հավիտենությանը:**

### **3. Գիշերը հեղինակի ներքին ժամանակի հարացույցում**

Վիպակում էքզյուպերին պատահական չի ընտրել օրվա այս հատվածը: Գիշերը շարունակ ուղեկցում է օդաչուներին, և այդ համատեղ «ընկերակցության» մեջ ընդգծվում է ուշագրավ մի երևույթ. երկուսն էլ իրենց գործողություններում **խորհրդավոր են ու անկանխատեսելի:**

Գիշերվա պատկերը հեղինակի գեղարվեստական գյուտերից մեկն է: Նրա համար գիշերը կենդանի օրգանիզմ է՝ որոշակիորեն անձնավորված, որի շնորհիվ մեծանում է հերոսների գործողությունների, հոգեվիճակների և ընդհանրապես պատումի դրամատիզմը:

Փորձենք ավելի կոնկրետացնել:

**Նախ**, գեղարվեստական պատումի արժանիքներն ավելի են մեծանում, երբ կենդանի շունչ են ստանում նրա բոլոր բաղադրիչները՝ մարդիկ, երևույթներ, առարկաներ: Էքզյուպերիի վիպակում գիշերն ասվածի լավագույն վկայությունն է:

**Երկրորդ**, ինչպես անհատն է իր ներաշխարհում առաջնորդվում ներքին ժամանակով, այնպես էլ գիշերը՝ իբրև բնության կենդանի զավակ, իր մեջ բացում է նույն ժամանակի մի շարք կողմեր: Եվ վիպակի երկու հիմնական դերակատարներ-

---

<sup>9</sup> **Սենտ-Էքզյուպերի Ա. դը**, Գիշերային թռիչք, [https://lib.mskh.am/images-books/Gisherayin-trichq\\_Antoine-de-Saint-Exupry.pdf](https://lib.mskh.am/images-books/Gisherayin-trichq_Antoine-de-Saint-Exupry.pdf)

րի՝ Ֆաբիենի ու Ռիվիերի հետ նա դառնում է երրորդ առանցքային կողմը. «...Գիշերը արդեն նրան (Ռիվիերին - Դ. Պ.) էր հանձնում մի ինքնաթիռ, ինչպես գաղտնիքներով լի ծովը մակընթացությամբ և տեղատվությամբ փփին է հանձնում գանձը, որն այնքան երկար ժամանակ օրորել է»<sup>10</sup>:

**Երրորդ՝** գիշերվա անձնավորմամբ նոր շերտեր են ի հայտ գալիս երկնքի ու երկրի կամ այնտեղ ապրողների փոխառնչություններում: Հատկապես դժվարին պահերին գիշերը վճռորոշ դեր է խաղում հերոսների ճակատագրում՝ նրանց հիշեցնելով ներքին ժամանակի խորհրդավոր կապը երկնային ժամանակի հետ. «Եվ հիմա՝ ուշ գիշերվա այս ժամին, անքուն պահակի նման նա հայտնաբերում է, որ գիշերը բացահայտում է մարդուն, գիշերվա կոչերը, լույսերը, մտահոգությունները...»<sup>11</sup>:

**Չորրորդ՝** և՛ գիշերվա, և՛ Ֆաբիենի ու Ռիվիերի կերպարներում հիմնականում բացահայտվում են ներքին ժամանակը մարմնավորող մնայուն ներկան և այդ ժամանակից անդին գոյություն ունեցող հավերժությունը:

**Հինգերորդ՝** ինչպես գիշերը, այնպես էլ վիպակի յուրաքանչյուր հերոս հեղինակի գեղարվեստական ներաշխարհի կոնկրետ արտահայտություններից մեկն է: Նրանց միջոցով էքզյուպերին վարպետորեն պատկերում է իր ներքին ժամանակի տարբեր կողմերը և նրբությունները: Վիպակի վերջում դրանք միավորվում են՝ ստեղծելով հեղինակի՝ գեղարվեստական ժամանակով հազեցած հավաքական կենսագրություն:

---

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում:

Այս ամենը, ի վերջո, ընթերցողի մոտ ստեղծում է պատումի ամբողջական մի պատկեր, որի համապատկերում ձևավորվում է երկնային ու երկրային ժամանակներում ապրող մարդու գոյության անընդհատությունը:

**Այսպիսով՝** հեղինակի ներքին ժամանակը մարդու գոյությանն ուղեկցող հիմնարար չափումներից մեկն է, որի գիտակցումը և վերապրումն էականորեն նպաստում են կյանքի երկրային ու երկնային հատվածների խորքային իմաստավորմանը: Այդ ժամանակն իր ներքին սահմաններով ավելի ընդգրկուն է, քան գեղարվեստական ժամանակը, իսկ ստեղծագործության մեջ դրանց միահյուսումը հարստացնում է պատումի ժամանակային ռիթմը, վերջինիս տարածքում նոր հնարավորություններ բացում գրողի երևակայության, հերոսների, երևույթների բացահայտման համար: Ա. դը Սենտ-Էքզյուպերիի «Գիշերային թռիչք» վիպակը այդ առումով բնորոշ օրինակ է, որտեղ, հերոսներից բացի, առանցքային դերակատարություն ունեն երկու խորքային պատկերներ՝ երկինքը և գիշերը:

**Երկնքի** գեղարվեստական պատկերը ներքին ժամանակի համատեքստում ներկայացվում է կերպարների հոգեվիճակներին համահունչ, որոնցում առաջնային դեր կատարողը **մնայուն ներկան է:** Այդ ներկայի հոգեբանական արտահայտություններից մեկը հերոսի անհանգիստ հոգեվիճակն է, որը տևականություն է հաղորդում մնայուն ներկային: Վերջինիս առկայությամբ հերոսների մեջ նոր կողմերով բացահայտվում է երկնքի ու երկրի անմիջական կապը, որի շնորհիվ նախապատրաստվում է ժամանակային հաջորդ անցումը: Վիպակի դրամատիկ հատվածներում երկինքը կտրում է հերոսին ներկայից և միաձուլում նրա ներքին ժամանակը երկնային ժամանակին՝ **հավերժությանը:**

Գրողը նույնպիսի առանցքային դերակատարություն է վերապահում նաև **գիշերվան**, որն իր խորհրդավոր ու անկանխատեսելի ռիթմերով ընդլայնում է պատումի ներքին ժամանակի հնարավորությունները: Դժվարին պահերին գիշերը վճռորոշ դեր է խաղում հերոսների ճակատագրում: Ներքին ժամանակի ռիթմերին բնորոշ կենսատարրերով հեղինակը լուծում է մի կարևոր խնդիր. գիշերվա մեջ ի մի են բերվում հերոսների մտորումներն ու գործողությունները, և կերտվում է ներկայի ու հավերժության մեջ ապրող կերպարների հավաքական կենսագրություն:

Ա. դը Սենտ-Էքզյուպերիի «Գիշերային թռիչք» վիպակում երկնքի ու գիշերվա պատկերները հերոսների գործողությունների հետ ներքին ժամանակի տարածքում գեղագիտորեն իմաստավորում են երկնային ու երկրային ժամանակներում ապրող մարդու գոյության շարունակականությունը: Երկու հրապարակումներն էլ իրենց ընդհանուր և տարբերակիչ կողմերով ամբողջության մեջ ուշագրավ արժեքանական շերտեր են ի հայտ բերում մեղիատեքստի ներքին երկխոսության տարածքում:

2020 թ.

## ՀԵՂԻՆԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՂԻԱՏԵՔՍԵՐՈՒՄ (2018 Թ. ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՄ)

### Մուտք

Ուշագրավ մի բնութագրում կա. ժամանակը հոգու կյանքն է (Պլտոնին)<sup>1</sup>: Վերջինիս երկրային գոյության սահմաններում ժամանակը, իրոք, անգնահատելի դեր ունի: Եվ եթե այդպես է, ապա հոգու ապրումները անհատի համար կարող են ստեղծել նաև նրա **ներքին ժամանակը**:

Այս հասկացությունը, ինչպես նշվեց նախորդ հոդվածում, տեսական գրականության մեջ վաղուց հայտնվել է փիլիսոփաների, հոգեբանների, մշակութաբանների տեսադաշտում: Ներքին ժամանակի խորհմաստ ըմբռնումներ կան Սուրբ Ավգուստինոսի, Է. Կանտի, Է. Հուսերլի, Ա. Բերգսոնի, Մ. Հայդեգերի աշխատություններում<sup>2</sup>: Դրանցում ներքին ժամանակի ընկալումն ու մեկնությունները անմիջականորեն առնչվում են նաև հասարակության բազմաշերտ կառույցին՝ ելնելով այնտեղ տեղի ունեցող սոցիալ-քաղաքական, մշակութային իրադարձություններից և անհատի վրա նրանց ազդեցության ընդգրկումներից:

Մեղիան՝ իբրև հաղորդակցության ու տեղեկատվության առանցքային գործոն, գտնվում է այդ իրադարձությունների կենտրոնում, ուստի մեղիատեքստերում ներքին ժամանակի

---

<sup>1</sup> Տե՛ս **Плешков А. А.** О времени и вечности в философии Платона и Плотина, C:/Users/Comp/Downloads/o-vremeni-i-vechnosti-v-filosofii-platona-i-plotina.pdf

<sup>2</sup> Տե՛ս **Гуссерль Э.** Феноменология внутреннего сознания времени, в 2 т. М., «Гнозис», 1994, **Бергсон А.** Непосредственные данные сознания. Время и свобода воли, Л. Изд-во ЛКИ, 2010, **Хайдеггер М.** Бытие и время, Харьков, «Фол-ио», 2003 և այլք:

կերպավորումները մշտապես արդիական հնչեղություն ունեն:

Հողվածի նպատակն է ժամանակակից հայկական մեդիատեքստերի օրինակով ներկայացնել հեղինակի ներքին ժամանակի մի շարք դրսևորումներ՝ տեսադաշտում ունենալով 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ներքաղաքական զարգացումները, մասնավորապես Ապրիլյան հեղափոխությունը: Նկատի ունենալով նյութի լայն ընդգրկումը՝ կկենտրոնանանք հայաստանյան առցանց մամուլում տպագրված հրապարակախոսական հոդվածների վրա:

\* \* \*

Նախ՝ մի քանի խոսք Ապրիլյան հեղափոխության մասին:

2018 թ. մարտի 31-ին ընդդիմադիր քաղաքական գործիչ, պատգամավոր Նիկոլ Փաշինյանը Հայաստանի երկրորդ քաղաք Գյումրիից «Իմ քայլը» նախաձեռնության շրջանակներում համախոհների փոքր խմբով քայլարշավ սկսեց Հայաստանի նախագահ Մերժ Սարգսյանին սուպերվարչապետական պաշտոն առաջարկելու՝ Հանրապետական կուսակցության որոշման դեմ: Ապրիլի 13-ից 23-ը Երևանում սկսվեցին քաղաքացիական անհնազանդության գործողություններ, որոնք վերածվեցին համաժողովրդական հզոր շարժման, և որի ճնշման ներքո Ս. Սարգսյանը ապրիլի 23-ին հրաժարական տվեց:

Ներքաղաքական կյանքը Հայաստանում նոր ընթացք ստացավ: Այդ իրադարձություններին նվիրված հրապարակախոսական հոդվածներում հեղինակի ներքին ժամանակի առկայությունը կարևոր իրողություն է և ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստում է այդ հրապարակումներում առաջադրված խնդիրների լուծմանը:

Նշված ժամանակահատվածում (2018 թ. ապրիլ-մայիս) տպագրված շուրջ երեք տասնյակ հոդվածների ուսումնասիրությունը մեղիատեքստերում առկա ներքին ժամանակի կտրվածքով ուշագրավ դիտարկումների է հանգեցրել: Նախ՝ վերնագրերն արդեն իսկ հուշում են, թե հեղինակներն իրենց խորհրդածություններում ժամանակի որ հատվածին են նախապատվություն տալիս: Պատկերը մոտավորապես հետևյալն է. առավել աչքի են ընկնում ապագային, ավելի քիչ՝ անցյալին միտված վերնագրերը: Հոգեբանորեն այս մոտեցումն արդարացված է, քանի որ օրեր առաջ տեղի ունեցած հեղափոխության հանդեպ սպասելիքները շատ են. «Թավշյա հեղափոխություն. ինչպես է տեղի ունենալու իշխանության փոխանցման գործընթացը» (Ա. Մղդեայան), «Երբ է ժողովուրդը լավ ապրելու» (Բ. Թունյան), «Ամեն ինչ դեռ նոր է սկսվում. Թավշյա հեղափոխության սցենարները Հայաստանում» (Ա. Գալստյան): Հեղինակների վերլուծական հայացքը չէր կարող չըջվել նաև դեպի հետ՝ անցյալը. «11 օր, որ փոխեցին Հայաստանը» (Մ. Խաչատրյան), «Ինչպես Սերժ Սարգսյանը «կերտեց» հեղափոխությունը» (Դ. Մալխասյան) և այլն: Այս համատեքստում առավել ուշագրավ դրսևորումների կարելի է հանդիպել մեղիատեքստերի **ներքին տարածքում**:

### **1. Անցյալի իմաստավորումը հեղինակի ներքին ժամանակի համատեքստում**

Ժամանակային այս հատվածը մեղիատեքստերի բանական և հոգեբանական շերտերում շարունակ հիշեցնում է իրեն: Անցյալի իմաստավորման հարցում կարևոր դերակատարություն ունեն հիշողությունը և հետադարձ ակտիվ հայացքը՝ ներկայում տեղի ունեցող հեղափոխական իրադարձու-

թյունների քաղաքական, սոցիալական հիմքերն ու դրդապատճառները վեր հանելու համար: Հեղինակների սուբյեկտիվ անդրադարձներից առանձնացնենք մի քանիսը:

Հոդվածների մի մասում անցյալը երկատվում է՝ բաժանվելով **հեռավոր** և **մոտ** անցյալների: Դրանք թեն «ապրում են» հեղինակի ներքին ժամանակի նույն հարթության մեջ, բայց տարբեր գործառույթներ ունեն: Մասնավորապես հոդվածագիրներից մեկը (Ստ. Դանիելյան) մեջբերում է հեռավոր անցյալի իրավական փորձը (Անգլիա, 15-րդ դար, Հենրիխ Չորրորդ թագավորի ունեցվածքի իրավական կարգավորումը)<sup>3</sup> մեր օրերում իշխանական կառույցների իրավագիտակցության ցածր մակարդակը ցույց տալու համար. «Մերժ Սարգսյանը (նրան՝ որպես պաշտոնաթող նախագահի, հեղափոխությունից առաջ փորձում էին անհատույց տրամադրել կառավարության ենթակայության տակ գտնվող շենքերից մեկը-Դ. Պ.) փորձել է սեփականաշնորհել այն ունեցվածքը, որը պատկանում էր իրեն որպես «քաղաքական մարմին», այլ ոչ թե որպես «բնական մարմին»: Այսինքն՝ Հայաստանում այդ «մարմինների» տարանջատման մասին իրավական ու հանրային գիտակցությունը դեռևս սաղմնային վիճակում է»:<sup>3</sup>

Հեռու և մոտ անցյալները երբեմն փոխհարաբերվում են այս կամ այն **կոնկրետ իրադարձությանը** հեղինակի տված պատկերավոր բնորոշումներում: Խոսելով հեղափոխության պատճառով իշխանությունը կորցրած Հանրապետական կուսակցության մասին՝ հոդվածագիրը մտովի հասնում է մինչև...Հին Հռոմ. «Այս կուսակցությունը (Հանրապետական-

---

<sup>3</sup> **Դանիելյան Ստ.**, Նախագահի «երկու մարմինը» կամ այն, ինչը Մերժ Սարգսյանը չէր հասկացել, <https://hetq.am/hy/article/88677>

Դ. Պ.) պատրաստ է հրդեհի բաժին դարձնել Հայաստանը, ինչպես մ. թ. 64 թվականին դա արեց Ներոնը՝ այրելով Հռոմը, միայն թե չկորցնի իշխանական իր լծակները»<sup>4</sup>:

Մեղիատեքստերում անցյալի մարմնավորումը ոչ միայն կոնկրետ իրադարձություններն են, այլև **այն սերունդը**, որի օրոք գերիշխող են եղել «դոգմատիզմն ու կարծրատիպային մտածողությունը», «կաղապարված և վերահսկելի են հասարակական գիտակցությունը, [...] արդիականանալու ձգտումը»<sup>5</sup>: Այլ խոսքով՝ հեղինակի ներքին ժամանակը, ի դեմս անցյալի, իր սահմանների մեջ է ներառում և՛ **իրադարձութեական**, և՛ **արժեհամակարգային** չափումներ: Հոդվածների զգալի մասում անցած օրերի ու տարիների քաղաքական գնահատականները հիմնականում բացասական երանգներ ունեն, ինչը թերևս կարելի է բացատրել հեղափոխության կարևորությունն ընդգծելու ցանկությամբ:

Ներքին ժամանակի հնարավորությունների կիրառման ուշագրավ ձևերից մեկն էլ **անցյալն ապագայացնելու կամ ապագան անցյալացնելու** հնարանքն է, որն առանցքային է դառնում որոշ հեղինակների հոդվածներում: «Իդեալական հեղափոխությունը նույնպես գին ունի» խմբագրականն անդրադառնում է հեղափոխության ընթացքում առաջ եկած դժգոհություններին: Ըստ հեղինակի՝ այդպես էլ պետք է լիներ. ոչ բոլորն են գոհ հեղափոխության արդյունքներից: Եվ իր թեզը հիմնավորելու համար կիրառում է «եթե-ապա» կառույցով պայմանական նախադասության տարատեսակներ, որոնցում

---

<sup>4</sup> **Ավագյան Լ.**, Հանրապետականներ, մոտեցե՛ք էլքին..., <http://armtimes.com/hy/article/136438>.

<sup>5</sup> **Դեմիրճյան Մ.**, Թավշյա հեղափոխություն. հայկական տարբերակ, <http://theanalyticon.com/?p=10646>

առաջնայինը ենթադրություններն են: Անցյալը, որը սովորաբար առարկայանում է կատարված փաստերի վրա, այս դեպքում ապագայի հետ միասին հայտնվում է ենթադրությունների դաշտում, իսկ հետևությունները ձևավորվում են պատճառահետևանքային փաստարկումներով: Եթե հանրապետականների վրա հոգեբանական ճնշումներ չգործադրվեին (ֆիզիկական բռնություններ հեղափոխության ընթացքում չեն եղել), ապա հեղափոխությունը չէր հաղթի, եթե հակահեղափոխությունը հաղթեր, ապա «իշխանությունը ուղղակի ճնշելու էր իր քաղաքացիներին ոչ միայն հոգեբանորեն, այլև ֆիզիկապես՝ տանկերի թրթուրների տակ...»<sup>6</sup> և այլն: Մատուցման այս ձևը ներքին ժամանակի սահմաններն ընդլայնելու ինքնատիպ եղանակ է՝ մենախոսության երանգներով:

## 2. Ապագայի տեսլականը հեղափոխությունից հետո

Հեղափոխությանը նվիրված հրապարակումներում ապագան առաջնային տեղ է գրավում, և դա, ինչպես նշեցինք, նկատելի է նույնիսկ վերնագրերի մեջ: Իսկ ընդհանրապես հեղինակի ներքին ժամանակի տարածքում, ի տարբերություն անցյալի ու ներկայի, ապագայի **սահմաններն անորոշ են**: Նրան առավելապես հատկանշական են ոչ հստակ կանխատեսումները, թերահավատության ու լավատեսության բռնկումները, որոնք առկայծում են հեղինակի հոգեբանական ապրումների դաշտում (Հ. Ավետիքյան, Կարո<sup>ո</sup> դ ենք մտնել իսկական պառլամենտարիզմի դաշտ<sup>7</sup>, Ա. Գրիգորյան, Պետք է պատրաստ լի-

---

<sup>6</sup> «Բդեալական հեղափոխությունը նույնպես գին ունի», Խմբագրական, <http://armtimes.com/hy/article/136985>

<sup>7</sup> <https://azg.am/AM/2018050401>

ներք մի Հայաստանի, որի անցյալը ժառանգողը լինելու ենք մենք<sup>8</sup> և այլն):

Ապագայի պատկերը կենդանանում է հատկապես այն հողվածներում, երբ հեղինակները հայտնի գրական կերպարների օրինակով փորձում են հիմնավորել իրենց ասելիքի ճշմարտացիությունը ոչ միայն անցյալ ու ներկա, այլև գալիք ժամանակների համար. «Դոն Կիխոտը «Անասնաֆերմայի» մեջ ծնվող կերպար է,- գրում է Ա. Գրիգորյանը,-նույնիսկ եթե ոչ մեկը **դեռ** անասուն չէ: Եվ հազիվ թե **նկատվի** սարսափելին՝ Դոն Կիխոտ են այստեղ բոլորը, ոչ ոք ժամանակ չունի առանձնանալու, մեկուսանալու և իմաստավորելու, որ հեղափոխության չարքագրված մարտահրավերներից օր առաջ **պետք է ազատվել**»<sup>9</sup>(ընդգծ. մերն է-Դ. Պ.): Ընդգծված բառերը, որ ներքին ժամանակի իմաստային բաղադրիչներ են, հիմնավորում են հեղինակի՝ ապագային միտված մտահոգությունը:

Նշվածների հետ մեկտեղ կա հողվածների մի խումբ, որոնց հեղինակները, հրապարակախոսական մտորումներից զատ, հանդես են գալիս ուշագրավ **վերլուծություններով** և հեղափոխության վաղվա օրը մատնանշող **սցենարներով**<sup>10</sup>: Ապագան այս դեպքում հստակ ուրվագծումներ ունի. մեղիատեքստի ներքին ժամանակը կոնկրետանում է: Հիմնականում առաջադրվում են **մոտ ապագայի** խնդիրներ, քանի որ ընդ-

---

<sup>8</sup> [www.ilur.am/news/view/68267.html](http://www.ilur.am/news/view/68267.html).

<sup>9</sup> **Գրիգորյան Ա.**, Հեղափոխության դոնկիխոտները, <http://www.ilur.am/news-view/68338.html>.

<sup>10</sup> Տե՛ս **Զալբյան Ա.**, Ինչպես ամրապնդել հեղափոխության ժողովրդավարական նվաճումները, [https://mediamax.am/am/column/12849/?fb\\_comment\\_id=1925961424105136\\_1926460374055241](https://mediamax.am/am/column/12849/?fb_comment_id=1925961424105136_1926460374055241?fb_comment_id=1925961424105136_1926460374055241) **Գալստյան Ա.**, Ամեն ինչ դեռ նոր է սկսվում. թավջյա հեղափոխության սցենարները Հայաստանում, <http://www.ankakh.com/article/95583>

հանրապետ անկանխատեսելի է հեղափոխությանն առնչվող գալիք իրադարձությունների ընթացքը: «Եթե ցանկանում ենք խուսափել նախորդ հայկական հեղափոխության ճակատագրից<sup>11</sup> [...] և կառուցել կայուն ժողովրդավարությամբ ազատ, անվտանգ և բարեկեցիկ երկիր, արդեն այսօր պետք է սկսել իրականացնել բարեփոխումների մեծ փաթեթ»<sup>12</sup>, - գրում է Ա. Չալաբյանը և մատնանշում հիմնական ուղղությունները (սահմանադրական, ընտրական, դատաիրավական, սոցիալական, կրթական բարեփոխումներ):

### 3. Ներկան՝ անցյալի և ապագայի հանդիպակայր

Ներքին ժամանակի առանցքային գործոնը, ինչ խոսք, **ներկան է**, որի միջոցով շատ տեքստերում միավորվում են անցյալն ու ապագան: Ներկան ժամանակային տարբեր ռիթմեր է հաղորդում նրանց, ընդգծում կա՛մ անցյալի, կա՛մ էլ ապագայի կարևորությունը առաջադրված թեմայի համար: Մակայն վերջին հաշվով նրանք ածանցվում են ներկայի կարևորագույն իրողությունից: Հեղափոխության օրերին ներկայի ամփոփ, ընդհանրական պատկերը հողվածագիրներից մեկը ներկայացնում է Հայաստանի չորրորդ նախագահ Արմեն Մարգարյանի խոսքերով. «Հայաստանի պատմության մեջ ունենք այլևս նոր էջ: Մենք ապրում ենք Նոր Հայաստանում...»<sup>13</sup>:

---

<sup>11</sup> Ըստ երևույթին նկատի ունի 1988 թ. Հայաստանում տեղի ունեցած համազգային մեծ շարժումը:

<sup>12</sup> **Չալաբյան Ա.**, Ինչպես ամրապնդել հեղափոխության ժողովրդավարական նվաճումները [https://mediamax.am/am/column/12849/?fb\\_comment\\_id=192596-1424105136\\_1926460374055241?fb\\_comment\\_id=1925961424105136\\_1926460374055241](https://mediamax.am/am/column/12849/?fb_comment_id=192596-1424105136_1926460374055241?fb_comment_id=1925961424105136_1926460374055241).

<sup>13</sup> **Խաչատրյան Մ.**, 11 օր, որ փոխեցին Հայաստանը <https://azg.am/AM-201804703>.

Ներքին ժամանակի մեջ, անցյալի ու ապագայի «մասնակցությամբ» հանդերձ, հեղինակները գտնում են նաև ներկան պատկերելու ինքնատիպ միջոցներ, որոնցից առանձնացրել ենք մի քանիսը.

Ա) Մեղիատեքստերում **ներքին երկխոսությունների** առկայությունը: Ներքին երկխոսությունը, ինչպես նշել ենք մեր հոդվածներից մեկում, հեղինակին հնարավորություն է ընձեռում երկխոսելու իր հոգևոր տարածքում ապրող ներքին եսերի հետ, որոնց անունից հեղինակին տրվող հարցերը տեքստը դարձնում են առավել կենդանի ու շարժուն<sup>14</sup>: Եվ որ կարևոր է՝ դրանք գրվում են իբրև **ներկայում** ընթացող երկխոսություն: Ի դեպ, հոդվածների մի մասում այդ հարցերը դառնում են նաև վերնագրեր կամ ենթավերնագրեր, ինչը ենթադրում է դրանց հանգամանալից պատասխանը հեղինակի կողմից: Միննույն ժամանակ կան տեքստի ներսում առկա կարճ հարց ու պատասխաններ. «...Ու՞մ պետք է ծառայեն նրանք՝ երկրի՞ն, թե՞ մեկ անպիտան մարդու: Չե՞ որ պատիվ է ծառայել ժողովրդին, և խայտառակություն է ծառայել մեկ մարդու»<sup>15</sup>:

Բ) Ներքին ժամանակի տարածքում **մնայուն ներկայի** մարմնավորումը: Սա բնորոշ է առավելապես այն մեղիատեքստերին, որոնց հեղինակները, անդրադառնալով հեղափոխական ոգևորությանը, ընդհանրական հայացքով քննում են այդ իրադարձության գլխավոր կերտողի (սովյալ դեպքում՝ հանրույթի) հոգեբանության ու բնավորության մնայուն կողմերը: Այդ կողմերը, լավ կամ վատ, շարունակում են ուղեկցել

---

<sup>14</sup> Տե՛ս **Պետրոսյան Ռ.**, Պատում, մեղիատեքստ, հակառակ հեռանկար, Ե., 2017, էջ 99-110:

<sup>15</sup> **Գրիգորյան Ռ.** Թավշյա հեղափոխությունը և Սերժ Սարգսյանի ճակատագրական սխալը, <http://galatv.am/hy/news/227179/>

հանրույթին ինչպես հեղափոխությունից առաջ, այնպես էլ հեղափոխության ժամանակ և նրանից հետո՝ ապահովելով ներկայի մնայունությունը: Մասնավորապես Ա. Աթանեսյանի հոդվածում հանրույթի բացասական կողմերի վերլուծությունն է հրապարակախոսական ոճով և երզիճական շեշտադրումներով. «Եվս մեկ բարդույթ. յուրաքանչյուրս մեզ համար ինքնակոչ առաջնորդ ենք՝ նախագահ, քաղաքագետ, իմաստուն արքա, արդյունավետ բիզնեսմեն... [...]Չէ՞ որ յուրաքանչյուր հայ «ի ծնե տաղանդ է», այնպես որ ցանկացած հարցի մի քիչ ծանոթանալով՝ անգամ այդ հարցում կարող ենք հասնել աննախադեպ բարձունքների...»<sup>16</sup>:

Գ) Ներքին ժամանակը բնութագրող **բառ-բաղադրիչների սովորությունը**՝ այժմ, հիմա, տվյալ պահին, ներկայումս, առայժմ և այլն, որոնք, ներկայի գոյությունը հիշեցնելով հանդերձ, կարևոր դեր են խաղում մեղիատեքստի ներսում մտքի դադարները կամ անցումներն ապահովելու համար. «**Հիմա** ոչ ոք չգիտի, թե ինչ է տեղի ունենում զանազան իշխանավորների և բողոքավորների առանձնասենյակներում»<sup>17</sup>, «...**Այժմ** կա երկու ճանապարհ՝ իրավական ու քաղաքական, ու դրանք քայլերի ճիշտ հերթականության դեպքում կարող են համալրել իրար»<sup>18</sup> և այլն:

Նեղինակի ներքին ժամանակի ներկա, անցյալ և ապագա հասովածները, այսպիսով, ինչպես առանձնաբար, այնպես էլ մի-

---

<sup>16</sup> **Աթանեսյան Ա.**, Բարդութափոխության անհրաժեշտության մասին, <http://theanalyticon.com/?p=10643>

<sup>17</sup> **Գալստյան Ա.**, Ամեն ինչ դեռ նոր է սկսվում. թավշյա հեղափոխության սցենարները Հայաստանում <http://www.ankakh.com/article/95583>

<sup>18</sup> **Մդրեայան Ա.**, Թավշյա հեղափոխություն. ինչպես է տեղի ունենալու իշխանության փոխանցման գործընթացը, <http://www.armtimes.com/hy/article/136152>

մյանց փոխլրացնելով, իմաստավորում են մեղիատեքստերի ներքին տարածքում հեղինակի մտքի որոնումներն ու հոգեբանական մղումները: Դրանով իսկ նրանք զգալիորեն մեծացնում են տեքստի հաղորդակցական հնարավորությունները:

**Այսպիսով՝** «ներքին ժամանակ» և «մեղիա» հասկացությունները մնայուն իրողություններ են, քանի որ մշտապես հանդես են գալիս իբրև ժամանակի և հաղորդակցության կարևոր բաղադրիչներ:

Այս համատեքստում հետաքրքիր էր դիտարկել հեղինակի ներքին ժամանակի կերպափոխումները հայկական մեղիատեքստերում կոնկրետ ժամանակահատվածի (2018 թ. ապրիլ-մայիս) օրինակով: Անցյալի, ապագայի ու ներկայի հանդեպ հայ հոգվածագիրների մոտեցումները ի հայտ են բերում հետևյալ ընդհանուր պատկերը:

Հեղինակի ներքին ժամանակը, ի դեմս **անցյալի**, ներառում է և՛ իրադարձութենական, և՛ արժեհամակարգային չափումներ՝ քաղաքական գնահատականներում բացասական երանգներով: **Ապագայի** տեսլականը հստակ չէ. կան թերահավատության և լավատեսական շեշտադրումներ, որոնք հիմնականում միահյուսված են հեղինակի հոգեբանական ապրումների հետ: Այս երկու ժամանակային հատվածներն ի վերջո ածանցվում են **ներկայի** կարևորագույն իրողությունից, որը ինքնատիպ մատուցումներով (ներքին երկկոսություն, մնայուն ներկա, իմաստային բառ-բաղադրիչներ և այլն) ամբողջացնում է հեղինակի ներքին ժամանակի առանձնահատուկ նշանակությունը հայկական մեղիատեքստերում:

2019 թ.

# ՆԵՐՔԻՆ ԵՐԿԻՍՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՄԱԿԻ ԵՎ ԷՍՍԵԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

## Մուտք

Ժամանակակից մեդիատեքստը իր հնարավորություններով մեծապես ընդլայնել է հաղորդակցության սահմանները: Նրան տրվող բազմաթիվ բնութագրումների մեջ առավել տիպական է տեսաբանների հետևյալ մոտեցումը. մեդիատեքստը ոչ միայն լեզվաբանական, այլև մշակութաբանական երևույթ է, քանի որ մարդկային գործունեության հոգևոր ազդակների և նյութական ոլորտի մասին տեղեկատվություն ստանալու աղբյուր է ծառայում և բնութագրվում է իր բազմաչափությամբ. «Այն համադրում է բառային, տեսալսողական և մյուս բաղադրիչները պատումի միասնական տարածության մեջ»<sup>1</sup>:

Նամակը և էսսեն՝ որպես գրական, լրագրողական ժանրեր, մեդիատեքստի տարատեսակներ են: Մասնավորապես նամակը լրագրողական ժանր է դառնում այն դեպքում, երբ նրանում առաջադրված հարցերը ոչ թե անձնական, այլ հասարակական հետաքրքրություն են առաջացնում և ուղղված են զանգվածային լսարանին: Նրան բնորոշ հատկանիշներից կարելի է առանձնացնել անմիջական հաղորդակցությունն ընթերցողի հետ՝ վերջինիս հետաքրքրությունն արթնացնելու և ակտիվ գործողությունների մղելու համար<sup>2</sup>:

---

<sup>1</sup> **Стеценко Н. М.**, О соотношении понятий текст-медиа́текст-медиа́дискурс, «Ученые записки Таврического национального университета им.В.И. Вернадского», Серия «Филология. Социальные коммуникации». Том 24(63), 2011, №4, часть.2, с. 373-374.

<sup>2</sup> Տե՛ս **Тертычный А. А.**, Жанры периодической печати, <http://evartist.narod.ru/text2/05.htm>

Էսսեին տրված բնութագրումները նույնպես նպատակ ունեն բացահայտելու այս ժանրի հիմնական կողմերը: Դրանք, ըստ տեսաբանների, «միավորում են հեղինակի ընդգծված անհատական դիրքորոշումը անկաշկանդ, հաճախ պարադոքսալ շարադրանքի հետ»<sup>3</sup>: Այլ խոսքով՝ հեղինակն ազատորեն արտահայտում է իր մտքերն ու տպավորությունները առաջադրված թեմայի և նրանից բխող իմաստային զարգացումների շուրջ, որոնք նաև չեն հավակնում «առարկայի վերջնական կամ սպառիչ մեկնաբանության»<sup>4</sup>:

Հոդվածի նպատակն է նամակի և էսսեի համատեքստում վեր հանել ներքին երկխոսության մի շարք դրսևորումներ հեղինակ-ներքին հասցեատեր/հասցեատերեր դիսկուրսում:

\*\*\*

Մենք փորձել ենք խնդիրը դիտարկել magaghat.am և azg.am («Ազգ-Մշակույթ») կայքերում հրապարակված նյութերի օրինակով:

Magaghat.am համացանցային կայքը հիմնադրվել է ռեժիսոր Արման Հովհաննիսյանի նախաձեռնությամբ 2013 թվականին: Բաժիններն ու խորագրերն ընդգրկում են մշակույթի և արվեստի տարբեր ոլորտներ: Վերջին շրջանում առավել ակտիվ է կայքի ֆեյսբուքյան էջը<sup>5</sup>:

«Ազգ» թերթի մշակութային հավելվածը՝ «Ազգ-Մշակույթ» (գլխավոր խմբագիր՝ Հակոբ Ավետիսյան), հրատարակվում է 2006 թվականից տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:

---

<sup>3</sup> Эссе-что такое, как писать, сочинение эссе, примеры, <http://pnu.edu.ru/ru/recruitment/graduates/essay>

<sup>4</sup> Там же.

<sup>5</sup> <https://www.facebook.com/search/top?q=magaghat.am>

Դիրքորոշումը հստակ է. «...հավատարիմ մնալ ազգային արքետիպերից սնվող կայուն ավանդույթներին՝ միաժամանակ տեսադաշտում պահելով համամարդկային արժեք ունեցող մշակութային գործերը»<sup>6</sup>:

Նախ՝ անդրադառնանք հեղինակ-ներքին հասցեատեր փոխառնչություններին: Մեղիատեքստն ունի<sup>7</sup> արդյոք իր մեջ ներքին երկխոսություն, և ինչպես է այն դրսևորվում:

### 1. Ներքին երկխոսությունը մեղիատեքստում

Երկխոսության արժեքանական շերտերը հետաքրքիր դրսևորումներ են ստանում հատկապես այն դեպքերում, երբ խնդիրը դիտարկում ենք մշակութային ժամանակի տարածքում: Այստեղ մշակութային երկխոսությունները հաճախ ձեռքազատվում են ներկա, անցյալ, ապագա պայմանական բաժանումներից՝ ի հայտ բերելով մի շարք տարատեսակներ, մանավանդ որ մշակույթը « [...]անցյալ, ներկա և ապագա մշակույթները կրող մարդկանց համաժամանակյա կեցության և հաղորդակցության ձև է: Մշակույթը մշակույթ է դառնում միայն տարբեր մշակույթների այս համաժամանակյա հաղորդակցության մեջ<sup>7</sup>»: Մեզ տվյալ դեպքում հետաքրքրում է ներքին երկխոսությունը, որն ուզում ենք քննել Ս. Բախտինի նշած «մեծ ժամանակի» կամ Ֆ. Բրոդելի «երկար տևողության» չափույթում<sup>8</sup>:

---

<sup>6</sup> Պետրոսյան Դ. Վ., Պատում, մեղիատեքստ, հակառակ հեռանկար, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 123-124:

<sup>7</sup> «Диалог культур»//Новая философская энциклопедия, <http://iph.ras.ru/elib/-0958.html>

<sup>8</sup> Տե՛ս Բախтин Մ. Մ., Ответ на вопрос редакции “Нового мира” // Бахтин М. М., Собрание сочинений. Т. 6. М.: 2002, с. 454-457, Ստեփանյան Ա., Մարգարյան Ե.,

Նախ՝ ի՞նչ նկատի ունենք ներքին երկխոսություն ասելով: Այս խնդրին անդրադարձել ենք նաև մեր հոդվածներից մեկում<sup>9</sup>:

Գեղարվեստական տեքստում (վեպ, վիպակ, պատմվածք), ինչպես հայտնի է, հերոսներն աստիճանաբար հեռանում են հեղինակից և ապրում իրենց ինքնուրույն կյանքով: Մեղիատեքստերում թեև լրագրող հեղինակի սուբյեկտիվիզմն ակնհայտ է, այնուհանդերձ նրա ստեղծագործական եսը նույնպես ներքնապես տրոհվում է: Այս տրոհումը առաջ է բերում հնարավոր «գրուցակիցների» խումբ, որոնք, նախապես լինելով լրագրողի մտքում ու գաղափարներում, այնուհետև տեղափոխվում են նրա կողմից ստեղծվող տեքստային միջավայր և հասանելի դառնում արտաքին հասցեատիրոջը՝ ընթերցողին: Հնարավոր գրուցակիցները հեղինակից արտածված ներքին հասցեատերերն են, որոնք ստեղծում են նաև ներքին լսարան: Այլ խոսքով՝ հեղինակը՝ «մինչև արտաքին հասցեատիրոջ հետ երկխոսության մեջ մտնելը սեփական խաղընթացի կանոններով ստեղծում է ներքին երկխոսային հարաբերություններ<sup>10</sup>», որտեղ մի կողմում ինքն է, մյուս կողմում՝ իր դիմակը (կամ դիմակները) այլ հերոսների տեսքով, որոնց անվանում ենք ներքին հասցեատեր կամ հասցեատերեր: Սրանք էլ իրենց հերթին ստեղծում են այն ներքին լսարանը, որի տարածքում ընթանում է ներքին երկխոսությունը:

---

Ժամանակի կառույցը Ֆ. Բրոդելի պատմահայեցողության ծիրում, «Պատմություն և կրթություն», Եր., 2005, N1-2, էջ 33-42:

<sup>9</sup> Տե՛ս **Պետրոսյան Դ. Վ.**, Պատում, մեղիատեքստ, հակառակ հեռանկար, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 99-110:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 103:

Նյութը շարադրելիս լրագրողը նախապատրաստվում է դրան, և ներքին հասցեատերը նրա մեջ սկսում է ուրվագծվել հենց այս փուլում: Փաստերի, իրադարձությունների նկարագրության, ինչպես նաև սեփական խոհերի, դատողությունների հոսքում այդ հասցեատերը «հայտնվում է» ժամանակ առ ժամանակ և «հիշեցնում» իր մասին: Նյութի շարադրանքը ինքնանպատակ չէ. ընթանում է հեղինակի ներքին երկվության և հոգեբանական այլ խնդիրների առկայության պայմաններում: Այս իրավիճակներում ներքին հասցեատիրոջ ներկայությունը դառնում է անհրաժեշտություն, քանի որ հնարավորություն է տալիս հեղինակին երկխոսությամբ **հաղթահարելու հոգեբանական երկվությունը** և ավելի պարզ ու հասկանալի դարձնելու սեփական դատողությունների ընթացքը:

Այդ երկխոսությունը կարող է ընթանալ հեղինակին հարցեր տալով, հակադրվելով կամ համաձայնելով նրա հետ: Ուստի մեկ անգամ ևս շեշտենք. ներքին հասցեատերը դառնում է տեքստի մեջ **հեղինակի դիմակը** (կամ դիմակները, եթե ներքին հասցեատեր-գրուցակիցները շատ են), որի ներկայությունը զգալիորեն մեծացնում է հեղինակի հնարավորությունները. մասնավորապես՝ կառուցակազմում է ներտեքստային միջավայրը, ամրացնում ներքին կառույցը և հնարավորինս կանխագծում այն հարցերի շրջանակը, որ հետագայում կարող է տալ արտաքին հասցեատերը:

Շեղինակն այդ երկխոսայնությունը ստեղծում է՝ կիրառելով մի դեպքում՝ հռետորական, մյուս դեպքում՝ դիալեկտիկական հնարանքներ: Հռետորականությունը համոզիչ ու հետաքրքիր է դարձնում տեքստի մատուցման ձևերը (ներքին երկխոսություններ հարց ու պատասխանի ձևով, պարզապես հարցեր, որոնք անուղղակի պատասխաններ են ենթադրում և

այլն): Դիալեկտիկականն առնչվում է հեղինակի մտքի զարգացման ընթացքին: Նրա ներսում առկա իմաստային շերտերը (խորհրդածություն, տեսակետ, մոտեցում), բախվելով իրար, առավել նպատակային են դարձնում հեղինակի ասելիքը<sup>11</sup>:

Այսպիսով՝ ներքին հասցեատերը հեղինակի հոգեբանական **այլացումն է՝ հարցասեր, ընդդիմադիր կամ համախոհ**, որը, գրույթի տարածքում ուղեկցելով հեղինակին, օգնում է նրա դատողությունների ընթացքը հանգեցնելու տրամաբանական ավարտի: Մեկ այլ ձևակերպմամբ՝ ներքին հասցեատերը նաև արտաքին լսարանի **ներքին** մանրակերտն է, որի խաղարկումով տեքստը դառնում է **հեղինակ-լրագրողի** և **հեղինակ-լսարանի** յուրօրինակ հանդիպավայր և նախապատրաստում է հեղինակի հանդիպումը արտաքին լսարանի հետ:

Ներքին երկխոսության հաճախ կարելի է հանդիպել գեղարվեստական-հրապարակախոսական տեքստերում, այդ թվում՝ նամակի և էսսեի ժանրերում:

## 2. Ներքին երկխոսությունը նամակում

Magaghat.am-ում տպագրված Չ. Չապլինի նամակը վաղուց հայտնի է ընթերցող հանրությանը: Մեծ դերասանն այստեղ բացահայտվում է որպես կյանքի ընկալման բարձր արժեքներով ապրող մտավորական, որին հուզում են ոչ միայն սեփական դստեր, այլև մարդկության վաղվա օրը<sup>12</sup>: Չապլինի

---

<sup>11</sup> Տե՛ս **Волков А. А.**, Виды риторических аргументов, [genhis.philol.msu.ru/vidy-ritoricheskix-argumentov/](http://genhis.philol.msu.ru/vidy-ritoricheskix-argumentov/)

<sup>12</sup> Հետաքրքիր է, որ իր հարցազրույցներից մեկում Ջերալդինա Չապլինը կասկածի տակ է դնում հոր կողմից գրված նամակի հավաստիությունը. «Իրականում նման բան չի եղել. ինչ- որ մեկն է հորինել: Ես նույնպես այդ

մտորումները, ներաշխարհային տագնապները հետաքրքիր շերտեր կարող են բացել նաև խնդիրը հոգեբանության, գրականագիտության դիտանկյուններով քննելիս, ինչը տվյալ դեպքում դուրս է մեր հետազոտության շրջանակներից:

Թվում է, թե նամակի դեպքում դրա կարիքը չպիտի զգացվեր, քանի որ հեղինակն ունի կոնկրետ արտաքին հասցեատեր կամ հասցեատերեր: Բայց այս պարագայում ևս ներքին երկխոսությունն առկա է:

Նամակն սկսվում է արտաքին հասցեատիրոջն ուղղված խոսքերով /«**Դատրիկս**, հիմա գիշեր է: Ծննդյան գիշեր...»<sup>13</sup> (ընդգծ. մերն է-Դ. Պ.), բայց հեղինակի ինքնախոստովանանքն աստիճանաբար սկսում է ուրվագծել ներքին հասցեատերերին: Նախ՝ արտաքին հասցեատեր Ջերալդինայի հետ մեկտեղ բացվում է ներքին հասցեատեր Ջերալդինայի կերպարը. «[...]թող կուրանան աչքերս, թե քո պատկերը, թեկուզ մի ակնթարթ, հեռանում է աչքիս առաջից: Նա այնտեղ է՝ **իմ սեղանին** («արտաքին» Ջերալդինա), այստեղ՝ **սրտիս մեջ**» («ներքին» Ջերալդինա)<sup>14</sup> (ընդգծ. մերն են - Դ. Պ.): Վերջինս ակտիվ է տեսքատում, քանի որ նրա կերպարը հյուսվում է հեղինակի զգացմունքների, հիշողությունների ու ցանկությունների հենքի վրա: («Ներքին» Ջերալդինան հեղինակի երկրորդ ես-ն է, որին

---

նամակը տեսել եմ թերթում, բայց այդ ամենը կեղծ է»,-ասել է Ջերալդինա Չապլինը: Նրա կարծիքով՝ հայրը դժվար թե նման նամակ գրած լիներ: «Սովորաբար հայրս խորհուրդներ տալիս էր իր օրինակով», <https://www.westi.ru/doc.html?id=497916> Անկախ այս խոսքերից Չապլինին վերագրվող նամակը, հրապարակվելով մամուլում և դառնալով մեղիատեքստ, դարձել է էպիստոլյար ժանրի լավագույն օրինակներից մեկը:

<sup>13</sup> Письмо Чарли Чаплина к дочери Джеральдине, <http://www.magaghat.am/2014/04/>

<sup>14</sup> Նույն տեղում:

նա առանձնացնում է տեքստում ժամանակ առ ժամանակ տրվող հարցերի օգնությամբ. «Չարլի, մի թե այս փիսիկը կճանաչի քեզ երբևէ»<sup>15</sup>:

«Ներքին» Ջերալդինայի կերպարն ամբողջականացնելու կարևոր հնարանքներից մեկը նրա շուրթերով հեղինակի ցանկությունն արտահայտելն է. «Ձննիբ մարդկանց, նայիբ այրիներին ու որբերին և գոնե օրը մեկ անգամ ասա ինքդ քեզ. «**Ես այնպիսին եմ, ինչպիսին նրանք են**»<sup>16</sup> (ընդգծ. մերն է):

Հեղինակն, ինչ խոսք, չի բավարարվում միայն «ներքին» Ջերալդինայի կերպարով: Ներքին երկխոսության շրջանակներն ընդլայնելով՝ նամակում նա ստեղծում է նաև իր մյուս ես-ին՝ թափառական ծաղրածուին, որ «ստորացնող մորմոքով» հակադրվում է արտաքին աշխարհին: Ծաղրածուի «[...]կրծքի տակ փոթորկվում էր հպարտության մի ամբողջ օվկիանոս, և այդ հպարտությունը մեռցնում էին նետած դրամները...»<sup>17</sup>:

Նամակում որոշակի դերակատարություն է վերապահված նաև ներքին լսարանին՝ տաքսու վարորդ, կրկեսի լարախաղացներ, Փարիզի արվարձանների պարուհիներ, այրիներ ու որբեր և այլք, որոնք թեն որպես ներքին հասցեատերեր պասսիվ են, բայց իրենց ներկայությամբ իմաստային նուրբ երանգներ են հաղորդում հեղինակի մտահղացմանն ու ասելիքին:

Հեղինակային այլաձևության այս դրսևորումները, հատկապես ինքը՝ Չապլինը, թափառական ծաղրածուն, «ներքին» Ջերալդինան, հաջողությամբ զարգացնում և ավարտին են

---

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում:

հասցնում հեղինակի ապրումների դրամատիկ ընթացքը: Եվ մենք ականատեսն ենք դառնում Չապլինի դստեր ներքին ու արտաքին կերպարների միաձուլման հետաքրքիր ավարտի. «Ես պիտի **մեռնեմ**, բայց դու պիտի **ապրես**» (ընդգծ. մերն են - Դ. Պ.),- գրում է հայրը Ջերալդինային: Մեփական ես-ի «մահվամբ» հեղինակը կատարում է վերջին քայլը՝ մեկ ամբողջական կերպարի մեջ միավորելով «ներքին» ու «արտաքին» Ջերալդինաներին և անուղղակիորեն ընդգծելով ներքին երկխոսության կարևորությունը նամակի ժանրում:

### **3. Ներքին երկխոսությունը էսսեում**

«Ազգ-Մշակույթի» հրապարակումներից ընտրել ենք Կարպիս Սուրենյանի(1925-2011 թթ.) «Չէ, օ, Տոլստոյ, չէ» էսսեն: Նա վերջին տարիների մեր լավագույն էսսեիստներից էր, հմուտ թարգմանիչ, բազմակողմանիորեն զարգացած մտավորական<sup>18</sup>:

Էսսեում ավելի, քան նամակում, հեղինակը լայն հնարավորություններ ունի տեքստի ներսում ներքին երկխոսություն ծավալելու: Սուրենյանի էսսեն դրա հետաքրքիր դրսևորումներից մեկն է: Հայ մտավորականը «անմիջական» բանավեճի մեջ է մտնում Լ. Տոլստոյի հետ, թեև նրա էսսեն հրապարակվել է 21-րդ դարասկզբին: Սուրենյանը չի ընդունում համաշխարհային արվեստի մի շարք ներկայացուցիչների (Շեքսպիր, հույն ողբերգակներ, Միքելանջելո, Բախ, Բեթհովեն, Բրամս, Վագներ և ուրիշներ) ստեղծագործությունների վերաբերյալ Տոլստոյի կարծիքները: Նա դիմում է ռուս գրողին «դու»-ով,

---

<sup>18</sup> Տե՛ս **Սուրենյան Կարպիս Հովհաննեսի**, [http://www.armenianlanguage.am/-am/Encyclopedia-surenyan\\_karpis](http://www.armenianlanguage.am/-am/Encyclopedia-surenyan_karpis)

մեջբերում մտքեր նրա հողվածներից, կրոնական ուսմունքից, սեփական փաստարկումներով աշխատում հերքել նրա սուրբյեկտիվ մոտեցումները:

Էսսեում մտքերի դիսկուրսը ծավալվում է պատմական ժամանակի տարածքում, որտեղ տարբեր երկրների ու տարբեր դարերի արվեստագետներ մշակութային երկխոսության են հրավիրվում: Տոլստոյից բացի՝ Մուրենյանն այդ երկխոսության մասնակիցներ է դարձնում նախ՝ Շեքսպիրին, հետո նաև՝ Բեթհովենին, Բրամսին, Դոստոևսկուն:

Առաջին իսկ էջերից երկխոսությունը վերածվում է բանավեճի, քանի որ ուղղակի մեջբերումներ կատարելով Տոլստոյի մտքերից՝ Մուրենյանը մերժում է դրանք սեփական փաստարկումներով: Այդ ընթացքում նա երբեմն ուղղակիորեն դիմում է Տոլստոյին՝ տեքստում կենդանի ու անմիջական երկխոսություն-բանավեճ ստեղծելու նպատակադրումով. «Դու առանց այլևայլի հայտարարում ես, որ...», «Չեմ հավատում քեզ...», «Չէ, բոլորովին էլ այդպես չէ, օ, Տոլստոյ, որքան էլ հարգում եմ քեզ...»<sup>19</sup> և այլն:

Էսսսեում ներկայացված քննադատ Տոլստոյը, որը հեղինակային ես-ից արտածված սուրբյեկտ է, ներքին երկխոսության տարածքում հանդես է գալիս որպես նրա առանցքային գրական հակառակորդ: Ռուս գրողից բացի՝ Մուրենյանը ստեղծում է նաև մի քանի ակտիվ ես-եր(ներքին հասցեատերեր), որոնք ընդդիմանում են Տոլստոյի գաղափարներին: Դրանցից մեկը հեղինակի պատանեկան ես-ն է, որի հուզական ընկալումների մաքրությանն ապավինելով՝ Մուրենյանը փորձում է առավել համոզիչ դարձնել ասելիքը. «Արդ, բացա-

---

<sup>19</sup> **Մուրենյան Կ.**, Չէ, օ, Տոլստոյ, չէ, «Ազգ-Մշակույթ», 14.07.2007, N 14:

տրիք ինձ, քարոզիչ Տոլստոյ, ինչպե՞ս եղավ, որ [...] քո այս բու-  
լոր ասածներից տառ անգամ անտեղյակ այդ տղան, որ ինքս  
էի, մի օր հանկարծ այնպես հուզվեց, երբ ձայնապնակից լսեց  
իր ականջին անսովոր մի երաժշտություն... [...] Այո, հենց այն  
Բրամսը, որի անունն էլ արհամարհանքով նշում ես՝ թվարկե-  
լով ուրիշ մեծ կոմպոզիտորների անունների հետ՝ Վագներ,  
Բերլիոզ, Լիստ՝ նույն արհամարհանքով «նմանակող» կոչելով  
բոլորին էլ...»<sup>20</sup>:

Էսսեում ուշագրավ դերակատարություն ունի ռուս մեկ  
այլ խոշորագույն գրող՝ Ֆ. Դոստոևսկին: Նա հեղինակին հա-  
մախոհ ներքին ես-երից մեկն է, որ, ի տարբերություն Տոլս-  
տոյի, խորին հարգանքով է արտահայտվում Շեքսպիրի մա-  
սին, և որի խոսքերը սիրով մեջբերում է Սուրենյանը. «Շեքս-  
պիրը մարգարե է՝ Աստծո կողմից ուղարկված,-գրում էր Դոս-  
տոևսկին,- որպեսզի հաղորդի մեզ գաղտնիքը մարդու մասին,  
մարդկային հոգու մասին»<sup>21</sup>:

Էսսեում Սուրենյանը կիրառել է մի ուշագրավ հնարանք  
ևս. իր և Տոլստոյի երկխոսության ողջ ընթացքում նրանց բա-  
նավեճին ասես «հետևում է» **ներքին լսարանը**, որտեղ «նստած  
են», Շեքսպիրից բացի, Տոլստոյի կողմից քննադատված մյուս  
արվեստագետները ևս՝ նշանավոր գրողներ, երաժիշտներ:  
Էսսեի երկրորդ էջում մեջբերված այդ անունների ներկայու-  
թյունն ասես ուժ է հաղորդում հեղինակին՝ համարձակորեն  
դիմագրավելու նրանց հասցեին ռուս գրողի հնչեցրած քննա-  
դատությունները:

---

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Նույն տեղում:

Ներքին երկխոսության տարածքում, այսպիսով, հայտնվում են հեղինակը և իր ստեղծած ներքին հասցեատերերը, որոնք իրենց տարբեր հարցադրումներով, «քարոզիչ Տոլստոյի» հանդեպ ընդդիմադիր կեցվածքով, հեղինակի մոտեցումները խրախուսող համախոհությամբ ամբողջացնում են տեքստը և նախապատրաստում նրա մուտքը արտաքին աշխարհ, արտաքին լսարան: Այս երկխոսայնությունը, թատերայնացնելով տեքստը, նկատելի աշխուժություն է հաղորդում էսսեին՝ ժամանակի կարճ տևողության մեջ ներառելով երկար տևողության մեջ ապրող մշակութային մնայուն արժեքները:

#### **4. Ընդհանրություններ և տարբերություններ**

Փորձենք ներքին երկխոսության համատեքստում համեմատական քննությամբ վեր հանել հիշյալ հրապարակումների ընդհանրություններն ու տարբերությունները:

#### **Ընդհանուր կողմերը**

1. Երկու ստեղծագործություններում էլ հեղինակներն ապրում են արվեստը, մշակույթը մարդկությանը ծառայեցնելու, կյանքի ու արվեստի միջև հոգևոր ներդաշնակություն ստեղծելու գաղափարներով:

2. Ե՛վ Չապլինի նամակում, և՛ Սուրենյանի էսսեում հեղինակներն ի հայտ են բերում ներքին հասցեատերեր, որոնք նրանց «alter ego»-ներն են ներքին երկխոսության մեջ:

3. Ներքին հասցեատերերի մեջ երկու հեղինակներն էլ ստեղծել են ակտիվությամբ հատկապես աչքի ընկնող երկրորդ ես. Չապլինի նամակում՝ «ներքին» Ջերալդինան, Սուրենյանի էսսեում՝ իր պատանեկան կերպարը: Նրանց ներկայությունը նպաստում է հեղինակների գեղագիտական

ըմբռնումները ներքին լսարանի առաջ մեկ անգամ ևս փորձարկելու և նախապատրաստելու դրանց ճանապարհը դեպի արտաքին լսարան:

4. Երկու ստեղծագործություններում էլ ներքին երկխոսությունն ուղեկցվում է ներքին լսարանի ներկայությամբ, որոնք ակտիվացնում են հեղինակների խոհերի, մտորումների ընթացքը:

### **Տարբերությունները**

1. Չապլինի նամակում երկխոսությունն ընթանում է «արվեստից դեպի կյանք» ուղղությամբ, ինչը հեղինակին հնարավորություն է տալիս իմաստավորելու իր ապրած կյանքի փորձառությունը:

Սուրենյանը մղվում է «արվեստից դեպի արվեստ»՝ մտավորական լսարանի մասնակցությամբ:

2. Չապլինի մոտ ժամանակային առումով երկխոսության վեկտորն ուղղված է անցյալից դեպի ապագա:

Սուրենյանի էսսեում երկխոսությունն ընթանում է հետադարձ ճանապարհով՝ ներկայից դեպի անցյալ, որի ընթացքում հեղինակի հայացքը վերակենդանացնում է նաև անցյալի լսարանը:

3. Չապլինի նամակում հեղինակի և իր ես-ի փոխհարաբերություններում գերիշխում է համախոհությունը: Սուրենյանի էսսեում ներքին երկխոսությունը ծավալվում է տարբեր հայացքների բախման հենքի վրա, որոշ դեպքերում այդ երկխոսությունը վերաճում է բանավեճի:

Ներքին երկխոսության մեջ առկա այս երկխոսայնությունը, որ ի հայտ է գալիս հեղինակ-ներքին հասցեատեր-ներքին լսարան հարթակում, դառնում է այն շարժիչ ուժը, որ այնու-

հետև պիտի վերածվի հեղինակից և տեքստից դուրս երկխոսայնության, այս անգամ արդեն մեկ այլ համատեքստում, այն է՝ հեղինակ-արտաքին հասցեատեր-արտաքին լսարան:

### **Ամփոփենք:**

Մեղիատեքստերում առկա ներքին երկխոսությունը իր արժեքանական կողմերով ուսումնասիրվել է նամակի և էսսեի ժանրերի օրինակով: Այդ երկխոսությունը սկիզբ է առնում հեղինակից, որի ես-ը տեքստում տրոհվում է՝ առաջ բերելով ներքին հասցեատերեր: Ըստ այդմ ստեղծվում է յուրօրինակ թատերական միջավայր, որտեղ մինչև արտաքին ընթերցողի հետ հաղորդակցվելը նախապես փորձարկվում է հեղինակային սցենարը՝ իր և ներքին հասցեատերերի ու նրանցից կազմված լսարանի երկխոսային հարաբերություններով:

Չապլինի նամակում, հեղինակից և աղջկա կերպարից բացի, իբրև ներքին լսարան ուրվագծվում են մտավորական և ոչ մտավորական հանրությունները: Մուրենյանի մոտ առաջին պլանում մտավորական լսարանն է, և երկխոսային խաղարկումները հիմնականում ընթանում են այս միջավայրում: Երկու տեքստերում առկա ներքին երկխոսություններին առանձնակի երանգ է հաղորդում ժամանակի գործոնը: Չապլինի զրույցը աղջկա միջոցով ապագայի հետ է, Մուրենյանի երկխոսությունը, ի դեմս Տոլստոյի, անցյալի :

Երկու հրապարակումներն էլ իրենց ընդհանուր և տարբերակիչ կողմերով ամբողջության մեջ ուշագրավ արժեքանական շերտեր են ի հայտ բերում մեղիատեքստի ներքին երկխոսության տարածքում:

2019 թ.

# ՀԱՅ ԱՐՎԵՍՏ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ. ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ

## Մուտք

Տեղեկատվական տեխնոլոգիաները էապես ազդել և ազդում են հասարակության, նրա ինստիտուտների գործունեության ու կառուցվածքի վրա: Այս տեղաշարժերից անմասն չեն նաև մշակութային գործընթացները, որոնց ներսում ընթացող փոխակերպումները երբեմն աննկատ, երբեմն ակնհայտորեն նոր երանգներ են հաղորդում հանրային մշակութային արժե-համակարգին<sup>1</sup>:

Հոդվածի նպատակը վիրտուալ տարածքում, ավելի կոնկրետ՝ հայաստանյան մշակութային կայքերում հայ արվեստի նորօրյա փոխակերպումների ուսումնասիրությունն է, դրանց հիմնական միտումների վերհանումը: Մեր տեսադաշտում են եղել մի շարք մշակութային կայքեր<sup>2</sup>, որոնց հետազոտությունը հնարավորություն է տալիս նկատելու այդ փոխակերպումները:

---

<sup>1</sup> Տե՛ս **Մանովիչ Լ.**, Язык новых медиа, М. Ад маргинем пресс, 2018, 400 с., **Րաի Մ.** Новые медиа в искусстве, <https://knizhnik.org/majkl-rash/novye-media-v-iskusstve> **Սանդանով Ա. Գ.** Культура не находится в кризисе; она сама – постоянный кризис, <https://inosmi.ru/world/20160222/209379533.html> **Կոպալկինա Թ. Գ., Լученко К. В., Новикова А. А., Санданов А. Б., Шерстобоева Е. А.**, Культура в интернете. Интернет-культура, <https://publications.hse.ru/chapters/61232264> և այլք:

<sup>2</sup> Տե՛ս մասնավորապես «Azg.am» էլեկտրոնային կայքի «Ազգ-Մշակույթ» հավելվածը, Բուն.TV անցանց հեռուստաընկերությունը, magaghat.am, cultural.am, granish.am, gallery.am, naregatsi.am և այլ կայքեր:

## 1. Հայ արվեստը գլոբալացման համատեքստում

Արվեստում տեղի ունեցող վիզուալ(տեսողական) փոխակերպումները 20-րդ դարում հանգեցրին «էկրանային մշակույթի» (կինո, հեռուստատեսություն) ստեղծմանը: Վերջինիս բերած փոփոխությունների մեջ կարևորներից մեկը արվեստի արժեհամակարգում **մշակութային երկխոսության** ընդլայնումն էր: Այդ երկխոսությունը համացանցի շնորհիվ բուռն զարգացում ապրեց 21-րդ դարասկզբին<sup>3</sup>:

«Համացանց» և «գլոբալացում» եզրույթները մեր օրերում հաճախ են քննարկվում նույն հարթության մեջ: Նշվում են մտահոգություններ, որ հայ արվեստը գլոբալացման ու համացանցի ազդեցությամբ կորցրել է դիմադրողականությունը, մեղիադաշտն առավելապես նպաստում է զանգվածային արվեստի տարածմանը, ապագային տարրերի առատությունն արդեն իսկ վտանգ է ներկայացնում և այլն: «Կար ժամանակգրում է «Ազգ-Մշակույթի» թղթակիցը,- որ մեր գրականությունն ու արվեստը տառապում էին դրականության հիվանդությամբ. հերոսները, ունենալով մանր կենցաղային ու վարքագծային թերություններ, հիմնականում մարքսիզմի անմնացորդ նվիրյալներ էին:...[...]Հիմա մենք ընկել ենք հակառակ ծայրահեղության մեջ՝ իշխում է բացասականը: Առաջ հակադրումը նվազ դրականի և խիստ դրականի միջև էր, հիմա՝ նվազ

---

<sup>3</sup> Տե՛ս **Липатова М. Е., Богатырева А. А.**, Актуализация межкультурного диалога в современном интернет-пространстве, «Вестник РУДН», 2016, том 16, N 1, с. 72-84. **Дорошук Е. С.**, Социальные медиа как инструмент диалога культур, <https://cyberleninka.ru/article/n/sotsialnye-media-kak-instrument-dialoga-kultur>

բացասականի և խիստ բացասականի միջև: Երկու դեպքում էլ տուժում են էսթետիկայի օրենքները»<sup>4</sup>:

Մտահոգությունները լուրջ են. այս փոխակերպումներին դիմակայելը քիչ թե շատ հնարավոր է պետականորեն մշակված գաղափարախոսական համակարգի առկայության դեպքում: Նման համակարգ, ցավոք, մենք չունենք, և մեր հույսն առայժմ ազգային գենոֆոնդում դեռևս գործուն դեր ունեցող արքետիպերի կայունությունն է:

Սրա հետ մեկտեղ առկա է փոխակերպման մեկ այլ ուղղություն, որը համացանցի դարաշրջանում կարելի է ձևակերպել որպես **ազգային արվեստի գլոբալացման միտում**: Երևույթը նկատելի է նաև հայկական վիրտուալ տարածության մեջ, որի վկայությունը հայաստանյան մշակութային կայքերն են: Մասնավորապես՝

ա) Այդ կայքերը ներկայանում են **առնվազն երեք լեզուներով**<sup>5</sup>, նաև սոցցանցերի միջոցով՝ ունենալով ընթերցողական մեծ լսարանի հնարավորություն:

բ) Հայաստանում նույն օրը տեղի ունեցող մշակութային իրադարձությունները վայրկյաններ անց հասնում են **մոլորակի տարբեր ծայրերում** ապրող մեր հայրենակիցներին, նաև հայ մշակույթով ու արվեստով հետաքրքրվող օտարազգիներին:

գ) Նույն առաքելությունն իրականացնում են **սփյուռքահայ մշակութային կայքերը**, որոնք օտար միջավայրում տարբեր լե-

---

<sup>4</sup> **Համբարյան Ռ.**, Մերիալի կոճակը սեղմելիս..., «Ազգ-Մշակույթ», 11.08.2008, թիվ 21:

<sup>5</sup> «Azg.am» էլեկտրոնային կայքը սկզբնական շրջանում ընթերցողներին ներկայանում էր վեց լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն:

գուներով հայ մշակույթի, արվեստի անցյալն ու ներկան ներկայացնելու հստակ նպատակադրում և դերակատարություն ունեն:

դ) Զգալիորեն մեծացել են ազգային մշակույթի արժեքահավասարակարգը ներկայացնող բրենդների քարոզչության հնարավորությունները, որոնց ճիշտ ուղղորդված մատուցումը նպաստում է պետության հեղինակության բարձրացմանը:

Վերոնշյալ իրողությունները ազգայինի գլոբալացման համատեքստում հուշում են կարևոր մի գաղափար. թերևս կարելի է ստեղծել հետազոտական մի կենտրոն, որի անդամները կգրադվեն Հայաստանում և Միջուրքում գործող տպագիր և առցանց պարբերականներում առաջադրված գաղափարների հավաքագրմամբ և «Ազգային գաղափարների համահայկական բանկ» ստեղծելու նպատակային գործունեությամբ:

Գլոբալացման համատեքստում հայ արվեստի ներսում գործող այս վեկտորները, կարծում ենք, դեռ կշարունակեն ընթանալ կողք կողքի՝ իրենց վրա կրելով տեղեկատվական դարաշրջանին բնորոշ նոր մարտահրավերների ազդեցությունը:

## **2. Փոխակերպումներ հայ արվեստ-լսարան փոխառնչություններում**

Հայ իրականության մեջ մինչհամացանցային շրջանին նախորդել են խորհրդային տարիները և 1990-ական թվականները: Խորհրդային տարիներին գերիշխողը արվեստի գաղափարականացված տեսակն էր՝ կրավորական լսարանի առկայությամբ: 90-ականներին՝ Հայաստանի անկախացումից հետո, ապագա գաղափարականացումն ընթացավ երկու հիմնական ուղղությամբ՝ անցյալի արժեքների վերարժևորում և հայ արվեստում մտքի ու հոգու ազատության ստեղծագործական

կերպավորում: Այն շարունակվեց նաև 21-րդ դարասկզբին, բայց արդեն համացանցի տիրույթում: Մշակութային կայքերը արվեստ-լսարան փոխառնչություններում ի հայտ բերին նոր փոխակերպումներ: Հետազոտողներն առավել հաճախ մատնանշում են հեղինակ-ընթերցող ակտիվ շփումներն ու ընթերցողների մեկնաբանությունները կայքերում, հիպերտեքստային մոտեցման առանձնահատկությունները, լսարանի հաստատվածությունը, կոնվերգենտ մեդիան<sup>6</sup> և այլն: Սրանք, ինչ խոսք, բնորոշ են նաև հայաստանյան կայքերին: Այժմ՝ ավելի կոնկրետ:

Կցանկանայինք կանգ առնել ուշագրավ մի իրողության վրա: 20-րդ դարի 60-80-ական թվականներին Երևանում գործող որոշ սրճարաններում հավաքվում էր հայ մտավորականության ընտրանին: Զրույցներն ընթանում էին արվեստի բարձր արժեքների շուրջ, իսկ երկխոսությունների ընթացքում ձևավորվում էր հայ մտավորականության նոր տեսակը:

Մեր օրերում այս երկխոսությունները տեղափոխվել են վիրտուալ հարթություն: Արվեստագետին ու լսարանին միավորելու հետաքրքիր հարթակներ են դարձել «Ազգ-Մշակույթ», «Մագադաթ», «Գրանիշ» կայքերը, «Բուն.TV» առցանց հեռուստաընկերությունը և այլն: Սրանք էապես ընդլայնել են երկխոսության տարատեսակները: «Սրճարանային երկխոսություններում» խոսակցություններն ընթանում էին հիմնականում բարձր արվեստի շուրջ: Մերօրյա կայքերի թեմատիկան, նյութի ընդգրկման ու մատուցման ձևերը անհամեմատ լայն են, որոշ դեպքերում՝ մակերեսային ու պարզունակ, քննարկում-

---

<sup>6</sup> St'u Пастухов А. Г., О границах медиа: новые медиа и новая медийная культура. «Ученые записки Орловского государственного университета», N1(64), 2015, с. 182-188.

ներն ընթանում են ինտերակտիվ հաղորդակցությամբ, տարաբնույթ «comment»-ներով և այլն: Այս համատեքստում առանձնանում է մասնավորապես «Բուն TV» առցանց հեռուստաընկերությունը, որն իր կրթական-մշակութաբանական լայն ընդգրկումով (հումանիտար գիտություններից մինչև բնագիտական ուղղություններ) թարմ խոսք է հայաստանյան երկխոսային մշակույթի մեջ<sup>7</sup>:

Տեսաբանների մատնանշած ընթերցողական լսարանի հատվածայնության դրսևորումներ են այն կայքերը, որոնց ինչ-որ առումով կարելի է համարել տպագիր մասնագիտացված պարբերականների փոխարինողներ առցանց հարթակում: Համացանցում նմանատիպ մասնագիտական հարթակներ են Հայաստանի թանգարանների, պատկերասրահների, ինչպես նաև Ա. Մպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային թատրոնի, Գ. Սունդուկյանի անվան, Երևանի կամերային թատրոնի և այլ կայքեր: Մրանք լավագույն հնարավորություններ են՝ առնչվելու մշակույթի ու արվեստի գանձերին, որոնցից շատերը կոնվերգենտ մեդիայի միջոցով ներկայանում են ոչ միայն վերբալ(բառային), այլև տեսողական և տեսալսողական տարբերակներով: Թանգարանային կայքերը, օրինակ, հնարավորություն են տալիս վիրտուալ այցելությունների միջոցով ծանոթանալու ցուցանմուշներին: Իհարկե, վերջիններիս քանակը սահմանափակ է, քանի որ հիմնականում հետաքրքրություն առաջացնելու նպատակ են հետապնդում<sup>8</sup>: Բայց երե-

---

<sup>7</sup> Տե՛ս <https://boon.am/>

<sup>8</sup> Վիրտուալ հաճախորդն իրեն պատկերացնում է թանգարանի ներսում, «քայլում է այնտեղ», տեղեկություններ ստանում ցուցանմուշների ու պահվող իրերի մասին: Տեղեկատվությունը, որ սահմանափակ է, կարող է մղել նրան հետազայում անձամբ այցելելու թանգարան: Տե՛ս, օրինակ, Ա. Մպեն-

վույթն արդեն իսկ նորարարական է և խոսում է արվեստի մատուցման նոր հնարավորությունների ու փոխակերպումների մասին: Եվ այս հնարավորությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, օրեցօր ավելի են ընդլայնվում:

Նոր փոխակերպումների արդյունքում ձևավորվում է արդյոք հայ արվեստագետի, մտավորականի նոր տեսակը: Անշուշտ: 20-րդ դարավերջին ստեղծագործած և մեր օրերում համացանցի անմիջական ներգործությամբ ապրող արվեստագետների երկու սերունդների միջև տարբերություններն ակնհայտ են թե՛ բովանդակային, այսինքն՝ հոգեմտավոր արժեքների ընկալման ու վերարտադրության, և թե՛ տեխնոլոգիական նոր գործիքների կիրառման առումով: Մասնավորապես՝

1. Նախորդ սերնդի ստեղծագործական ինքնասևեռումը արվեստի մակարդակում ստեղծում էր մի հարթակ, որտեղ առաջնայինը **մենախոսությունն էր** լսարանի առաջ: Ավելացնենք՝ կրավորական և մեծաթիվ լսարանի առաջ:

Նոր սերնդի արվեստագետի ինքնասևեռումը վերածվում է **համասևեռումի**, քանի որ համացանցով ակտիվացած հիպերտեքստային հարացույցը լսարանին շատ դեպքերում ներգրավում է նույնիսկ ստեղծագործական ակտի մեջ, և այդ կրավորական լսարանը անհատականացվում է ու դառնում սակավաթիվ, հատվածային:

2. Նախորդ սերնդի արվեստագետների համար ստեղծագործության գնահատման չափանիշը **բարձր արվեստն** էր, և

---

դիարյանի տուն-թանգարանի կայքի «Վիրտուալ շրջայց» բաժինը, [http://www.spendiaryanmuseum.am/htmls\\_arm/virtual\\_tour.html](http://www.spendiaryanmuseum.am/htmls_arm/virtual_tour.html)

հոգեմտավոր ընկալման ազդակները հիմնականում միտվում էին դեպի այդ նշանակետը:

Նոր սերնդին մատուցվող բարձր արվեստի գործերը համացանցային հարթակում հաճախ միախառնվում են զանգվածային արվեստի ստեղծագործությունների հետ, ինչի հետևանքով անկում է ապրում ոչ միայն արվեստագետի, այլև լսարանի **գեղարվեստական ճաշակը**:

3. Համացանցի գոյությունը 21-րդ դարասկզբին, մշակութային այլ իրողությունների հետ մեկտեղ, ընդլայնեց նաև արվեստի գործառնության շրջանակները: Համացանցից դուրս և ներս տեղի ունեցող գործընթացները, պայմանավորված մեդիայի ակտիվացող դերով, առաջ բերին թվային աշխարհում երեվույթների ընկալման գեղագիտական նոր ձև՝ **մեդիաարվեստը**:

### **3. Մեդիաարվեստ. նոր խնդիրներ**

Տեսաբանների բնորոշմամբ՝ նոր մեդիաարվեստը եկել է համալրելու արվեստի տեսակների շարքը: Այս ոլորտում ստեղծագործողները կիրառում են նոր մեդիատեխնոլոգիաներ, մասնավորապես՝ թվային արվեստ, համակարգչային գրաֆիկա, վիրտուալ, համացանցային, ինտերակտիվ արվեստներ, համակարգչային ռոբոտատեխնիկա, 3D տպագրություն և այլն<sup>9</sup>: Թվարկումն արդեն վկայում է այն բազմաժանրության մասին, որ իր ներսում ունի մեդիաարվեստը:

Լինելով նոր ուղղություն՝ մեդիաարվեստը կայացման ընթացքի մեջ է և ինքնաներկայացման, սեփական դիմագիծը հստակեցնելու առումով դեռևս ճանապարհ ունի անցնելու:

---

<sup>9</sup> Տե՛ս <https://ru.wikipedia.org/wiki/>

Այս համատեքստում կարող ենք խոսել հայկական մեդիաարվեստի և նրա գոյության չափորոշիչների մասին: Հարցին պատասխանելու համար թերևս հետաքրքիր է մեջբերել մեդիամշակույթի հայ տեսաբան Հ. Բայադյանի տեսակետը հայաստանյան մեդիադաշտում ընթացող մշակութային տեղաշարժերի մասին. «Թվում է, թե այսօր Հայաստանում տեղեկատվամիջոցները, ավանդական թե նոր, մտել են մի նոր փուլ՝ ձեռք բերելով այնպիսի սոցիալական ու մշակութային նշանակություն, որ նախկինում երբեք չեն ունեցել: Միննույն ժամանակ պետք է ընդգծել, որ մեդիայի այս նոր իրադրությունն առայժմ հեղհեղուկ է, իսկ զարգացման հեռանկարը՝ անորոշ»<sup>10</sup>: Հոդվածը գրվել է 2004 թվականին: Անցած 16 տարիներին փոփոխություններ, իհարկե, եղել են մեդիամշակույթի և մասնավորապես մեդիաարվեստի բնագավառում: Հետաքրքիր է, որ 2014 թվականին Հայաստանի կառավարության որոշմամբ «Մեդիաարվեստ» առարկան ներառվել է ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկում<sup>11</sup>: Այլ խոսքով՝ հետաքրքրությունը մեդիաարվեստի հանդեպ մտել է նաև բուհական կրթության ոլորտ:

Այնուհանդերձ, հայկական մեդիաարվեստին նվիրված ուսումնասիրությունները շատ քիչ են: Մեր որոնումները հիմնականում արդյունք չտվին, եթե չհաշվենք տեղեկատվական բնույթի մի քանի հրապարակումներ համացանցում: Այնինչ

---

<sup>10</sup> Հր. Բայադյան, Մեդիա և մշակույթ, <https://hetq.am/hy/article/8099>

<sup>11</sup> «Ցանկ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների, Հավելված ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման», [http://www.dipacademy.am/u\\_files/file/](http://www.dipacademy.am/u_files/file/)

վերջին 20 տարում հայ իրականության մեջ այս ուղղությամբ ստեղծված արվեստի գործերը, կարծում ենք, արժանի են ավելի մեծ ուշադրության և մասնագիտական համարժեք գնահատականի:

### **Ամփոփենք:**

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում հայ արվեստի զարգացման ներսում ընթացող փոխակերպումները համահունչ են մշակույթի գլոբալացման ներկա գործընթացներին: Այդ փոխակերպումների մեջ, իբրև կարևոր իրողություն, հարկ է առանձնացնել ազգային արվեստի գլոբալացման միտումը, որը հնարավորություններ է ընձեռում համացանցի միջոցով առավել ներկայանալի դառնալ աշխարհի տարբեր անկյուններում:

Փոխակերպման հաջորդ կարևոր միտումը հայ արվեստ-լսարան փոխառնչություններում մշակութային երկխոսության ընդլայնումն է ոչ միայն բառային, այլև տեսողական և տեսալսողական հարթակներում: Հին և նոր սերնդի արվեստագետների գործունեության համեմատական քննությունը բացահայտում է տեխնոլոգիական առումով ձեռքբերումներ, իսկ բովանդակային-արժեհամակարգային հարթության մեջ՝ նաև կորուստներ:

Մրանց հետ մեկտեղ մեղիադրություն ի հայտ եկած արվեստի նոր տեսակը՝ մեղիաարվեստը, իր ուղղություններով և բազմաժանրությամբ շարունակում է ինքնակայացման ուղին, ինչը պարտավորեցնում է հայ արվեստի տեսաբաններին լուրջ և խորքային հետազոտություններով ճշտել վերջինիս տեղը հայ արվեստի մերօրյա զարգացումների համապատկերում:

2020 թ.

# ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՌԱՍՊԵԼՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԵԴԻԱԽՈՍՈՒՅԹՈՒՄ

## Մուտք

Ճանապարհի ֆիզիկական պատկերը մարդու ներքին հայացքի և մտածողության մեջ հնուց անտի ձեռք է բերել հոգևոր չափումների հատկանիշներ: Դեռևս բանավոր մտքի դարաշրջանում այն դիտարկվում էր առասպելի (միֆի) ծիրում և ըստ այդմ նկարագրվում-մեկնաբանվում էր միֆական հայեցակարգին բնորոշ առանձնահատկություններով: Այդ իսկ պատճառով ճանապարհի միֆական մշակույթը ներկայացնելիս տեսաբանները նախ և առաջ մատնանշում են նրա սրբազնացված կարգավիճակը, որ թույլ է տալիս միավորելու կեցության տարբեր մակարդակները՝ «մշակութայինն ու բնականը, երկրայինն ու երկնայինը, սոցիալականն ու անհատականը, լուսավորն ու ստվերայինը»<sup>1</sup>:

Ճանապարհի միֆական ընկալման շատ տարրեր հետազայում ներառվեցին նաև գրության տարածք: Նրա հոգևոր ընկալման սահմաններն ընդլայնվեցին՝ դառնալով գրավոր մշակույթի և արվեստի առանցքային բաղադրիչներ: Ճանապարհի գեղագիտական մեկնաբանման մի շարք կողմեր առանձնակի ուշադրության են արժանացել գեղարվեստական դիսկուսումն՝ գրողի ստեղծագործական որոնումների, պատումի և սյուժեի առանձնահատկությունների, կերպարակերտման ինդիքների վերլուծություններում<sup>2</sup>: Ռուսական գեղագիտա-

---

<sup>1</sup> **Карабанова В. А.**, Хронотоп дороги/пути в хоррор-культуре, «Вестник Новгородского государственного университета», 2015, N 87, ч. 1, с.104.

<sup>2</sup> Տե՛ս **Осипова Н. О.**, Мифологема пути в художественном пространстве «Петербургских повестей» Гоголя, <http://domgogolya.ru/science/research>

կան միտքը այս ոլորտում ակտիվացավ հատկապես Մ. Բախտինի առաջադրած «քրոնոտոպ» եզրույթի և վերջինիս իմաստաբանական մեկնաբանություններից հետո<sup>3</sup>:

Արդի մեդիախոսություն (ոչ միայն հայաստանյան) ճանապարհի իմաստավորմանը նվիրված հետազոտությունների թերևս հազվադեպ կարելի է հանդիպել: Հռոլվածը նպատակ ունի հայաստանյան լրատվամիջոցներում առկա մշակութային ու քաղաքական հրապարակումների վերլուծության հիմքի վրա ներկայացնել ճանապարհի իմաստավորման մի շարք կողմեր, որոնք կարևոր դեր ունեն մեդիատեքստի առերևույթ չնկատվող շերտերը վերհանելու և լսարանի հետ հաղորդակցման իմաստային դաշտը առավել ամբողջական դարձնելու գործում: Մինչ այդ համառոտ անդրադառնանք միֆական ընկալման մեջ ճանապարհի իմաստավորմանը նվիրված տեսական մոտեցումներին:

### 1. **Ճանապարհի առասպելություն**

Առասպելություն (միֆոլոգեման)՝ որպես եզրույթ, ներկայացնում է առասպելական սյուժեների, կերպարների **ընդհանրական, մնայուն պատկերը** և իր տարատեսակ դրսևորումներով լայնորեն կիրառվում է համաշխարհային մշակույթում:

---

ches/1470/, **Млечко А. В.**, Семантика мифологеми пути в художественном дискурсе журнала «Современные записки» (1920–1940). «Вестник Волгоградского государственного университета», сер. 2, «Языкознание», 2008, №2(8), с. 6-12, **Корзун А. Ю.**, Мотив пути в романе В. Набокова «Подвиг», [https://elib.bsui.by/bitstream/123456789/93913/1/63-67%202\\_67.pdf](https://elib.bsui.by/bitstream/123456789/93913/1/63-67%202_67.pdf) և այլք:

<sup>3</sup> Տե՛ս **Бахтин М. М.**, Литературно-критические статьи. М., «Художественная литература», 1986, **Сботова С. В.**, **Пац М. В.**, Осмысление феномена пути в русской гуманитаристике XIX-XX вв. (В.О. Ключевский, Н.А. Бердяев, М.М. Бахтин), «Известия Пензенского государственного педагогического университета имени В. Г. Белинского, Гуманитарные науки», № 27, 2012, с. 58-61.

Տեսաբաններն օգտագործում են նաև «միֆոլոգիական արքետիպ» եզրույթը<sup>4</sup>:

Ճանապարհի առասպելային մարդու պատկերացումները դարեր շարունակ հարստացրել է մետաֆորիկ ընկալումներով, որոնք ամբողջության մեջ ի մի են բերում այդ ճանապարհի գեղագիտական ըմբռնման շատ կողմեր: Կեցության տարբեր շերտերը միավորող սրբազնացված պատկերից բացի, ինչի մասին արդեն նշեցինք, միֆական պատումներում բյուրեղացել են նաև հետևյալ ընդհանրական հատկանիշները (ընդգծենք միայն նրանք, որոնք «կուղղորդեն» մեզ՝ բացահայտելու մեղիատեքստում ճանապարհի իմաստավորման առանձնահատուկ գծերը).

Ա) Ճանապարհի առասպելայինում մարմնավորվում են **շարժման, գործողությունների** սկիզբը, ընթացքը և ավարտը: Միջին հատվածում ծառանում են դժվարություններ, որոնք հաղթահարելով՝ հերոսը ճանապարհի ավարտին իրավունք է ստանում հասու լինելու սրբազան արժեքների էությանը<sup>5</sup>:

Բ) Ճանապարհ և ժամանակ. ճանապարհի՝ որպես **տարածության** առարկայական պատկերի և **ժամանակի** համատեղ գոյության բնութագիրը լավագույնս տրված է Մ. Բախտինի «**քրոնոտոպ**» եզրույթում, ի դեմս որի հեղինակը բացահայտում է պատումի մեջ նրանց փոխներթափանցման և միմյանց լրացնելու իրողությունը. «Ժամանակն այստեղ խտանում է, կարծրանում, դառնում է գեղարվեստորեն ավելի հասուն: Տարածությունն իր հերթին լարվում է, ներգրավվում ժամանակի,

---

<sup>4</sup> Տե՛ս «Мифологема-это...», <https://www.textologia.ru/slovari/literaturovedcheskie-terminy/mifologema/?q=458&n=348>:

<sup>5</sup> Տե՛ս «Мифы народов мира, Энциклопедия», Изд. «Советская энциклопедия», М. 1980, с. 842:

սյուժեի, պատմության շարժման մեջ: Ժամանակի նշանները բացվում են տարածության մեջ, և տարածությունն իմաստավորվում ու չափվում է ժամանակով<sup>6</sup>»:

Գ) Միֆական պատումներում առանձնակի կարևորություն է ձեռք բերում ճանապարհներից մեկի ընտրությունը: Վերջինիս նախորդում է **խաչմերուկում** ճիշտ որոշում կայացնելու անհրաժեշտությունը: Դրանով իսկ խաչմերուկը մարմնավորվում է որպես շրջադարձային պահ հերոսի կյանքում, նաև՝ կանգառ կամ հանգրվան, որից հետո իրադարձությունները կարող են այլ զարգացումներ ունենալ:

Դ) Ուշագրավ են հերոսների ճանապարհային **հանդիպումները, երկխոսությունները**: Սրանք մի դեպքում բացահայտում են համախոհների պահվածքը, մյուս դեպքում՝ այլախոհների տարաձայնություններն ու կոնֆլիկտները. երկուսն էլ ճանապարհային մշակույթի անքակտելի բաղադրիչներից են<sup>7</sup>:

Ե) Ճանապարհի միֆական ընկալումներում ակնհայտ է երկու՝ **հորիզոնական և ուղղահայաց հարթությունների** առկայությունը: Հորիզոնականի դեպքում հերոսների փոխհարաբերությունները նկարագրվում են ռեալ իրականության տիրույթում, իսկ ուղղահայաց հարթությունը հուշում է, որ Հոգին ճանապարհորդում է դեպի վեր՝ սրբազնացված աշխարհ, որին հասնելու դժվարությունները հաղթահարում են ոչ բոլորը<sup>8</sup>:

---

<sup>6</sup> **Бахтин М. М.**, *Формы времени и хронотопа в романе. Очерки по исторической поэтике*, <http://philologos.narod.ru/bakhtin/hronotop/hronmain.html>

<sup>7</sup> Տե՛ս **Осипова Н. О.**, *Мифологема пути в художественном пространстве «Петербургских повестей» Гоголя* <http://domgogolya.ru/science/researches/1470/>

<sup>8</sup> Տե՛ս «Мифы народов мира, Энциклопедия», Изд. «Советская энциклопедия», М. 1980, с. 842: Տե՛ս նաև **Осипова Н. О.**, *Мифологема пути в художественном*

Չ) Հիշյալ երկու հարթություններից գատ, նույնքան ուշագրավ է նաև Հոգու ճամփորդությունը դեպի **սեփական գիտակցություն, սեփական Եսի աշխարհ**: Հեղինակը կամ հերոսը բացահայտում են **ներքին ճանապարհի** նոր հորիզոններ: Միֆական աշխարհի նկարագրություններն այս դեպքում դրվում են մի կողմ, առաջին պլան է մղվում գեղարվեստական ստեղծագործությունը, որն անհատականանում և խորքային տարածքներ է ի հայտ բերում հեղինակի անհատականության շնորհիվ<sup>9</sup>:

Է) Ճանապարհի առասպելույթի բնութագրական գծերից մեկն էլ նրա մետաֆորիկ պատկերավորումն է: Այս համատեքստում հետաքրքիր կլինի դիտարկել **ճանապարհը՝ իբրև տեքստ**, որն ունի իր սկիզբը, ընթացքն ու ավարտը, զարգացման տրամաբանությունը, դատողությունների համադրման ու հակադրման, նրանց ներքին թատերայնացման շրջանակները և ընդհանրապես՝ հոգեմտավոր ճանապարհին բնորոշ այլատրիբուտներ:

Հիշյալ մոտեցումները համարժեք գուգահեռներ կարող են ի հայտ բերել նաև **մեղիատեքստի** իմաստաբանական տարածքը քննության առնելիս:

## 2. **Ճանապարհի իմաստավորումը մշակութային հրապարակումներում**

Ճանապարհի առասպելույթի այս համատեքստում ներկայացնենք մշակութային և քաղաքական հրապարակումներ

---

пространстве «Петербургских повестей» Гоголя, <http://domgogolya.ru/science/-researches/1470/>

<sup>9</sup> **Млечко А. В.** Семантика мифологемы пути в художественном дискурсе журнала «Современные записки» (1920–1940. «Вестник Волгоградского государственного университета», сер. 2, «Языкознание», 2008, №2(8), с. 9.

րում լրագրող հեղինակների ստեղծագործական մոտեցման բնութագրական կողմերից մի քանիսը: Նշենք, որ հայաստանյան մի շարք հայտնի կայքերից (aravot.am, azg.am, lragir.am, hetq.am, arteria.am, qahana.am և այլն) առանձնացրել ենք շուրջ երեսուն հրապարակում (15-ը՝ մշակութային, 15-ը՝ քաղաքական), որոնցում ճանապարհի արքետիպը դրսևորվել է առավել կամ պակաս խորքային դիտարկումներով: Ընտրված նյութերի ժանրային գունապնակը կազմում են հրապարակախոսական, վերլուծական հոդվածները, գրախոսությունները, էսսեները, հարցազրույցները:

Նախ՝ մշակութային հրապարակումների մասին:

Իր չկադապարվող սահմաններով մշակութային կյանքը լայն հնարավորություններ է ընձեռում լրագրողներին: Ուստի ճանապարհի իմաստավորման խնդիրը նրանցից յուրաքանչյուրի մեջ բացվում է՝ ելնելով հեղինակի մասնագիտական նախասիրություններից, նաև ճանապարհի միֆոլոգիական հատկանիշների համադրումից:

Մասնավորապես, երբ քննության առարկա է թատերական կյանքը, հեղինակային տեքստում առաջին պլան են մղվում **շարժումը, բեմում ընթացող գործողությունները**, դերասանական խաղի պլաստիկ կերպափոխումները և այլն:

Նաիր Յանի «Ինչպես տեսա «Ատամնաբույժն...նորեն» ներկայացումը» իբրև գրախոսություն, ընթերցողին է փոխանցում ներկայացման ողջ շարժընթացը: Գրախոսի համար բեմն ինքնին ճանապարհ է, որն ունի սկիզբ, ընթացք և ավարտ, և որի պատրանքը նա ստեղծում է փոքրիկ հանգրվան-ենթավերնագրերով («Ինչպես ստեղծվեց «Ատամնաբույժն...նորեն»-ը», «Մայրանում Պարոնյան են խաղում. դերասանների փնտրտուք», «Արևմտահայերենը՝ փորձություն, որ խաղին մի

նոր խաղ է ավելացնում<sup>10</sup>» և այլն): «Ճանապարհային» այս կառուցիկությունը վերարտադրում է ներկայացման բնական, աշխույժ մթնոլորտը, ինչը նյութի մատուցման ինքնատիպ դրսևորումներից է:

Երաժշտության մասին գրախոսություններում առաջնային են դառնում **Ճանապարհի և Ժամանակի** փոխառնչության խնդիրները: Դա նկատելի է հատկապես այն հոդվածներում, երբ խոսք է գնում երաժշտության պատմության կամ առանձին երաժշտի կենսագրության ու ստեղծագործական գործունեության ոլորտների մասին: Այս առումով բնութագրական են Տիգրան Մանսուրյանի 80-ամյակին նվիրված հրապարակումները, որոնցում նշանավոր երգահանը բացահայտվում է սեփական երաժշտության **անցյալի, ներկայի ու ապագայի** մարտահրավերները ներընկալող մտավորականի կերպարով: Հրապարակումներից մեկում, որ փոքրիկ էսսե է հիշեցնում, հեղինակը «Ո՞րն է Ձեր հին օրերի երգը» հարցին մատարոյի պատասխանը միահյուսում է անցյալում նրա **մանկության ճանապարհը** խորհրդանշող Շիրակի դաշտերին. «Շիրակի դաշտերի երգերն իմ հին օրերի երգն են...Դուք նկատեցի՞ք Մանսուրյանի ռեժիսուրան այս պատասխանում... Նկատեցի՞ք Շիրակի դաշտերով վազող երիտասարդ կամ էլ մանուկ Մանսուրյանին, ում շուրթերը շարժվում են երաժշտությամբ...<sup>11</sup>»:

Տարածաժամանակային հեռանկարի դիտանկյունից ինքնատիպ է մատուցվում նաև արվեստագետի հոգեվիճակը ներ-

---

<sup>10</sup> **Նաիր Յան**, «Ինչպես տեսա «Մտամնաբույժն...նորեն» ներկայացումը», <https://www.azg.am/AM/culture/2020022804>

<sup>11</sup> **Հարությունյան Լ.**, Իմ որոշումը սերն է. Տիգրան Մանսուրյան, <https://www.qahana.am/am/christian/show/844497382/70>

կայում: Դահլիճում (տարածություն)՝ բեմի վրա (ճանապարհ) կանգնած Մանսուրյանին հեղինակը մարմնավորում է ներկա ժամանակն իմաստավորող առանցքային երկու բաղադրիչներով՝ խաղաղություն և սեր («Ողջ ընթացքում նայում էի նրան ու ուզում էի հարցնել՝ որն է Ձեր խաղաղությունը», «-Իմ որոշումը սերն է...<sup>12</sup>»):

Էսսեն ավարտվում է դարձյալ **բեմի վրա կանգնած** մատենորոյի հանդեպ երախտագիտության հակիրճ խոսքով, որն ամբողջացնում է նրա երաժշտության ապագան. «Շնորհակալություն **հավերժի** Մանսուրյանին<sup>13</sup>» (ընդգծ. մերն է - Դ. Պ.):

Ճանապարհը՝ իբրև **մեղիատեքստ**. այս համատեքստում հոգեմտավոր իմաստավորման նոր շերտեր են բացվում Ս. Մավյանի «Վերջաբան. քայլել Հայաստանով» էսսե-գրախոսության մեջ:

Գրախոսությունն ունի նախաբան, վերջաբան և նրանց միջև կանգառ-ենթականգառների տպավորություն ստեղծող միջանկյալ հատվածներ: Թերևս որևէ այլ հրապարակում այսքան համակողմանիորեն չի ներառում ճանապարհի առասպելային մեր նշած բաղադրամասերը: Վերնագրից սկսած («Վերջաբան. **քայլել** Հայաստանով»)՝ այն և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստներով բացահայտում է ճանապարհի իմաստավորման մի յուրօրինակ գունապատկեր: Մեծ ենթավերնագրերում նշվող **«քայլարշավ»** եզրույթը ճանապարհի շարժուն և անշարժ վիճակների համադրություն է, որ տարածության և ժամանակի համապատկերում վերծանում է գրքի

---

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում: Ճանապարհի և ժամանակի միահյուսման հաջողված օրինակ է նաև Նաիր Յանի «Մատենորոն» հրապարակումը, տե՛ս [azg.am/-AM/culture/2019020101](http://azg.am/-AM/culture/2019020101)

պատմական (հուշարձանները), մարդկային (կոնկրետ կերպարները), աշխարհագրական (վայրերը), երկխոսային (գրույցները), հորիզոնական (համայնապատկերային հայացք), ուղղահայաց (քայլարշավի մետաֆիզիկական) հարթություններում ճանապարհորդող գրողի՝ Դրնի Դոնիկյանի եռապատում ստեղծագործության իմաստաբանական ու գեղագիտական ըմբռումները:

Ս. Մավյանի գրախոսությունը գրքին զուգահեռ ընթացող «ճամփորդություն» է, որ նպատակ ունի լսարանին ծանոթացնելու ֆրանսահայ գրողի Հայաստանը՝ այդ կերպ ընդլայնելով սեփական երկրի հանդեպ հայ ընթերցողի ինքնաճանաչողության սահմանները: Թերևս դրան է միտված նաև գրախոսության էսսեատիկ ավարտը. «Եվ հանկարծ մտքումս հառնում է Աստվածաշնչից այս տունը, որտեղ ասված է, որ «Նոյը քայլում էր Աստծու հետ(Օննդոց, VI, 9)»<sup>14</sup>» (ընդգծ. մերն է - Դ. Պ.):

### **3. Ճանապարհի կերպավորումը քաղաքական հրապարակումներում**

Մեր տեսադաշտում են եղել 2020 թ. առաջին կեսին առցանց մամուլում տպագրված այն հրապարակումները, որոնց հեղինակները քննարկում, վերլուծում են Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականության հիմնախնդիրները: Ճանապարհի «կերպարն» այստեղ նոր երանգներ է ձեռք բերում՝ ելնելով նյութի բովանդակային, թեմատիկ առաջնահերթություններից: Մշակութային հողվածների հետ առկա ընդհանրությունները նկատի ունենալով (ճանապարհի արքետի-

---

<sup>14</sup> Մավյան Ս., Վերջաբան. քայլել Հայաստանով, <http://arteria.am/hy/154498-1957>

պային կարծրատիպ, մետաֆորիկ ընկալումներ, ժամանակի տարբեր հատվածներում ճանապարհի ներկայության ընդհանրական կողմեր և այլն՝ կցանկանայինք կանգ առնել այն տարբերությունների վրա, որոնք բնորոշ են ճանապարհի քաղաքական կերպավորմանը:

Նախ՝ գլխավոր և առանցքային տարբերությունը. եթե մշակութային հրապարակումներում ճանապարհի առասպելլույթը մեծ մասամբ դիտարկվում է **Հոգու ճանապարհի** համատեքստում՝ վերջինիս բնորոշ հուզական և բնագանցական ընկալումների առատությամբ, ապա քաղաքագիտական նյութերում առաջնայինը **Մտքի ճանապարհն** է, որտեղ ակտիվ են քաղաքական կյանքի մտավոր խաղարկումները, ոչ քիչ դեպքերում նաև՝ մանիպուլյացիաները: Թերևս այս հիմնարար տարբերությունից էլ ածանցվում են ճանապարհի «քաղաքականացված» պատկերին բնորոշ մի շարք առանձնահատկություններ:

Մասնավորապես, հայոց պետականության կայացման և անկախության հաստատման ճանապարհին քաղաքական կյանքի հարափոփոխ ընթացքը հայաստանյան մեդիադիսկուրսում ուղեկցվել է **բանավիճային հարթակների** ակտիվությամբ, որը շարունակվում է նաև վերջին ամիսների հրապարակումներում: Ուշագրավ են հատկապես այն հոդվածները, որոնցում հեղինակները կիրառում են **անուղղակի բանավեճի** հնարանքը: Վերջինիս էությունը «նույն հրապարակման ներսում ներբանավիճային իրադրության ստեղծումն է, երբ հեղինակն ընդդիմադիր կողմի փաստարկները սեփական բառերով շարադրում, ապա հերքում է, իր կարծիքով, «առավել տրամա-

բանական» հակափաստարկներով»<sup>15</sup>: Ճանապարհի առասպել-  
լույթին բնորոշ երկխոսության մշակույթն այս դեպքում տեղա-  
փոխվում է հողվածագրի ներքին մտորումների տարածք:  
Նմանատիպ հրապարակումներից մեկում հեղինակն իր դա-  
տողությունները կառուցել է ընդդիմադիր կողմի փաստարկ-  
ների և դրանց հանդեպ սեփական հակափաստարկների հիմ-  
նավորման հենքի վրա. «Ընդդիմախոսներս կհակաճառեն, թե  
Ռուսաստանի հետ հնարավոր չէ այդպիսի հարաբերություն-  
ներ կառուցելը, միննույնն է, Ռուսաստանը Հայաստանին դի-  
տում է որպես գաղութ:[...] Հարց. նույն ԽՍՀՄ-ում ո՞վ էր ստի-  
պում Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը լինել ավե-  
լի ռուսամետ, քան պահանջվում էր, կամ նույն հայ ժողովրդին  
Ռուսաստանն էր ստիպում երեխաների անունները դնել  
Մելս, Լենդրոշ, Մյուդ, Նինել և այլն, երեխաներին ուղարկել  
ռուսական դպրոց»<sup>16</sup>:

Քաղաքական հրապարակումներին բնորոշ մյուս առանձ-  
նահատկությունը հանգուցային կետում կամ այլ խոսքով՝  
**խաչմերուկում**, որ ճանապարհի միֆոլոգիական բաղադրիչնե-  
րից մեկն է, անցյալ կամ ներկա իրավիճակները վերլուծելու,  
գալիք իրադարձությունները կանխատեսելու և սեփական  
դիրքորոշումները իբրև «միակ ճանապարհ» մատուցելու հա-

---

<sup>15</sup> **Պետրոսյան Դ.**, Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում, Ե., Եր. համալս. հրատ., 2007, էջ 20:

<sup>16</sup> **Իշխանյան Ա.**, Անկախության մանկական հիվանդությունը, <https://yerkirmedia.am/hy/article/2020/07/30/16524/>Ներբանավիճային տարրերի կիրառու-  
թյունն ակտիվ է նաև **Վ. Հովհաննիսյանի** «Հետևությունների ժամանակը,  
մաս երկրորդ», [https://yerevan.today/all/politics/61313/hetevoutyouanneri-jama-  
naky-mas-erkrovd%E2%80%A4-vahe-hovhannisyan](https://yerevan.today/all/politics/61313/hetevoutyouanneri-jama-naky-mas-erkrovd%E2%80%A4-vahe-hovhannisyan) **Ս. Թ. Մարգարյանի** «Մենք  
պետականության գաղափարը հավերժ կրող ժողովուրդ ենք»,  
<https://www.azg.am/AM/2020061904> և այլ հրապարակումներում:

վակնություններն են: Սրանց հեղինակները հիմնականում ընդդիմադիր քաղաքական գործիչներ են, որոնք խաչմերուկից հետո նոր ճանապարհի ընտրելու որոշումը ձևակերպում են մի դեպքում՝ ընդհանրական եզրահանգումներով, մյուս դեպքում՝ կոնկրետ առաջարկներով, թեև «նոր ճանապարհը» ոչ միշտ է նորի տարրեր պարունակում: Մասնավորապես Ս. Բաղդասարյանը իր հոդվածում («Ժողովրդավարություն առանց կուսակցությունների») առաջադրում է դրույթներ, որոնք բազմիցս կրկնվել են հայաստանյան քաղաքական դիսկուրսում. «Անհրաժեշտ է. ա) բարելավել հանրային մթնոլորտը, այլակարծության և կուսակցությունների նկատմամբ վերաբերմունքը. բ) արմատական վերատեսության ենթարկել օրենսդրական դաշտը. գ) կազմակերպել նոր որակի ընտրություններ համապետական և տեղական ընտրություններում. դ) հիմք դնել երկրում ժողովրդավարական եղանակով իշխանության փոխանցման ավանդույթին»<sup>17</sup>:

Ինչպես մշակութային, այնպես էլ քաղաքական հրապարակումներում ճանապարհի առասպելայինը անբաժան է **Ժամանակից**: Եվ եթե մշակութային հոդվածներում նկատելի է ժամանակի հատվածների տարրալուծումը պատումի նկարագրական կամ երկխոսային կառույցների մեջ, կամ էլ ակնհայտ է հոգևոր ճանապարհի հակվածությունը դեպի համաժամանակություն, ապա քաղաքական հրապարակումներում հեղինակների կողմից անցյալ, ներկա և ապագա բաժանումները հիմնականում հստակ տարանջատումներ ունեն: Քաղաքագետը խոսում է փաստարկներով (թեկուզ և՛ սուբյեկ-

---

<sup>17</sup> **Բաղդասարյան Ս.**, Ժողովրդավարություն առանց կուսակցությունների, <https://hetq.am/hy/article/119923>:

տիվ), այսինքն՝ քննում է անցած ճանապարհի պատմությունը, արժևորում ներկան, ուրվագծում անցնելիք ուղին: Այս «մանրակերտը» երբեմն էլ հյուսվում է առանց ապագայի կանխատեսումների և ավարտվում «պետության ճանապարհի» ներկա հատվածի շուրջ մտահոգությամբ. «Մեզ այդպես էլ չի հաջողվում կառուցել հայ, ազգային-էթնիկ սկզբունքներով առաջնորդվող, մեր պատմությունից, կրոնական պատկերացումներից ու դրանցից բխող բարոյահոգեբանական սկզբունքներով առաջնորդվող պետական համակարգ»<sup>18</sup>:

Մշակութային և քաղաքական հրապարակումների օրինակով թեմայի իմաստավորման այս մեկնակերպը նախնական փորձ է՝ արժևորելու ճանապարհի հոգեմտավոր ըմբռնումների ներքին սահմանները հայաստանյան մեղիախոսությամբ:

### **Ամփոփենք:**

Ճանապարհի առասպելային իր մի շարք ընդհանրական հատկանիշներով հետաքրքիր դրսևորումներ է ստացել հայկական մեղիատեքստերում: Մշակութային հրապարակումներում դրանք հարստացնում են հայաստանյան մշակութային կյանքի շարժուն պատկերը, նրա տարածաժամանակային հեռանկարի, հեղինակի ներքին Ես-ի միջոցով լսարանի ազգային ինքնաճանաչողության բացահայտումները: Քաղաքական հրապարակումներում, որտեղ առաջնայինը Մտքի ճանապարհն է, կարևոր դերակատարում ունեն ներքին բանավեճի մշակույթը, ճանապարհի հանգուցային կետերի շարունակության որոնումները, ժամանակի հստակ տարանջատումները:

---

<sup>18</sup> **Մանվելյան Ա.**, Չախողված պետության ակտիվներ, azg.am/AM/2020030606

րով ասելիքն ընթերցողին փոխանցելու հիմնավորումները:  
Մրանք այն կարևոր չափումներն են, որոնց շնորհիվ ճանա-  
պարհի հոգեմտավոր պատկերը իր ինքնատիպ ներկայու-  
թյունն է հաստատում հայաստանյան մեդիադաշտում:

2020 թ.

**ԱՆՀԱՏԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՐԱԿՆԵՐԸ ՎԻՐՏՈՒԱԼ  
ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
(«ՖԵՅՍԱԲՈՒՔԻ» ՀԱՅ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Մուտք**

Ինքնության խնդիրը եղել և շարունակում է մնալ ազգային և անձնական կյանքի համալիր ուսումնասիրության առանցքում: Եվ բնական է անհատի ինքնության, նրա փոխակերպումների հանդեպ տեսաբանների սևեռուն ուշադրությունը, քանի որ հաղորդակցության բուն զարգացումը լուրջ վերափոխումների առաջ է կանգնեցրել հանրային սոցիոմշակութային կյանքը<sup>1</sup>:

Սոցցանցերում անհատի գերակտիվությունը, մոլորակի բնակչության զգալի մասի ամենօրյա ներկայությունը հետազոտողին մղում են վերախմաստավորելու իրականության հանդեպ պատկերացումները: Այս համատեքստում այժմ հաճախ է խոսվում իրականության առնվազն երկու մակարդակների՝ ռեալ և վիրտուալ իրականությունների մասին<sup>2</sup>: Ի դեպ,

---

<sup>1</sup> Տե՛ս **Лысак И., Косенчук Л.**, Формирование персональной идентичности в условиях сетевой культуры, Изд. «Спутник», М. 2016, 147 с. **Жаркова Е. С.**, Социальные сети и личность: проблема идентичности, *Известия вузов. Серия «Гуманитарные науки»*, 2017, N 8 (2), с. 124-127. **Старцев А. А., Гришанин Н. В., Кириллина Н. В.**, Идентичность и идентификация личности в социальных сетях, «Коммуникология», 2018, т. 6, N. 4 с. 76-87. **Пронкина Е. С.**, Репрезентации личной жизни в социальных медиа (на примере социальной сети «В контакте»), «Обсерватория культуры». 2017. т. 14, № 4, с. 404-10. **Тихонов О. В.**, Социальные сети как пространство самопрезентации индивида, «Вестник Казанского технологического университета». Казань, Изд-во КНИТУ, 2012, т. 15, № 22, с. 196-199 և այլք:

<sup>2</sup> Տե՛ս **Асмолов А. Г., Асмолов Г. А.**, От Мы-медиа к Я-медиа: трансформация идентичности в виртуальном мире, «Вестник Московского университета», сер.

վիրտուալ իրականությունն այլևս չի զիջում ռեալ իրականությանը, իսկ անհատի վիրտուալ ինքնությունը, կարելի է ասել, նոր որակներ է հաղորդել նրա ֆիզիկական գոյությամբ պայմանավորված ինքնութենական տեսակին: Հետազոտողի բնութագրմամբ՝ «վիրտուալ ինքնությունը անհատի սոցիոմշակութային ինքնության բաղկացուցիչ մասն է, որի դեպքում անհատը գիտակցում է իր պատկանելությունը որոշակի ընդհանրության [...], գործունեություն է ծավալում [...] տեղեկատվական-հաղորդակցական միջավայրերում, ամենից առաջ՝ համացանցի վիրտուալ տարածության մեջ»<sup>3</sup>:

Անհատին բնութագրող վիրտուալ ինքնության նոր որակները բնորոշ են նաև հայ օգտատերերին: Հոդվածի նպատակն է նրանց օրինակով բացահայտել այն փոխակերպումները, որոնք տեղի են ունենում «Ֆեյսբուք» սոցցանցում ծավալված գործունեության մեջ՝ ելնելով ազգային միջավայրի և հոգեբանության մի շարք առանձնահատկություններից:

## 1. Ռեալ և վիրտուալ ինքնությունների համեմատական բնութագիրը

21-րդ դարասկզբին հաղորդակցության նոր հնարավորությունները արագացրել են անհատի ներսում ռեալ և վիրտուալ

---

14, «Психология», 2010, N 1, **Войскупский А. Е., Евдокименко А. С., Федунина Н. Ю.**, Альтернативная идентичность в социальных сетях, «Вестник Московского университета», Сер. 14., «Психология», 2013, N 1, с. 66-83, **Козлова Н. С.**, Реальная и виртуальная идентичность, «Социум и власть», N 2(52), 2015, с. 118-121. **Пронин В. В.**, Трансформация идентичности в пространстве интернета, «Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского», Серия «Социальные науки», 2011, N4(24), с. 126-132 և այլը:

<sup>3</sup> **Солдатова Е. Л., Погорелов Д. Н.**, Феномен виртуальной идентичности: современное состояние проблемы, «Образование и наука», т. 20, N 5, 2018, с. 112.

ինքնությունների կայացման գործընթացը: Մրանց համար ընդհանուրն այն է, որ երկուսն էլ ընդլայնում են անհատի ինքնության սահմանները. մեկը՝ ռեալ, մյուսը՝ վիրտուալ աշխարհում: Սակայն տեսաբաններն առավել հաճախ անդրադառնում են այդ ինքնությունների տարբերություններին, որոնք համառոտ ձևակերպմամբ ունեն հետևյալ բնութագրական կողմերը.

1. Ռեալ ինքնությունը ձևավորվում է որոշակի տարածության մեջ, որն ունի աշխարհագրական սահմաններ, իսկ վիրտուալ ինքնության դեպքում, այսինքն՝ համացանցային տարածքում **անհատի համար տարածական սահմանափակումներ չկան**<sup>4</sup>:

2. Վիրտուալ իրականության մեջ սահմանների բացակայությունը նոր հարթություն է տեղափոխում **ազգայինի և համամարդկայինի փոխառնչությունների խնդիրը**: Անհատի ինքնությունը հայտնվում է գլոբալ քաղաքակրթական զարգացումների անմիջական ազդեցության տակ, ինչն այդքան էլ ակնհայտ չէ ռեալ իրականության դեպքում, որի օրոք հիմնական ազդեցություն գործողը դեռևս ազգային հոգեբանության, մշակույթի, պատմության, ավանդույթների արքետիպային գործոններն են:

3. Ռեալ ինքնության ատրիբուտները ակտիվանում են մարդկային փոխհարաբերությունների միջավայրում, որտեղ ծանոթությունների հնարավորությունները սահմանափակ են: Այլ է պատկերը վիրտուալ իրականության մեջ: Այստեղ անհատի կերպարը, նրա վիրտուալ «անձնագիրը» բոլոր օգտա-

---

<sup>4</sup> Տե՛ս **Тихонов О. В.**, Социальные сети как пространство самопрезентации индивида, «Вестник Казанского технологического университета». Казань, Изд-во КНИТУ, 2012, т. 15, № 22, с. 196–199.

տերերի տեսադաշտում են, և հասանելիության ու ծանոթությունների հավանականությունը, ըստ այդմ՝ **գրուցակիցների ընտրությունն անհամեմատ մեծ է:**

4. Կարևոր հանգամանք է անհատի ինքնաներկայացման և այդ շրջանակներում՝ **կենսագրական ինքնության խնդիրը:** Եթե ռեալ աշխարհում կենսագրությունը սովորաբար միահյուսված է անհատի գործունեությանը և առերևույթ նկատելի չէ, ապա վիրտուալ տարածքում նույն այդ անհատի արարքները, կատարած գործերը, հույզերն ու ապրումները ստեղծում են տեսողական կենսագրության ուշագրավ պատկեր՝ «սեփական Եսի ինքնաներկայացման»<sup>5</sup> տարաբնույթ ձևերով (լուսանկարներ, տեսանյութեր, ուղիղ եթեր և այլն):

5. Ռեալ ինքնության վերլուծություններում հետազոտողները նկատում են. անհատն ավելի հաճախ է խոսում իր խնդիրներից, կյանքում հանդիպող դժվարություններից ու բացասական երևույթներից: Վիրտուալ տարածքում պատկերն այլ է. անհատի ինքնության նկարագրություններն առավելապես **ուղղված են սեփական կերպարի իդեալականացմանը:** Հետազոտողի կարծիքով՝ օգտատերը «առանց դժվարության կարող է ստեղծել իր իդեալական կերպարը, որը, ի տարբերություն ռեալի, պակաս վավերական է, որովհետև արտահայտում է «պատկերացումները սեփական որակների կարծեցյալ, իդեալական փնջի մասին...»<sup>6</sup>:

---

<sup>5</sup> Տե՛ս **Солдатова Е. Л., Погорелов Д. Н.,** Феномен виртуальной идентичности: современное состояние проблемы, «Образование и наука», т. 20, N 5, 2018, с. 114.

<sup>6</sup> **Рыльская Е. А., Погорелов Д. Н.,** Идентичность личности в виртуальном пространстве социальных сетей и реальная идентичность: сравнительные характеристики, «Ярославский педагогический вестник», 2021, N1 (118), с.111-112.

6. Անհատի ինքնության բացահայտման ուշագրավ մի իրողությունն է. ռեալ իրականության մեջ, մարդկային փոխհարաբերություններում նա կարող է հանդես գալ և՛ իր Եսով, և՛ այդ Եսին փոխարինող դիմակով, եթե չի ցանկանում բացահայտել իր բուն ասելիքը կամ էությունը: Սոցցանցերում **Եսի և դիմակի միջև տարածությունը փոքրանում է**: Ակաունտում ներկայանալով կենսագրական տեղեկատվությամբ՝ անհատը նվազեցնում է դիմակով հանդես գալու հավանականությունը<sup>7</sup>: Մյուս կողմից՝ սա չի կարող սահմանափակել նրան, որ, ի շահ սեփական համոզմունքների, հարկ եղած դեպքում ձերբազատվի ներքին կաշկանդումներից՝ սոցցանցում առավել ներկայանալի երևալու համար:

Նշված հաստատումներն իրենց ընդհանրական ու տարբերակիչ կողմերով ի վերջո հանգում են հետևյալին. անհատի ներկայությունը երկու տարբեր իրականություններում ստեղծում է հոգեմտավոր դաշտ, որտեղ ռեալ և վիրտուալ ինքնությունների բաղադրատարրերը փոխներթափանցում ու լրացնում են իրար՝ մեծացնելով անհատի ինքնության դրսևորման ներունակությունը:

## 2. Հայ օգտատերերի ինքնության վիրտուալ փոխակերպումները «Ֆեյսբուքում»

Ռեալ և վիրտուալ ինքնությունների համաժամանակյա ներկայությունը դարձել է հայ օգտատերերի առօրյայի անբաժանելի մասը: Ուստի մեր դիտարկած համեմատական զուգահեռները բնորոշ են նաև նրանց՝ ինքնության անհատական

---

<sup>7</sup> Տե՛ս **Шиханов А. В.**, Влияние социальных сетей на сближение представлений о личности «в кадре» и «за кадром», «Ярославский педагогический вестник», 2017, № 3, с. 355.

որակներով, որոնցում նկատելի են ազգային ինքնության, հոգեբանության և բնավորության մի շարք դրսևորումներ:

Մասնավորապես համացանցում տարածական սահմանների բացակայությամբ նորովի է բացահայտվում հայրենիքից դուրս ապրող հայի կերպարը: Ի տարբերություն ռեալ իրականության, վիրտուալ իրականությունը հնարավորություն է ստեղծում, որ նա սոցցանցում անմիջականորեն արձագանքի հայաստանյան իրադարձություններին, իր վրա վերցնի պարտավորություններ, որոնք սովորաբար ունենում է հայաստանցին: Դա նկատելի է հատկապես, երբ «Ֆեյսբուքում» ուսումնասիրում ենք ներքաղաքական կյանքին առնչվող անցուդարձերը: Միյուրեքահայի հուզական արձագանքները նույնքան բուռն են ու անմիջական, որքան Հայաստանում ապրողինը: «Կրակին վրայ պե՛նզին կը թափուի այս պահուն,-Արցախյան 44-օրյա պատերազմից շաբաթներ անց գրում է Եվրոպայում ապրող հայ օգտատերը:-Կրակով իրար պիտի այրենք: Պիտի ունենա՞նք այդ կամքն ու խոհեմութիւնը մեր վերջին ողբերգութիւններուն վրայ մե՛ծ ԱՂԵՏ մը եւս չաւելցնելու: Հեռո՛ւ մնանք բախումներէ, հեռու մնանք ազգամիջյան ընդհարումներէ, արինահեղութենէ, սադրանքներու չտրուինք՝ նուազագոյնը իրենց կեանքը զոհաբերած անմահներուն սիրոյն» (Հովհաննես Բաբերյան)<sup>8</sup>:

Վիրտուալ իրականության մեջ անհատի ինքնության ուշագրավ փոխակերպումներ են տեղի ունենում նաև ազգայինի և համամարդկայինի փոխառնչությունների համատեքստում: Հայ մտավորականի համար, հատկապես լեզուների իմացու-

---

<sup>8</sup> Այս և հաջորդ մեջբերումներում, չխախտելով անձնական տվյալների գաղտնիության սկզբունքը, «Ֆեյսբուքում» կոնկրետ անձից հղումները ներկայացնում ենք մտացածին անուն-ազգանունով:

թյան պարագային, համացանցը, այդ թվում՝ «Ֆեյսբուքը», լավագույն հարթակ է՝ ուսումնասիրելու միջազգային ասպարեզում ընթացող նորարարական գործընթացները: Իմացությունն ընդլայնելու ձգտումը նրան մղում է նոր որոնումների: Արդյունքում ազգայինի և համամարդկայինի համադրությունը, արժեհամակարգային փոխներթափանցումներով պայմանավորված, կարող է նոր որակ հաղորդել օգտատիրոջ անհատական ինքնությանը: Այդպիսին է, օրինակ, Վարդան Մեղրակյանի ֆեյսբուքյան էջը: Այս կամ այն հարցի շուրջ նրա մտորումները, մեկնաբանությունները կշռադատված են, արվեստագետների ժառանգության գնահատումները, նրանց մտքերից մեջբերումները՝ ճաշակով ու տեղին. «Կսովորե՞նք արդյոք գլխավորը հստակորեն սահմանազատել երկրորդականից, մարդկանց մասին դատել՝ ելնելով ...նրանց կատարած գործից..., ինքնուրույն իմաստավորել կատարվողը..., փորձել հասկանալ, նեցուկ լինել, որտեղ որ դա հնարավոր է... Մի խոսքով, կսովորե՞նք արդյոք միմյանց լսել...Դժվար է խնդիրը, բայց որքան մեծ կլինի դրա լուծման պատճառած հպարտությունը...» (մեջբերել է մի հատված հայ նշանավոր լեզվաբան Էդվարդ Աթայանի մտքերից):

Ցավոք, նման օգտատերերի թիվը քիչ է: Ցանցում առավելապես ակտիվ են նրանք, որոնք, ներկայանալու հնարավորություն ստանալով, ֆեյսբուքյան տիրույթ են ներբեռնում սեփական կենցաղի, առօրյայի մասին տարաբնույթ մանրամասներ: Նկատենք, որ ռեալ իրականության մեջ դրանք հասանելի կարող էին լինել լոկ մտերիմների սահմանափակ միջավայրին: Մի դիտարկում ևս. նման օգտատերերը գրավոր խոսքին թույլ տիրապետելու պատճառով իրենց էջերը լցնում են հիմնականում լուսանկարներով ու տեսանյութերով: Նպատակը գլխա-

վորապես ինքնահաստատման մղումն է, սեփական անձի կարևորությունը կենսագրական ինքնությամբ կերտելու հնարավորության օգտագործումը:

Վերոնշյալն ի ցույց է դնում հայ օգտատիրոջ վիրտուալ ինքնության մեկ այլ փոխակերպում. նրա ֆեյսբուքյան էջում հաճախ կարելի է ականատես լինել սեփական կերպարի իդեալականացմանն ուղղված գործողությունների: Սրանց հասցեատերը նույնպես հայ հանրության՝ մտավոր բարձր կարողություններով չփայլող հատվածն է, որը ռեալ իրականության մեջ կյանքի դժվարություններն ու բացասական երևույթները տեղափոխում է ֆեյսբուքյան գրույթի տարածք, իսկ տեսողական հարթության մեջ նույն այդ անհատի ընտանեկան, աշխատանքային ու ընկերական միջավայրի «հովվերգական» պատկերներն են՝ ժպտադեմ հայացքներ, ուրախ տրամադրություն, խնջույքներ և այլն: Բնական է, որ սրանց մասին տպավորությունները պիտի հազեցած լինեն համարժեք մեկնաբանություններով՝ «Կյանքս, ճիշտ սմայլիկ էլ դրել ես, արև ես, արև», «Ինչպես միշտ՝ կանացի», «Խենթանալու ա, ոնց որ մոդել լինես», «Մամայի սիրուն աղջիկ, անթերի ես, բալես», «Աշխարհի ամենահամով մամա, ոնց եմ քեզ սիրում...» և այլն: Եվ այսպես՝ հարյուրավոր ու հազարավոր քոմենտներ ու սմայլիկներ... Այլ խոսքով՝ սոցցանցային տարածքում անհատի վիրտուալ ինքնությունը կարող է ձևավորվել նաև վերբալ և վիզուալ ձևաչափերում միմյանց հակադրվող (գրավոր խոսքում՝ բողոք իրականությունից, լուսանկարներում՝ անձնական կյանքի գովք) կարծիքների համադրումով, ինչը ևս այդ ինքնության առանձնահատկություններից մեկն է:

Ուշագրավ իրողություններ կարելի է նկատել մեր նշած դիտարկումներից 6-րդ կետի առնչությամբ, այն է՝ անհատի

Ես-ի և իր դիմակների միջև տարածության նվազումը «Ֆեյսբուքում»: Ռեալ իրականությամբ սոցցանցերում ներբերված անձնական տվյալները թեև արտաքուստ նվազեցնում են օգտատիրոջ՝ սեփական էջում դիմակներով հանդես գալու հավանականությունը, բայց նրա հոգևոր աշխարհում այդ դիմակները կամ ներքին ես-երը մշտապես առկա են: Եվ դա նկատելի է գրույթի տարածքում, հատկապես երբ օգտատերերը գրականության ու արվեստի աշխարհի ներկայացուցիչներ են: Անգամ փոքրիկ պատումներում նրանց ստեղծագործական որոնումները բացում են թատերական դիմակներ, հեղինակին դարձնում անկաշկանդ, բազմադեմ և ինքնատիպ նյութեր մատուցում ֆեյսբուքյան լսարանին: Այս առումով թերևս հետաքրքիր է օգտատեր Սեպուհ Գրիգորյանի ֆեյսբուքյան էջը, որի պատումները գրավում են ներքին դիմակների առատությամբ, հումորային և լեզվառճական ու բովանդակային նուրբ անցումներով՝ «Հուշի մի ծվեն Լուսինեի հիշատակին», «Գիրք սննդոց», «Այն մասին, որ «հերոսի» հոգում վախը չորս սենյականոց բնակարան ունի ու մի շքեղ ամառանոց», «Զվարճաշրջություն Թանատոսի աշխարհում» և այլն:

### **Ամփոփենք:**

Մեր օրերում հայ անհատի ինքնությունը, ելնելով ազգային միջավայրին ու հոգեբանությանը բնորոշ առանձնահատկություններից, վիրտուալ իրականության մեջ դրսևորվում է ուշագրավ փոխակերպումներով: Դա նկատելի է հատկապես «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում, որը լայն հնարավորություններ է ընձեռում այդ ինքնությունը ներկայացնելու համար:

Այս համատեքստում հայ օգտատերերին բնութագրական են ցանցում տարածական սահմանափակումների բացակայությամբ ազգային կյանքի շուրջ միասնական մեկ հարթակում հանդես գալու ձգտումը, միջազգային ասպարեզում ընթացող նորարարական գործընթացներին ֆեյսբուքյան տիրույթում հաղորդակցվելու միտումները, սեփական Ես-ը ներքին դիմակներով փոխարինելու ճկունությունը և այլն: Սրանց գուգահեռ մեծանում է թիվը այն օգտատերերի, որոնք շատ ակտիվ են սոցցանցերում, մասնավորապես «Ֆեյսբուքում», և հիմնականում գործում են վիրտուալ կենսագրական ինքնություն ստեղծելու, դրանով իսկ՝ վիրտուալ իրականության մեջ ինքնահաստատվելու պարզունակ մղումներով: Այս ամենով հանդերձ՝ հայաստանյան մեդիադաշտում ռեալ ինքնության հետ համատեղ վիրտուալ ինքնության ներկայությունը՝ որպես նոր մեդիայի առանցքային բաղադրիչ, շարունակում է հարստացնել հայ անհատի, լայն առումով՝ նաև ազգային ինքնության դիմագիծը:

2021 թ.

ԱՎԱՆԴԱԿԱՆԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ  
(Հայ մամուլը 19-րդ դարի երկրորդ կեսին և  
20-րդ դարասկզբին)



**ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ 20-ԸՂ ԴԱՐԱՄԿԶԲԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ,  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ  
(ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)**

**Մուտք**

Ասհնար է պատկերացնել վերջին հարյուրամյակների հայոց քաղաքակրթական պատմությունը առանց հայ մամուլի: Իր սկզբնավորման տարեթվից (1794) մինչ օրս նրան վիճակված էր դառնալու ազգի հասարակական-քաղաքական, սոցիալ-մշակութային կյանքի տարեգիրը, որի էջերում սերունդների հոգեմտավոր գործունեության պատկերը անսխաղեպ է իր համակողմանի և բազմաշերտ մատուցմամբ:

20-րդ դարասկիզբը մամուլի ինքնադրսևորման լավագույն ժամանակահատվածներից է, ինչը բնութագրական է ոչ միայն հայերի, այլև քաղաքակիրթ ազգերի մշակութային կյանքին<sup>1</sup>: Այն աչքի է ընկնում աշխարհաքաղաքական բախտորոշ իրադարձություններով, հին կայսրությունների փլուզման գործընթացներով, պետությունների բանակցային խաղերով, որոնք էապես փոխեցին մարդկության պատմության ընթացքը: Նման իրադարձությունների նախաշեմին հաղորդակ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Семенова А. Л.**, Русская философская публицистика начала XX века, <https://cyberleninka.ru/article/n/russkaya-filosofskaya-publitsistika-nachala-hh-v-etapy-razvitiya-polemiki-mezhdu-idealistami-i-pozitivistami>, **Асташкин А. Г.**, Социкультурная среда в России начала XX века и ее влияние на становление журналистики, «Ֆեյդրուրով» «Ученые записки Казанского университета». Серия «Гуманитарные науки», 2017, т. 159, кн. 3, էջ 732-741, **Воеводин Ф. С.**, История журналистики как когнитивный феномен, <https://pgu.ru/upload/iblock/8d2/voevodin-f.s.-istoriya-zhurnalistiki-kak-kognitivnyy-fenomen.pdf> և այլք:

ցության միջոցների դերն ու անելիքները առանձնակի կարևորություն են ստանում:

Հողվածում, որպես քննական ակնարկ, նպատակ ունենք ընդհանրական գծերով ներկայացնել հայ մամուլի առաքելությունը 20-րդ դարասկզբի քաղաքական, մշակութային գործընթացների հոլովություն՝ հընթացս քննելով նրա մասնագիտական գործունեությանն առնչվող մի շարք երևույթներ:

### **1. Հայ մամուլը և պետականությունը**

Հաղորդակցության միջոցները, մասնավորապես մեդիան հասարակության կառուցվածքին, համակեցությանը, գործունեության լայն համապատկերին արձագանքող «գործիքներ» են, որոնք ի վերջո դառնում են նույն այդ հանրույթի արժեհամակարգի կրողները: Այս համապատկերում ընդունելի է մեդիատեսաբանի այն դիտարկումը, ըստ որի՝ 17-րդ դարում ծնունդ առած մամուլը համահունչ էր հետմիջնադարյան Եվրոպայում ստեղծվող ազգային պետությունների քաղաքակրթական նոր մարտահրավերներին: Այդ «պետությունների կառուցումը զուգակցվում էր ազգային ինքնության կայացման անհրաժեշտությամբ, որն անհնար էր առանց զանգվածային հաղորդակցության: Իսկ ազգային ինքնության կառուցման հիմքը առաջին հերթին ազգային մշակույթը և ազգային լեզուն են: Այսպիսով, ազգային լեզուներով զանգվածային հաղորդակցության տարածումը դառնում է առաջին հաղորդակցական փոփոխություններից մեկը, որ ուղեկցում է ազգային պետությունների ստեղծմանը»<sup>2</sup>:

---

<sup>2</sup> Кирия И. В., Новикова А. А., История и теория медиа, М., Издательский дом Высшей школы экономики, 2017, с. 100.

Հայ մամուլի՝ որպես զանգվածային հաղորդակցության պատմության ընթացքը նույնական չէ այս դիրքորոշմանը, քանի որ նրա գործունեության դաշտը ձևավորվել է հիշյալ դարերում պետության և պետականության բացակայության պայմաններում: Ըստ այդմ աշխարհով մեկ սփռված հայկական գաղթօջախների տեղեկատվամիջոցները համախմբվել են հիմնականում երկու մշակութային կենտրոններում՝ Կ. Պոլսում և Թիֆլիսում: 19-րդ դարի երկրորդ կեսից հայ մտավորականության սևեռումը դառնում է **ազգային անկախության, պետականության վերականգնման խնդիրը**. այն հայտնվում է նաև միջազգային ատյաններում՝ ձևակերպվելով իբրև Հայկական հարց<sup>3</sup>: Այլ խոսքով՝ մինչև 20-րդ դարասկիզբ հայ մամուլը գործել է **հոգևոր հայրենիքի սահմաններում**, նրա համար նախանշված կանոններով: Եվ այն ամենը, ինչ բնորոշ է ազգային ինքնությանը (պատմություն, մշակույթ, կրոն, ազգային ավանդույթներ, քաղաքականություն, տնտեսություն և այլն), եղել է հայ մամուլի ու նրա պատմությունը կերտողների տեսադաշտում:

Հայոց պետականության վերականգնման առաջնային պայմաններից մեկը մամուլում **քաղաքական օրակարգի** առկայությունն էր, որին առնչվող խնդիրները լուսաբանվել են հայկական պարբերականներում համապատասխան խորագրերի ներքո: Ավելին՝ 19-րդ դարի երկրորդ կեսին ձևավորված

---

<sup>3</sup> Մինչ այդ հայկական մի շարք գաղթօջախներում (օրինակ՝ հնդկահայ գաղթօջախում՝ Շ. Շահամիրյան, Մ. Բաղրամյան), նաև որոշ մտավորականների ջանքերով (Ի. Օրի, Հ. Էմին) առաջադրվում է հայոց պետականության վերականգնման խնդիրը, սակայն հայ մտավորականների քաղաքական գործունեության դաշտում այն ակտիվորեն ներառվում է 1870-ականներից՝ Հայկական հարցի միջազգայնացումից հետո, տե՛ս <http://www.encyclopedia.am/pages.php?hId=1300>

գաղափարական հոսանքները (դեմոկրատական, պահպանողական, ազգային-պահպանողական) դարավերջին ազգային քաղաքական կուսակցությունների ստեղծման խթան դարձան, իսկ նրանց պարբերականները տվյալ կուսակցության ծրագրի հիմքի վրա առաջ էին մղում Արևմտյան Հայաստանի ազատագրման, հայ ժողովրդի ինքնորոշման անհրաժեշտությունը<sup>4</sup>:

Քաղաքական օրակարգն աշխուժացավ հատկապես 20-րդ դարասկզբին: Նախորդ դարավերջին հիմնադրված արմենական և հնչակյան կուսակցությունների հիմքի վրա առաջ եկան նոր կուսակցություններ՝ վերափոխված անվանումներով, ծրագրերով ու մամուլի օրգաններով՝ «Մարտ», «Նոր կեանք» (Վերակազմյալ հնչակյաններ), «Ազգ», «Վան-Տոսպ» (Սահմանադրական ռամկավար կուսակցություն) և այլն: Սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության որդեգրումով ծնունդ առան բոլշևիկյան կուսակցությունը և սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը (սպեցիֆիկներ)՝ իրենց պարբերականներով<sup>5</sup>:

Բայց և այնպես դարասկզբի ամենաազդեցիկ ազգային քաղաքական ուժը շարունակում էր մնալ Հայ հեղափոխական դաշնակցությունը, որը համախոհների լայն շրջանակով, պարբերականների թվով, գաղափարական և քաղաքական ակտիվ գործունեությամբ մեծ հեղինակություն էր հայ իրականության արևելահայ ու արևմտահայ հատվածներում: Ազգային կյանքի համար բախտորոշ իրադարձություններին (հայ-

---

<sup>4</sup> Տե՛ս «Հայ պարբերական մամուլի պատմություն, XVII-XIX դարեր», հ. 1, Կահիրե, 2006, էջ 644-683:

<sup>5</sup> Տե՛ս «Հայ պարբերական մամուլի պատմություն, 1900-1922», հ. 2, Երևան, 2017, էջ 617-698:

թաթարական կոիվներ, ցարական Ռուսաստան-հայոց եկեղեցի փոխհարաբերություններ, երիտթուրքերի հեղաշրջում և այլն) Դաշնակցության առաջնորդող դերը համակողմանի լուսաբանումներ էր ստանում սեփական մամուլում. ընդգծվում էին հատկապես կուսակցության բազմաշերտ գործունեությունը, ազգային կեցվածքն ու քաղաքական դիրքորոշումները: Դաշնակցական գործիչները ճկուն էին նաև թերթերի հրատարակությունը կազմակերպելու գործում: Միայն արևելահայ իրականության մեջ, խուսափելով ցարական հետապնդումներից, ՀՅԴ Արևելյան բյուրոն տասներեք անգամ փոխում է «Յառաջ» պաշտոնաթերթի անունը («Ալիք», «Երկիր», «Զանգ», «Ժամանակ», «Փայլակ» և այլն), ինչի շնորհիվ ապահովվում էր կուսակցության պարբերականի տպագրության շարունակականությունը <sup>6</sup>:

Դարասկզբի հայ քաղաքական կյանքի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ ռուսական և օսմանյան կայսրությունների խորհրդարաններում հայ պատգամավորների ներկայությունն էր, որոնց գործունեությունը լայն քննարկումների էր արժանանում արևմտահայ ու արևելահայ մամուլում («Ազատամարտ» (Կ. Պոլիս), «Հորիզոն» (Թիֆլիս), «Մշակ» (Թիֆլիս) և այլն): Քաղաքական կյանքի հետագա զարգացումները 600-ամյա ընդմիջումից հետո հանգեցրին ազգային պետական կառույցի՝ Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծմանը, որի գոյության տարիներին ազգային մամուլը լիարժեք գործունեություն էր ծավալել հանրապետության մայրաքաղաքում և մարզերում: Ընդամենը երկուսուկես տարում

---

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 571:

լույս է տեսնում շուրջ 60 պարբերական<sup>7</sup>, ինչն աննախադեպ էր հայ մամուլի պատմության մեջ: Դրանք գործում էին բազմակուսակցական համակարգի պայմաններում՝ ազատորեն ներկայացնելով սեփական քաղաքական կամ հասարակական ուժի դիրքորոշումները երկրի առջև ծառայած խնդիրների շուրջ:

Նախորդ մշակութային կենտրոնները (Կ. Պոլիս, Թիֆլիս) աստիճանաբար սկսում են կորցնել իրենց մենաշնորհը: Հոգևոր Հայրենիքին փոխարինելու է գալիս **իրական հայրենիքը**՝ սեփական աշխարհագրական սահմաններով ու պետական կառույցին բնորոշ գործառնություններով: Վերջինիս առջև խնդիր է դրվում տեր կանգնել քաղաքակրթական այն արժեհամակարգին, որի անքակտելի մասն էր նաև մամուլը: Նրա էջերում վերստին հառնող ազգային ինքնությունը իր հիմնարար հատկանիշներով պետք է նախանշեր նորաստեղծ պետության կայացման և ինքնադրսևորման հիմնական ուղիները: Սակայն Առաջին հանրապետությանը, բնականաբար նաև նրա մամուլին նման հնարավորություն չտրվեց...

## **2. Հայ մշակութային ինքնությունը և դարասկզբի մամուլը**

20-րդ դարասկզբի հայ մամուլում քաղաքականից ոչ պակաս առանցքային պետք է համարել նաև մշակութային ոլորտը: Մշակույթը մեկնաբանող տեքստերում ինքնության բաղադրիչները նոր որակ և բովանդակություն են հաղորդում մեր ազգային ինքնությանն ընդհանրապես: Դեռևս 1899 թ. «Անահիտ» հանդեսում Արշակ Չոպանյանը հետաքրքիր դիտար-

---

<sup>7</sup> Տե՛ս **Ա. Հակոբյան**, Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Եր., 2005, էջ 3:

կումներ է անում՝ արևելահայերի ու արևմտահայերի մտավորական կյանքի մի շարք նրբերանգներ ի ցույց դնելով: «Էական գծերը,-գրում է նա,-որ Ռուսահայոց եւ Թրքահայոց **մտատրական արտադրութեանց** տարբերութիւնը կը ձեւացնեն, ըստ իս՝ հետեւեալ երեքն են, որոնք, ներքնապէս, կրնան միութեան վերածուիլ. ա. Ռուսահայերը ավելի «ընկերական զգացում», ավելի «հավաքական զարգացում» ունին, Տաճկահայերը ավելի «անձնական ինքնատպութիւն», ավելի «անհատականութիւն». բ. Ռուսահայոց մեջ տիրական ձգտումը «օգտապաշտութիւնն է», Տաճկահայոց մեջ՝ «գեղեցկագիտական զգացումը». գ. Ռուսահայերը ավելի «ազգային գոյն» ունին, աւելի «հայու արեւելցի» են, Տաճկահայերը աւելի «արեւմտական» են, աւելի «միջազգայնութեան» մօտեցած»<sup>8</sup> (ընդգծ. մերն է - **Դ. Պ.**): Նշված տարբերությունները, թեկուզ մասնակիորեն, որքան անանձնացնում, նույնքան էլ համադրում և լրացնում են մեր մշակութային ինքնության պատկերը, որը XX դարակազմի հոգեմտավոր զարգացումների համատեքստում նոր երանգներ էր ձեռք բերում: Դրանք նկատելի էին հատկապէս մշակութային պարբերականներում (արևելահայ թե արևմտահայ), որոնցից մի քանիսի գեղագիտական մատուցման մակարդակը համահունչ էր եվրոպական մամուլի որոնումներին՝ «Բանբեր գրականութեան և արուեստի» (Խմբ.՝ Ն. Ադոնց), «Գեղարվեստ» (Գ. Լևոնյան), «Անահիտ» (Ա. Չոպանյան), «Նաւասարդ» (Դ. Վարուժան, Հ. Սիրունի), «Մեհեան» (Կ. Զարյան)... Այս և մյուս պարբերականներում հիմնարար հողվածներով հանդես էին գալիս հայ արվեստի ու գրականության հանճարեղ մշակ-

<sup>8</sup> **Ա. Չոպանյան**, Ռուսահայեր ու Թրքահայեր, «Անահիտ», 1899, թիվ 11, էջ 318:

ները՝ Կոմիտասը, Թ. Թորամանյանը, Հ. Թումանյանը, Դ. Վարուժանը, Ե. Օտյանը...

Ընդհանրապես մշակութային ինքնության հիմքը, ինչպես և ազգային ինքնության դեպքում, **պատմությունն է**: Վերջինիս պահոցներում ամրագրված գանձերը սեփական դիմագիծը պահելու կայուն ուղերձներ են սերունդներին: 20-րդ դարասկիզբը հայ մշակույթի պատմության վերաբժնորման բազում առիթներ է ընձեռել: Այս առումով հատկապես 1911-1913 թվականներին առավել հաճախ հիշատակվում են հայ գրերի գյուտի ստեղծման 1500 և հայ տպագրության սկզբնավորման 400-ամյակները: Դրանց նվիրված միջոցառումների գլխավոր հանձնակատարը մամուլն էր, որի էջերում, տեղեկատվությունից բացի, տպագրվում էին նաև վերլուծական հրապարակումներ: Մասնավորապես նշվում էր, որ գրերի գյուտը դարձել է հայի հոգևոր գոյության խարիսխը՝ «մեր ունեցած միակ իրական ուժը», «Մեզի մնացած միակ ինչքն ու մեծութիւնն է, որ պիտի տօնենք»<sup>9</sup>:

Ինքնության, այդ թվում նաև՝ մշակութային ինքնության առանցքային հատկանիշներից մեկն էլ նրա **շարունակականությունն է**, որ, փոխանցվելով անցյալից ներկա, պահպանում է ազգի հավաքական «ես»-ը<sup>10</sup>: Այստեղ նույնպես առաջնային դեր էր վերապահված մամուլին, որն անմիջականորեն արձագանքում էր մշակութային կյանքում տեղի ունեցող տարաբնույթ իրադարձություններին: Ներկան ավելի քան պահանջ-

---

<sup>9</sup> Տե՛ս **S. Ղալթախյան**, «Համազգային մեծ հոբելյանի» տոնակատարություններն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում, «Ցեղասպանագիտական հանդես», N 5 (2), 2017, էջ 104:

<sup>10</sup> Տե՛ս **Guibernau M.**, D. Anthony Smith on Nations and National Identity: A Critical Assessment, “Nations and Nationalism”, 10 (1/2), 2004, էջ 136.

ված էր: Հատկապես 1910-1914 թվականներին Կ. Պոլսում և Թիֆլիսում հիմնադրվում են գրական, ազգագրական, պատմական, երաժշտական ընկերություններ ու միություններ: Վաղուց չկան այդ կազմակերպությունները, սակայն պարբերականները մերօրյա ընթերցողների առջև բացում են դարասկզբի գրական, թատերական, երաժշտական մթնոլորտը, աշխույժ քննարկումներն ու բանավեճերը: Մշակութային ինքնության ներկան, ժամանակի կարճ տարածքում վերափոխվելով անցյալի, մամուլի միջոցով շարունակում է **պահպանել իր ներկայությունը** մեծ ժամանակի<sup>11</sup> տիրույթում և հայ մշակույթի տարբեր հատվածների միջև վերականգնում երկխոսության հնարավորությունը: Ռուս մշակութաբանի կարծիքով՝ «Ինքնությունը նախ եւ առաջ անհրաժեշտ է ավանդական արժեքների պահպանման և տարբեր մշակույթների միջև երկխոսությունների հաստատման համար»<sup>12</sup>: Հավելենք. ավանդական արժեքների պահպանման խնդիրը նույնպես երկխոսության կարիք ունի, այս դեպքում՝ **ներմշակութային երկխոսության**, որի հիմնական հարթակը հայ մամուլն էր 20-րդ դարասկզբին:

---

<sup>11</sup> Մ. Բախտիինի բնութագրումն է: Նրա կարծիքով՝ «Ստեղծագործությունները ճեղքում են իրենց ժամանակի սահմանները, ապրում դարերի, այսինքն՝ մեծ ժամանակի մեջ, ընդ որում՝ հաճախ (իսկ հանճարեղ ստեղծագործությունները՝ միշտ) ավելի արդյունավետ ու ամբողջական կյանքով, քան իրենց ժամանակի մեջ», <https://www.litdic.ru/bolshoe-vremya/>

<sup>12</sup> **Куд В. А.**, Культурная идентичность как способ реализации защитных функции культуры, <https://cyberleninka.ru/article/n/kulturnaya-identichnost-kak-sposob-realizatsii-zaschitnyh-funktsiy-kultury>

### **3. Հայ մամուլի մասնագիտական գործունեության մի քանի հարցեր**

19-րդ դարում Եվրոպական երկրներում հայտնվել էին մեդիահաղորդակցության նոր միջոցներ՝ լուսանկարչությունը, հեռագիրը, հեռախոսը, դարավերջին՝ նաև կինոն: Այս ամենով հանդերձ՝ դրանք դեռևս լուրջ մրցակից չէին մամուլին, որն ուներ գրագետ խմբագրակազմ, գաղափարական ու քաղաքական համոզմունքներով ձևավորված լսարան և ուղղորդում էր 20-րդ դարասկզբի մեդիադաշտը: Մամուլը վճռորոշ դերակատարություն ուներ Եվրոպայի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: Այս իրողությունը, ազգային առանձնահատկություններով հանդերձ, պետք է արձանագրել նաև հայ մամուլի պարագային: Իսկ ընդհանրապես, արևելահայ ու արևմտահայ մշակութային կենտրոններում հրատարակվող պարբերականների գործունեության մեջ հարկ է առանձնացնել մի քանի ուշագրավ միտումներ.

Առաջին՝ 19-րդ դարավերջին ուրվագծվում են այն առաջնահերթությունները, որոնք կայուն իրողություններ դարձան 20-րդ դարասկզբին: Խոսքը քաղաքական, մշակութային, տնտեսական կառույցների գործունեության լուսաբանման և նրանց հետ մամուլի փոխառնչությունների նոր որակի մասին է: Առաջին երկուսին ընդհանրական գծերով անդրադարձանք: Տնտեսականի վերաբերյալ ընդամենը մի նրբերանգ. եթե 19-րդ դարի առաջին կեսին մամուլը Եվրոպայում «բացառապես հասարակական բարիք էր» և գործում էր քաղաքական ու գաղափարական մրցակցության դաշտում, ապա արդեն դարավերջին սկիզբ է առնում դրա գործունեության կոմերցիոն

(առևտրային) փուլը՝ «ելնելով այն խոշոր կապիտալի շահերից, որին պատկանում էր<sup>13</sup>»:

Ի տարբերություն եվրոպական երկրների՝ 20-րդ դարասկզբին (մինչև Առաջին հանրապետության ծնունդը) հայ մամուլն իր գործունեությունը ծավալում էր այլ պետությունների տարածքում, գոյատևում բարեգործությունների հաշվին, ուստի նրան բնորոշ չէր առևտրայնացման դասական մոդելը, թեև մի շարք պարբերականներ գովազդային քաղաքականության մեջ որոշակի առաջընթաց էին արձանագրել<sup>14</sup>:

Երկրորդ, 19-րդ դարավերջին հրատարակվում են պարբերականներ, որոնք կենտրոնանում էին հանրային կյանքի մեկ ոլորտի վրա, ներկայացնում տվյալ բնագավառը համակողմանիորեն վերլուծող հրապարակումներ: Նման մոտեցումը հնարավորություն էր տալիս ձևավորելու սեփական լսարանը, խորքային գիտելիքներ հաղորդելու, պարբերականի շուրջ համախմբելու արհեստավարժ թղթակիցների: Այսպես հայ մամուլի պատմության մեջ հայտնվում են սեփական ոճն ու ձեռագիրն ունեցող **թեմատիկ ուղղվածությամբ պարբերականները**: 20-րդ դարասկզբին դրանց թիվն ընդլայնվեց՝ ներառելով առավելապես հումանիտար ոլորտներ՝ կրթական-լուսավորչական, բանասիրական-ազգագրական, արվեստ, գրականություն, քաղաքական, երգիծական, կրոնական և այլն:

Երրորդ՝ հասարակական-քաղաքական կյանքի ակտիվացմանը գուզընթաց՝ պարբերականների էջերում ավելի հաճախ են հանդիպում քաղաքական, մշակութային, գրական

---

<sup>13</sup> Տե՛ս **Кирья И. В., Новикова А. А.**, История и теория медиа, էջ 112-113.

<sup>14</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Դանիելյան Տ.**, Մատենագիտական գովազդը թիֆլիսահայ պարբերական մամուլում (1865-1905 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», Բանասիրություն, 2020, N 2 (32), էջ 93-103:

կյանքին նվիրված տարաբնույթ քննարկումներ, որոնք շատ դեպքերում վերածվում էին իմաստալից բանավեճերի՝ հարստացնելով հայ հանրույթի հոգեմտավոր հետաքրքրությունների շրջանակը: Ինչ խոսք, քիչ չէին նաև միմյանց վիրավորող բանակոխիվները, փոխըմբռնմանը չմիտված անձնական հավակնություններով հրապարակումները: Բայց և այնպես մամուլում աստիճանաբար **հղկվում էր հայ մտավորականի նոր տեսակը**, իսկ 1910-ական թվականների մինչեղեռնյան մշակութային վերելքը **ներագային երկխոսությունը բարձրացրել էր նոր մակարդակի**<sup>15</sup>, որի շնորհիվ իրականություն կարող էին դառնալ հայ մշակույթի գալիքը նախանշող լավագույն կանխատեսումները, եթե չսկսվեր Առաջին համաշխարհային պատերազմը...

Չորրորդ՝ հայ իրականության մեջ 19-րդ դարի երկրորդ կեսին լույս տեսնող օրաթերթերի մի շարք **խորագրեր**՝ «Ներքին տեսութիւն», «Արտաքին տեսութիւն», «Քաղաքական», «Թղթակցութիւններ», «Բանասիրական», «Խառն լուրեր» և այլն<sup>16</sup>, կայուն ներկայություն էին նաև դարասկզբի մամուլում: Միննույն ժամանակ նոր դարն իր հետ բերել էր **արագընթաց ուժով, ակտիվացրել հաղորդակցության միջոցները**, և այս իրողությունը նկատելի էր մամուլի էջերում: Մասնավորապես «Մշակը», որը նախորդ դարի 70-80-ական թվականներին բավարարվում էր հիմնականում թղթակիցների հոդվածներով, 1900-ականների սկզբին, լուրերի օպերատիվ մատուցման

---

<sup>15</sup> Տե՛ս **Պետրոսյան Դ.**, Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում, Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 333-355:

<sup>16</sup> Այս խորագրերը, փոքր տարբերությամբ, բնորոշ էին հատկապես արևելահայ օրաթերթերին՝ «Մշակ», «Արձագանք», «Մեղու Հայաստանի», «Նոր-Դար»:

պահանջից ելնելով, բացում է նոր խորագրեր՝ ընթերցողին հասցնելով ամենավերջին նորությունները՝ «Օրվա նորութիւններ», «Վերջին տեղեկութիւններ», «Նորագոյն լուրեր և այլն»<sup>17</sup>:

Հինգերորդ՝ նախորդ դարի երկրորդ կեսին հրատարակված պարբերականների զգալի մասի գործունեությունը մեծապես կրում էր **խմբագրի անհատականության կնիքը**. արևելահայ իրականության մեջ՝ Ստ. Նազարյան, Գր. Արծրունի, Ար. Հովհաննիսյան, Սպ. Սպանդարյան, արևմտահայ իրականության մեջ՝ Ղ. Պալտազարյան, Ստ. Ոսկան, Մ. Մամուրյան, Հ. Պարոնյան և այլք: Սա պայմանավորված էր մի կողմից տվյալ պարբերականի և նրա խմբագրի՝ այս կամ այն գաղափարական հոսանքին հավատարիմ մնալու սկզբունքներով, մյուս կողմից՝ ֆինանսական միջոցների սակավությամբ ու սահմանափակ թղթակցական ցանցով, երբ խմբագիրն ստիպված էր բազմաթիվ գործառույթների պատասխանատվությունն իր վրա վերցնել: Նոր դարասկզբին նման խմբագիրների թիվը քիչ է: Գլխավոր պատճառ պետք է համարել այն, որ լույս տեսնող շատ պարբերականներ՝ ա) քաղաքական կուսակցությունների մամուլի օրգաններ էին, որոնք սովորաբար ղեկավարվում էին կոլեգիալ սկզբունքներով, իսկ խմբագիրները հաճախ էին փոխարինվում, բ) Թիֆլիսում, Կ. Պոլսում (հատկապես երիտթուրքերի հեղաշրջումից հետո) և մյուս հաշաշատ քաղաքներում ստեղծվել էին բազմաթիվ հասարակա-

---

<sup>17</sup> Տե՛ս, օրինակ, «Մշակի» 1912-1913 թթ. համարները: Հատկանշական է, որ Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին մի շարք օրաթերթերի պատասխանատուներ մինչև վերջին րոպեն պահում էին ամենաթարմ նորությունների համար նախատեսված պոնակները՝ «Վերջին ժամ» խորագրով. տե՛ս ՀՅԴ պաշտոնաթերթ «Յառաջի» 1920 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների համարները:

կան ու մշակութային միություններ, որոնց թերթերի խմբագիրները ակնառու դեմքեր չէին, գ) ընդլայնվել էր պարբերականների հրատարակման աշխարհագրությունը՝ ներառելով ոչ միայն խոշոր, այլև գավառական քաղաքները (Վան, Կարին, Կարս, Ալեքսանդրապոլ և այլն) և ըստ այդմ մեծացնելով խմբագիրների թիվը, դ) դարասկզբին համազգային խնդիրների շուրջ միավորված մտավորականների միջավայրը չէր բավարարվում միայն խմբագրի հեղինակությամբ: Թերթերն ու ամսագրերը, մշակութային տարբեր միջոցառումներն ի հայտ էին բերում հանճարեղ նոր դեմքերի, որոնք ուղենշային դեր պիտի խաղային հայ հասարակական կյանքի, արվեստի ու գրականության ոլորտներում:

### **Ամփոփում:**

Շայ մամուլն առանձնակի դեր ունի 20-րդ դարասկզբի հայ սոցիալ-քաղաքական ու հոգևոր-մշակութային կյանքում: Հոգևոր հայրենիքի գոյությանը զուգահեռ՝ դեռևս նախորդ դարի երկրորդ կեսից մտավորականությունը ձեռնամուխ էր եղել հայոց ազգային անկախության խնդրի իրագործմանը, որի շուրջ ձևավորված քաղաքական օրակարգի հաջողությունը պայմանավորված էր նաև մամուլի արհեստավարժ գործունեությամբ: Վերջինիս առանցքային խնդիրը աշխարհաքաղաքական նոր իրողություններում ազգային արժեհամակարգի, այլ խոսքով՝ ազգային ինքնության շարունակականության պահպանումն էր: Մամուլը կարողացավ գործել իբրև ներմշակութային երկխոսության հարթակ անխաթար պահելով հոգևոր հայրենիքի սահմանները և նպաստելով հայոց պետականության վերականգնմանը:

Այս համատեքստում որոշակի կարևորություն է ձեռք բերում նաև հայ մամուլի մասնագիտական ճկուն գործունեությունը՝ ազգային առաջնահերթությունների ճիշտ գիտակցում, թեմատիկ ուղղվածությամբ պարբերականների առատություն, հիմնախնդիրների շահագրգիռ քննարկումներ և այլն, որոնք նպաստեցին հայ հասարակական-քաղաքական կյանքում մամուլի նորովի արժևորմանը:

2021 թ.

**ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ  
ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ  
«ԳԵՂԱՐՈՒԵՍ» ԱՄՍԱԳՐՈՒՄ**

**Մուտք**

Ինքնության ազգային չափումներում մշակույթն առանձնակի դեր ունի: Այն ձևավորում ու հղկում է ազգի քաղաքակրթական դիմագիծը, մեծացնում նրա դիմադրողականությունը գոյության հարատև պայքարում: Մշակութային ինքնությունից են բխում նաև միջմշակութային երկխոսությունները, դրանց տևական ընթացքն ու տարաբնույթ դրսևորումները ժամանակի հոլովությամբ: Ճիշտ է նկատված, որ «ինքնությունը նախ և առաջ անհրաժեշտ է ավանդական արժեքների պահպանման և տարբեր մշակույթների միջև երկխոսությունների հաստատման համար»<sup>1</sup>: Մշակութային երկխոսությունները ինքնության որակական փոփոխությունների լավագույն հարթակ են. դրանք նաև խթանում են ինքնության հակադիր բևեռը՝ **այլությունը**, առանց որի ինքնությունը գոյատևել չի կարող: Ըստ այդմ՝ այլությունը հնարավորություն է ինքնության համար՝ հաղորդակցվելու համաշխարհային մշակույթի ու քաղաքակրթության արժեքներին՝ դրանով իսկ հարստացնե-

---

<sup>1</sup> Տե՛ս **Куд В. А.**, Культурная идентичность как способ реализации защитных функции культуры, <https://cyberleninka.ru/article/n/kulturnaya-identichnost-kak-sposob-realizatsii-zaschitnyh-funktsiy-kultury> Մշակութային ինքնության մասին տե՛ս նաև **Магузкова Е. П.**, Культурная идентичность: к определению понятия, «Вестник Балтийского федерального университета им. И. Канта», 2014, вып. 2, с. 62-68, **Радугина О. А., Боймагов У. Ф.**, Проблематизация культурной идентичности в эпоху глобализации, «Вестник ВГУ», серия «Философия», 2018, с. 53-61, **Բայադյան Հ.**, Տեղեկատվամիջոցներ և մշակութային ինքնություն, <https://hetq.am/hy/article/31574>

լով ոչ միայն մշակութային, այլև ազգային ինքնության արքե-տիպերը<sup>2</sup>:

Այս առումով 19-րդ դարավերջը և 20-րդ դարասկիզբը յուրօրինակ փորձություն էին հայ մշակութային ինքնության ստեղծագործ կրողի՝ մտավորականության համար: Դարերով պետականագուրկ հայ ժողովրդին պետք էր վերստին իր ինքնության արժեհամակարգի տերը դարձնել: Այդ նպատակին էին միտված հիշյալ ժամանակաշրջանում լույս տեսած արևելահայ ու արևմտահայ «Մուրճ», «Հանդես ամսօրեայ», «Ազգագրական հանդես», «Բանբեր գրականութեան եւ արուեստի», «Անահիտ», «Մեհեան», «Նաւասարդ», «Գեղարուեստ» մշակութային պարբերականները:

Հայ մշակույթի նվիրյալ Գարեգին Լևոնյանի խմբագրությամբ 1908 թ. Թիֆլիսում լույս տեսած «Գեղարուեստ» ամսագրի առաջին համարը ոգևորությամբ ընդունվեց մտավորականների շրջանում<sup>3</sup>: Ամսագրի թարմության հայտը նախ և առաջ նրա թեմատիկ լայն ընդգրկումն էր և կառուցվածքային ինքնատիպ բաժանումները՝ «Գեղարուեստի տեսականը», «Գեղարուեստի պատմականը», «Գեղարուեստի գրականը», «Գեղարուեստը ընտանիքում և դպրոցում», «Գեղարուեստական նամականի» և այլն: Մինչ այդ արևելահայ որևէ այլ պար-

---

<sup>2</sup> Տե՛ս մասնավորապես **Ստեփանյան Ա.**, Ինքնության ազգային չափումը (նախնական դատողություններ), «Ինքնության հարցեր», Երևան, 2002, էջ 11-31:

<sup>3</sup> Մեջբերենք ամսագրի «Խրախոյս, քաջալերութիւն, բարեմաղթութիւն» խորագրի ներքո նամակներից մի հատված. «Ուղիղ խոստովանեմ, ես զարմանում եմ Ձեր խիզախ ձեռնարկութեան վերայ, բայց «սահմանք քաջաց զենն իւրեանց», որ սկսել էք, ճակատը բաց առաջ գնացէք: Ի սրտե շնորհաւորում եմ Ձեր կարևոր գործը. Մեղրաք Մանդինեան», «Գեղարուեստ», 1908, № 1, էջ 117:

բերականի մեջ արվեստը, մշակույթը նման համակողմանիությամբ ընթերցողին չէին ներկայացվել: 1908-1921 թթ. հրատարակվել է «Գեղարուեստի» յոթ համար, որոնցից յուրաքանչյուրը հայ մշակութային ինքնության փոքրիկ հանրագիտարան է: Հոդվածում կսահմանափակվենք «Գեղարուեստի պատմականը» բաժնի ուսումնասիրությամբ, քանի որ պատմության մշակութային շերտերը արդեն իսկ ինքնության ուշագրավ բացահայտումների առիթներ են ընձեռում:

### 1. Հայ մշակույթի պատմությունը «Գեղարուեստ» ամսագրում

Իրավացի է ինքնության հայտնի տեսաբան Մ. Գիբերնաուն, երբ գրում է. «Անտիկ դարաշրջանն ընդգծում է ինքնության ամենաառանցքային հատկանիշներից մեկը՝ *շարունակականությունը*, որը նպաստում է հավաքական «ես»-ի պահպանմանը» (ընդգծ. մերն է – Դ. Պ.)<sup>4</sup>:

20-րդ դարասկզբին հայության հավաքական «ես»-ի վերահաստատման պահանջը դարձյալ առաջնային խնդիր էր: Ներկան իմաստավորելու համար նախ պետք էր հետ նայել՝ դեպի ազգային մշակույթի պատմության խորքերը: Լսարանի հետ հաղորդակցության լավագույն հարթակն այդ տարիներին մամուլն էր, մասնավորապես՝ մշակութային պարբերականները: «Հանդէս ամսօրեայ»-ի հոդվածները գրաբարի, միջին հայերենի համակողմանի ուսումնասիրությամբ վեր էին հանում հայոց լեզվի զարգացման պատմական ճանապարհը, «Ազգագրական հանդէսը» մատուցում էր հայ ժողովրդի տար-

---

<sup>4</sup> Guibernau M., Anthony D., Smith on Nations and National Identity: A Critical Assessment, Nations and Nationalism, 10 (1/2), 2004, p. 136.

բեր հատվածների կյանքի, կենցաղի պատմությանն առնչվող բանահյուսական ինքնատիպ նմուշներ, «Մեհեանն» ու «Նաւասարդը» հայոց հեթանոսական անցյալի աշխարհագրագոյությունն էին փոխանցում ընթերցողին:

Այս համապատկերում պետք է դիտարկել նաև «Գեղարուեստի պատմականը» բաժինը: Գ. Լևոնյանը հստակեցնում է խնդիրը. ո՞րն է հայոց գեղարվեստի պատմության ներածությունը գրելու գլխավոր դրդապատճառը. «...Մեր արդի իրականութեան մէջ նկատուող մտաւոր-կուլտուրական վերածնունդը, նրա գեղեցիկ արշալոյսը, որ կարմրին է տալիս մեր մինչայժմեան մռայլ հորիզոնում, որ մենք սկսել ենք մեզ հասկանալ, մեզ գնահատել ու **ազգային ինքնաճանաչութեան**<sup>5</sup> գիտակցումին հասնել...»<sup>6</sup> (ընդգծ. մերն է – Դ. Պ.): Այդ ինքնաճանաչողությունը սկսվում է պատմությունից. «Որովհետեւ մի ազգի գեղարուեստը, գիտութիւնը, գրականութիւնը չի կարող նրա պատմութիւնից, քաղաքական ու այլ խոշոր դէպքերից բոլորովին անկախ լինել, ու ինքն էլ այդ պատմութեանն է ձուլւում, նրա մի մասը կազմում...»<sup>7</sup>:

Շայ մշակույթի պատմության մէջ ձևավորվել է մեր **ազգային ինքնության նախնական մանրակերտը**<sup>8</sup>, ի դեմս նրա պատմության, առասպելների, լեզվի, կրոնի, քաղաքական ու օրենսդրական գործընթացների և այլն: Այդ պատճառով «Գեղարուեստի պատմականը» բաժնի հոդվածներում հեղինակ-

---

<sup>5</sup> «Ինքնություն» եզրույթը գիտական շրջանառության մէջ է դրվել 20-րդ դարի երկրորդ կեսին: Գ. Լևոնյանի օգտագործած «ազգային ինքնաճանաչութիւն» և մի շարք այլ հասկացություններ ինքնության կարևոր բաղադրիչներն են:

<sup>6</sup> Գ. Լ., Ներածութիւն հայոց գեղարուեստի պատմութեան, «Գեղարուեստ», 1913, № 5, էջ 32:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 34:

ները յուրովի են գնահատում ազգային պատմության դերը մշակութային ինքնության համատեքստում: Առանձնացնենք նրանցից երկուսի կարծիքները, որոնցից մեկը դրսի հայացք է, մյուսը՝ ներսի:

Իր «Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչութեան» հոդվածի ներածության մեջ մատնանշելով հայ գեղարվեստի պատմությանը նվիրված հետազոտությունների խիստ սակավությունը՝ Գ. Լևոնյանը մեջբերում է ռուս հայտնի գեղարվեստագետ Վ. Ստասովի հետևյալ նկատառումը. «Պարոն, դուք՝ հայերդ, շատ անտարբեր էք դեպի ձեր պատմական թանկագին յիշատակարանները. գեղարուեստի, երաժշտութեան պատմութիւններ են լոյս տեսնում, և ո՛չ մի խոսք հայոց մասին, որովհետեւ ոչինչ չըկայ հրապարակի վրայ մասնագիտօրէն քննած, լուսաբանած: [...] Մենք՝ օտարներս, համեմատաբար շատ աւելի բան գիտենք ձեր գեղարուեստի մասին, քան դուք...»<sup>8</sup>: Թե՛ Լևոնյանը և թե՛ մյուս հոդվածագիրները «Գեղարուեստի» էջերում տարբեր առիթներով հաստատում են այս իրողությունը, նաև մատնանշում սեփական ուժերով առկա իրավիճակը շտկելու ուղիներ: Ուշագրավ է հատկապէս Թ. Թորամանյանի պատկերավոր ձևակերպումը. «...Վերջապէս հայ ճարտարապետութեան և գեղարուեստի ուսումնասիրութիւնը եւրոպական գիտնականներին ուսումնասիրութեան նիւթ է դարձեր. ասկէ ետքը դժուար թէ կրուողներ գէնքերնին վար դնեն, եթէ մենք կարողանանք անընդհատ ռազմամթերք հասցնել հայ գեղարուեստի անհատնում շտեմարանէն, որուն հետևանքով քիչ ատենէն հայ ճարտարապետութեան պատմու-

---

<sup>8</sup> Գ. Լ., Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչութեան(փորձ ուսումնասիրութեան), «Գեղարուեստ», 1908, № 1, էջ 25:

թիւնն ալ իր պատուաւոր տեղը պիտի բռնէ ուրիշ ազգաց արուեստներու պատմութեան մէջ»<sup>9</sup>:

Դրսի և ներսի հայացքների այս **համադրության մեջ** հարկ է փնտրել այն դրդապատճառները, որոնք մղեցին Գ. Լևոնյանին ամսագրում առանձին բաժին տրամադրելու հայ գեղարվեստի պատմությանը: Հրատարակված յոթ համարներում ուշագրավ ուսումնասիրություններ կան մեր պատմության հին և միջին շրջանների, մասնավորապես՝ հայոց արքունական ու իշխանական ապարանքների ներքին կենցաղի (Թ. Թորամանյան), Արշակունի թագավորների օրոք գործածված դրամների (Ատրպետ), միջնադարյան ոսկերչական արվեստի (Գ. Հովսեփյան), մշակույթի ասպարեզում հայ-վրացական փոխառնչությունների (Լ. Մելիքսեթ-Բեկ) և այլ խնդիրների մասին: Իսկ բաժնի առավել ծավալուն մասը կազմում են Գ. Լևոնյանի երկու մեծ՝ «Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչութեան» և «Ներածութիւն հայոց գեղարուեստի պատմութեան» հոդվածաշարերը, որոնք հատվածաբար տպագրվել են ամսագրի տարբեր համարներում:

## **2. Հայ մշակութային ինքնությունը պատմության հոլովույթում**

Ամսագրի առաջին իսկ համարից հոդվածագիրներն այս բաժնում որդեգրում են ինքնության որոնումների շարունակական մի գործընթաց, որի արդյունքները փորձել ենք ի մի բերել հայ գեղարվեստի պատմության տարածական ու ժամանակային կտրվածքով:

---

<sup>9</sup> **Լևոնյան Գ.**, Ներածութիւն հայոց գեղարուեստի պատմութեան, «Գեղարուեստ», 1917, № 6, էջ 32:

## Ա) Ինքնությունը հայ գեղարվեստի պատմության տարածական չափումներում

Տարածությունը գեղարվեստի դրսևորման, նրա ընկալման հիմնական միջոցներից մեկն է: Հնարավոր չէ պատկերացնել մասնավորապես ճարտարապետությունը, նկարչությունը, քանդակագործությունը առանց այն հնարավորությունների, որոնք բացահայտվում են արվեստագետի հոգում տարածության շնորհիվ: Ընդ որում՝ արվեստում այն դառնում է գեղարվեստական տարածություն: Վերջինս ստեղծագործությանը հաղորդում է «որոշակի ներքին միասնություն և ավարտունություն, ինչն էլ ապահովում է նրա՝ որպես գեղագիտական երևույթի գոյությունը»<sup>10</sup>:

«Գեղարուեստի» հոդվածագիրները առանձնակի ուշադրությամբ են անդրադառնում հայոց պատմական տարածությունն արժևորող հուշարձաններին: Այս առումով ուշագրավ բացահայտումների ենք հանդիպում Թորոս Թորամանյանի «Հայաստանի արքունական ու իշխանական ապարանքները եւ անոնց ներքին կենցաղը» հոդվածում: Հայոց հին ճարտարապետական կառույցների մասին նրա հետազոտությունները, որոնք հայտնություն էին եվրոպացի արվեստագետների համար, ստիպում էին նորովի իմաստավորել հայ մշակութային ինքնության չբացահայտված շերտերը: Թորամանյանի հոդվածն ունի կարևոր մի առանձնահատկություն. այնտեղ այդ ինքնության բաղադրատարրերը ի հայտ են գալիս **հայկական ճարտարապետական կառույցների** (եկեղեցիներ, պալատներ, տաճարներ, խորաններ, հրապարակներ, հանդիսասարահ-

---

<sup>10</sup> Տե՛ս «Художественное пространство», [https://studme.org/37376/etika\\_i\\_estetika/hudozhestvennoe\\_prostranstvo#778](https://studme.org/37376/etika_i_estetika/hudozhestvennoe_prostranstvo#778)

ներ և այլն) և նրանց բեկորների **մանրակրկիտ վերլուծություններում**: Դրանք ի մի բերելով՝ հեղինակն ստեղծում է պատմական տարածության **համահավաք մի «տեքստ»**, որում բացվում են հայ ստեղծագործ հանճարի մտքի և հոգու գանձարանները: Հատկապես Անիի ավերակներին և այնտեղ կատարված պեղումներին նվիրված էջերում որքան կորստյան ցավ, նույնքան էլ հպարտության անթաքույց տողեր կան: Տարածության արհեստավարժ կառուցապատման գործում մեր նախնիների տաղանդն այնքան մեծ է ու ինքնատիպ, որ համաշխարհային մշակույթի մեջ հայկական ինքնության կնիքը հաստատում են նաև օտարազգի գիտնականները. «Անիի ճարտարապետական գոհարները այնպիսի հետաքրքրություն զարթեցուցին և այնպիսի հրապույր ստեղծեցին իրենց շուրջը,-գրում է Թորամանյանը,-որ երբեմն Հայ ցեղը հոթենթոտներու հետ համեմատող գիտնականներ ակամայ խոնարհեցան անոր իրական արժանավորութիւններու առջև և մեկը աշխարհահռչակ գիտնականներէն վերջապէս խոստովանեցաւ անոր ինքնուրոյն զարգացումը հայ ցեղի սեփական դրոշմի ներքև»<sup>11</sup>:

Տարածական արվեստներից հաջորդը՝ նկարչությունը, նույնպես գտնվում է «Գեղարուեստի» հեղինակների ուշադրության կենտրոնում: Ամսագրի առաջին իսկ համարից ընթերցողին է ներկայացվում Գ. Լևոնյանի «Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչութեան» հոդվածաշարը, որտեղ թեմատիկ նախընտրությամբ ու ժամանակագրական սկզբունքով հեղինակը բացահայտում է այս ասպարեզում մեր նախնիների գե-

---

<sup>11</sup> **Թորամանյան Թ.**, Հայաստանի արքունական ու իշխանական ապարանքները եւ անոնց ներքին կենցաղը, «Գեղարուեստ», 1917, № 6, էջ 78-79:

դարվեստական որոնումների հետքերը: Նրան առանձնապես գրավում է **հայ մանրանկարչությունը**:

Ինքնության իմաստասիրական-գեղագիտական ընկալումների մեջ, ինչպես արդեն նշել ենք, տեսաբանները նույնքան կարևորում են նրա հակադիր բևեռը՝ այլությունը, և ինքնություն-այլություն փոխակերպումների շարունակականությունը: Գ. Լևոնյանի ուսումնասիրությունն այս համատեքստում հետաքրքիր դրսևորումներ ունի: Նրա կարծիքով հայ մանրանկարչության մեջ սկզբնական շրջանում մեծ է օտար տարրերի ազդեցությունը (**այլություն**): Հետագայում՝ հատկապես 12-րդ դարից հետո, ստեղծվում է «ինքնուրոյն, բուն հայկական ոճը»՝ ձևավորելով «հայ մանրանկարչութեան փառաւոր շրջանը»<sup>12</sup> (**ինքնություն**): Հետագոտության մեջ հեղինակը նկատում է ինքնության **մշակութային ինվերսիայի (շրջումի)**՝ հայ մանրանկարչության դպրոցին բնորոշ ուշագրավ մի օրինակափություն: Համեմատելով Մեծ Հայաստանի և Կիլիկիայի մանրանկարչական դպրոցների նմուշները՝ նա եզրակացնում է. «Մեծ Հայաստանում մանրանկարչութեան արուեստը սկզբնական տարիներում միայն օտար ազդեցութեան տակ լինելով՝ յետագայում ինքնուրոյն, անկախ գոյն ստացաւ(այլություն-ինքնություն – Դ. Պ.), այստեղ, Կիլիկիայում, սկզբում ինքնուրոյն և անկախ լինելով, հետզհետէ տարւում է օտար հովերով ու ընկնում հարևան ազգերի ուժեղ ազդեցութեան տակ (ինքնություն-այլություն – Դ. Պ.)»<sup>13</sup>: Ինքնության այլա-

---

<sup>12</sup> Գ. Լ., Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչութեան, «Գեղարուեստ», 1909, № 3, էջ 25:

<sup>13</sup> Գ. Լ., Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչութեան, «Գեղարուեստ», 1911, № 4, էջ 28:

փոխման դրսևորումներից մեկն է սա, որ բնորոշ էր հայ մշակույթի զարգացման միջնադարյան շրջանին:

Այս հոդվածաշարում Լևոնյանին հետաքրքրում է մի կարևոր խնդիր ևս. որտե՞նք են այն ինքնատիպ պատկերները, գծերը, որոնք ազգային շունչ են հաղորդում մանրանկարներին: Նա առանձնացնում է հետևյալ բաղադրատարրերը՝ ա) գործող անձերի դեմքերը «ճիշտ հայկական են», բ) հյուսվածքներն ու ծաղկազարդերը աչքի են ընկնում «հարազատ կոլորիտով ու գունավորութամբ», գ) բուսական, կենդանական զարդանկարները հիացնում են նուրբ կատարումներով: Մրանք իրողություններ են, որոնք հավաստում են հայ մանրանկարչության նոր որակը համաշխարհային արվեստի մեջ: Այս ամենով հանդերձ, հեղինակը համոզված է. հայ մշակութային ինքնության լավագույն մարմնավորումը «զուտ հայկական, մանրանկարչութեան թէ այլ օրնամենտի մեջ, այդ **խաչն է**, քրիստոնեության գեղեցիկ էմբլեմը, -խաչ իր հորիզոնական կարճ թևերով, ինչ որ ուրիշ ազգերի մեջ չը կայ»<sup>14</sup> (ընդգծ. մերն է – *Ղ. Պ.*):

Տարածական արվեստի այս և մյուս տեսակները (ֆրեսկոներ, պատկերագրություն, ոսկերչական արվեստ և այլն) 20-րդ դարասկզբին բացում էին հայ մշակութային ինքնության նոր պատկերը, որոնց գիտական հետազոտության գործում «Գեղարուեստի» ներդրումն ակնհայտ էր:

### **Բ) Ինքնությունը հայ մշակույթի պատմության խորապատկերում**

«Գեղարուեստի պատմականը» բաժնում գեղագիտական իմաստավորման նոր շերտեր են բացահայտվում ազգային

---

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 29:

երաժշտության պատմությանը նվիրված էջերում: Հեղինակը դարձյալ Գ. Լևոնյանն է, որի՝ երաժշտությանը նվիրված պատմաքննական ակնարկը զետեղված է «Ներածութիւն հայոց գեղարուեստի պատմութեան» հոդվածաշարում:

Տեսական գրականության մեջ շատ է գրվել երաժշտության ու ժամանակի խորքային առնչությունների մասին: Իրենց տարաբնույթ մոտեցումներով հանդերձ՝ տեսաբանները մի հարցում համամիտ են. «Երաժշտությունն արվեստի այն տեսակն է, որ ամենասերտ կերպով կապված է ժամանակի հետ, քանի որ նրա բուն էությունը շարժման մեջ է»<sup>15</sup>: Ինչ խոսք, արվեստի յուրաքանչյուր ստեղծագործության բնորոշ է տարածաժամանակային ընկալման սկզբունքը: Բայց և այնպես տարածական արվեստների ու երաժշտության համեմատական քննությունը ի հայտ է բերում նրանց մեջ տարածության և ժամանակի մեկնության ուշագրավ մի նրբություն, այն է՝ նկարչության, ճարտարապետության, քանդակագործության մեջ **գերիշխում է տարածությունը**, ժամանակի ուղեկցությամբ, իսկ երաժշտության մեջ **առաջնայինը ժամանակն է** տարածության, ավելի կոնկրետ՝ հոգևոր տարածության ուղեկցությամբ:

Այս համատեքստում փորձել ենք դիտարկել Գ. Լևոնյանի՝ հայ երաժշտությանը նվիրված պատմաքննական ակնարկում մշակութային ինքնության դրսևորումները: Նրա հոդվածաշարում ազգային երաժշտության անցած ճանապարհը քննության է առնվում երկու ուղղությամբ՝ **աշխարհիկ և եկեղեցական երաժշտություն**: Սրանցից յուրաքանչյուրն իր ուրույն

---

<sup>15</sup> **Бахтязина Д. И.**, Время в музыке, “Вестник Омского университета”, 2009, № 4, с. 30.

ներդրումն ունի հայ մշակութային ինքնության կայացման գործում:

Աշխարհիկ երաժշտությունն ավելի հին է. «Աշխարհիկ երգերը, եղանակները դեռ հեթանոսական դարերից սիրելի են մնացել ժողովրդին, ազնուականներին ու պալատականներին»<sup>16</sup>: Այս երգերի ժողովրդական բնույթը, հարևան ազգերի հետ անմիջական շփումների արդյունքում կրած ազդեցությունները մղում են մեզ ենթադրելու, որ հայ աշխարհիկ երաժշտությանը թերևս առավել բնորոշ է **ինքնության հարափոփոխությունը**՝ ինքնություն-այլություն, այլություն-ինքնություն փոխատեղումներով: Պատմական այս ընթացքի դրսևորումներն են նաև, ըստ Գ. Լևոնյանի, աշխարհիկ երաժշտության երեք հիմնական ճյուղերը՝ ա) բարձր սալոնական, բ) միջին աշուղական, գ) ստորին ժողովրդական-ռամկական երաժշտություն<sup>17</sup>: Հեղինակի կարծիքով՝ առաջին և երկրորդ տեսակներին բնութագրական են փոխառությունները (այլություն): Սրանց հակառակ՝ «Երրորդ տեսակի եղանակները, որոնց հեղինակներն անյայտ են, իրենց երգերի հետ ամենփյց աւելի ինքնուրոյն են և հարազատ, ստեղծուելով պարզ, անարուեստ, դաշտերում ու լեռներում»<sup>18</sup>: Այս նյութերի հղկման, մաքրման ու նոտագրման գործին է նվիրվել հանճարեղ Կոմիտասը՝ դրանք այնուհետև ներկայացնելով նաև եվրոպական բեմերում:

Աշխարհիկի համեմատությամբ եկեղեցական երաժշտությունը **պահպանողական է**: Այն ձևավորվել է հայ քրիստոնեա-

---

<sup>16</sup> Գ. Լ., Ներածութիւն հայոց գեղարուեստի պատմութեան, «Գեղարուեստ», 1913, № 5, էջ 53:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 54:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 55:

կան եկեղեցու դավանաբանական արժևորմանը զուգընթաց: Եվ բնական է, որ հայոց լուսավորչական եկեղեցին պիտի ստեղծեր սեփական ինքնուրույն երաժշտություն՝ հայկական խազերով՝ ձայնանիշներով, որ դարերի ընթացքում քիչ է ենթարկվել ազդեցությունների: Ուշագրավ է, որ Աստու միաբնակության մասին հայ եկեղեցու դավանաբանական սկզբունքը անմիջական արտահայտություն է գտել նաև եկեղեցական երաժշտության մեջ: Հենց այդ սկզբունքից էլնելով՝ հայոց եկեղեցին մերժում էր բազմաձայն երգեցողությունը՝ պատճառաբանելով. «Աստուած մէկ է, [...] ուրեմն պէտք է միաձայն երգենք»<sup>19</sup>:

Կրոնական ինքնության մեջ առկա այս կարծրացումը 19-րդ դարավերջին **Ճեղք սվեց**. Մ. Եկմայանի, Ք. Կարա-Մուրզայի եռաձայն, քառաձայն երաժշտական ստեղծագործությունները նոր որակ հաղորդեցին հայ հոգևոր երաժշտությանը՝ այս ոլորտում նույնպես հարստացնելով մեր մշակութային ինքնությունը:

Հայ գեղարվեստի պատմության համատեքստում գրված Գ. Լևոնյանի հետազոտությունը ազգային երաժշտության մեկնության առաջին ինքնատիպ փորձերից է, որ փաստագրական արժեքավոր նյութ էր նաև հայ մշակութային ինքնության մի շարք կողմեր բացահայտելու տեսանկյունից:

### **Ամփոփենք:**

«Գեղարուեստ» հանդեսը մշակութային ինքնության ազգային շերտերն ի մի բերող լավագույն պարբերականներից մեկն է 20-րդ դարասկզբի արևելահայ իրականության մեջ: Ամ-

---

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 61:

սագրի «Գեղարուեստի պատմականը» բաժինը հետազոտության լայն հնարավորությունների հարթակ է՝ իմաստավորելու հայ մշակույթը պատմական տարածության և ժամանակի համատեքստում:

Տարածական արվեստներին նվիրված հոդվածներում հայ մշակութային ինքնության բաղադրատարրերը բացահայտվում են պատմական հուշարձանների, ճարտարապետական կառույցների ոգեղեն համակցության մեջ, միջնադարյան մանրանկարների գունային և պատկերային նուրբ կատարումներում («ճիշտ հայկական դեմքեր», ազգային կոլորիտ, հայկական խաչ՝ իր կարճ հորիզոնական թևերով» և այլն): Հիշյալ արվեստների ինքնութենական շերտերը վեր հանող դիտարկումներում առանձնակի դեր ունեն նաև ինքնություն-այլություն փոխակերպումները:

Հայ մշակութային ինքնության ուժեղ ազդակներից մեկն ազգային երաժշտությունն է, նրա պատմության արժևորումը ժամանակի չափումներում: Այդ երաժշտության աշխարհիկ ու եկեղեցական թևերը մի դեպքում՝ իրենց հարափոփոխ ընթացքով, մյուս դեպքում՝ պահպանողական ուղղվածությամբ յուրովի են իմաստավորվում «Գեղարուեստ» հանդեսում՝ նոր ժամանակների պահանջներին համընթաց:

2020 թ.

**ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ  
ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

**Մուտք**

Ազգի քաղաքակրթական մակարդակը սովորաբար պայմանավորվում է նրա մշակութային անցյալով ու ներկայով: Համալսարանը՝ իբրև մշակույթի, գիտության և կրթության կենտրոն, այս համատեքստում բնութագրվում է սեփական «ինքնավարությամբ, ակադեմիական ազատությամբ, գիտական հետազոտություններով ու կրթության միասնականությամբ»<sup>1</sup>: Սրանք արժեքներ են, որոնք ավանդաբար հատկանշական են եղել համալսարանական կյանքին:

Դարերով քրիստոնեական և աշխարհիկ մշակույթ կերտած հայ մտավորական ընտրախավը XX դարասկզբին՝ Հայաստանի առաջին հանրապետության օրոք, ձեռնամուխ է լինում հայոց համալսարան հիմնադրելու գաղափարի իրագործմանը: Ազգային կրթության և գիտության նոր ճանապարհի առաջին քայլերն արվում էին երկրի սոցիալ-տնտեսական ծանր շրջանում, երբ ազգի գոյատևումն ինքնին առաջնային խնդիր էր:

Հոդվածի նպատակն է Առաջին հանրապետության մամուլի հրապարակումների հենքի վրա քննել հայոց համալսարանի քաղաքակրթական արժևորմանն առնչվող մի շարք հարցեր, որոնց շուրջ ծավալված քննարկումների արդյունքում

---

<sup>1</sup> Տե՛ս **Фролова Е. В.**, Академические ценности современного университета: социально-философский анализ, Автореферат, М. 2011, **Арнольд А. И.**, Путь к храму культуры: образование как социокультурный феномен, М. 2000, **Бим-Бад Б. М.**, Что такое университет, <http://www.bim-bad.reability.ru> և ուրիշներ:

իրականություն է դառնում պետականություն ձեռք բերած հայության դարավոր երազանքներից մեկը:

\* \* \*

Առաջին հանրապետության դժվարին տարիներին մամուլը հաճախ չի անդրադառնում համալսարանի ստեղծման խնդիրներին: Բայց այն ամենը, ինչ տպագրվել է, ուշագրավ դիտարկումների առիթ է տալիս<sup>2</sup>: Եվ հատկապես՝ երբ խնդիրը քննում ենք համալսարանի արժևորմամբ երկրում քաղաքակրթական միջավայր ստեղծելու դիտանկյունից: Հրապարակումների զգալի մասում համալսարանի հիմնադրումը պայմանավորվում է երկու կարևոր գործոնով՝

Ա) Համալսարանը՝ իբրև ճանապարհ դեպի առաջադեմ ազգերի քաղաքակրթական ընտանիք,

Բ) Համալսարանը՝ ներհայաստանյան քաղաքակրթական միջավայրի ստեղծման երաշխավոր:

Հեղինակների կողմից խնդիրը հիմնավորվում է տարբեր հայեցակետերով:

### **1. Համալսարանը՝ Հայաստան-արտաքին աշխարհի փոխհարաբերությունների համատեքստում**

Մամուլում համալսարանի հիմնադրման մասին տարբեր քննարկումներում տարաձայնություններ ունեցող իշխանա-

---

<sup>2</sup> Խնդիրը քննարկման առարկա է դառնում 1919 թ. մայիսի 16-ին համալսարանի հիմնադրման մասին կառավարության որոշումից հետո, ՀՅԴ և Հայ ժողովրդական կուսակցությունների պարբերականներում («Աշխատանք», «Յառաջ», «Ժողովուրդ»): Համալսարանի բացման առիթով 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում տպագրվում է «Հայաստանի համալսարան» մեկօրյա թերթը՝ «իբր հավերժացման նշան նույն համալսարանի», որտեղ զետեղված են այդ օրերին համալսարանին ուղղված ողջույնի խոսքերն ու շնորհավորանքները:

մետ և ընդդիմադիր կողմերը համամիտ էին մի հարցում. «Ամեն ժողովուրդ գնահատում են նրա մտաւոր կեանքով, իսկ մտաւոր կեանքը արտայայտում է նրա կրթական հիմնարկութիւններով, նրա ժրաջանութեամբ, նրա գիտական աշխատանքներով»<sup>3</sup>:

Խնդրի կարևորությունն այս մակարդակում հիմնավորում էին առաջին հերթին համալսարանի կազմակերպիչները: Եվ ոչ միայն նրանք: Այդ ժամանակ Թիֆլիսում դեռևս գործող Անդրկովկասյան համալսարանի հայ ուսանողները, հանդիպելով Հայաստանի համալսարանի ռեկտոր Յու. Ղամբարյանի և նրա գործընկերների հետ, նշել էին, որ կգան Երեւան, եթե նորաբաց համալսարանը «վայելի միջազգային վստահություն և որոշ հարաբերության մեջ լինի ռուսական և եվրոպական համալսարանների հետ»<sup>4</sup>:

Սեփական քաղաքակրթական միջավայրը արտաքին աշխարհի հետ հարաբերակցելու փաստարկումները ավելի հաճախ սկսում են հնչել հատկապես Հայաստանի համալսարանի բացման օրերին: Հատկանշական են այս առումով ինչպես հայ պետական-մշակութային և կրոնական գործիչների (Ն. Աղբալյան, Ե. Տեր-Մինասյան, Մեսրոպ և Գարեգին եպիսկոպոսներ և այլք), այնպես էլ օտարերկրյա դեսպանների շնորհավորանքի խոսքերում հնչած ուղերձները:

Համալսարանի պատմալեզվագիտական ֆակուլտետի դեկան Մեսրոպ եպիսկոպոսը, իր խոսքում վերհիշելով մարդկության սեփականությունը դարձած երկու «աննման առաս-

---

<sup>3</sup> **Քաղաքացի**, Արդեօ՞ք համալսարանի ժամանակ է Հայաստանում, «Ժողովուրդ», օրաթերթ, 24 օգոստոսի 1919, N 94:

<sup>4</sup> «Երևանի համալսարան, 1918-1920 թթ., վավերագրերի ժողովածու», Եր. համալս. հրատ., Եր., 1995, էջ 94:

պել»<sup>5</sup>, վերստին հաստատում է աստվածաշնչյան ասքը, այն է՝ անհիշելի ժամանակներից Հայաստանը համաշխարհային քաղաքակրթության բնօրրանն է եղել: Նա հայոց համալսարանը համարում է «**լուստ լապտեր**», որ կրկին մերձեցնում է մեզ եվրոպական քաղաքակրթությանը և մեր երկրում վերականգնում «**նախնական պարտեզի** այն երջանկութիւնը, որից գրկւել էինք, և որտեղ կամենում ենք դարձեալ վերադառնալ»<sup>6</sup> (ընդգծ. մերն է-Դ. Պ.): Մետրոպ եպիսկոպոսի ուղերձում կիրառված հասկապես երկու եզրույթների՝ «լուստ լապտերի» և «պարտեզի» միջակային, արքետիպային իմաստները տարբեր առիթներով ուսումնասիրվել են մշակութաբանների կողմից<sup>7</sup>: «**Պարտեզը**», «**այգին**»՝ իբրև մշակված հասարակական տարածք («**ածու**»), հիշատակում է նաև Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ («Թեպետ և եմք **ածու** փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ...»<sup>8</sup> (ընդգծ. մերն է-Դ. Պ.): Ի դեմս հա-

<sup>5</sup> «Հայաստանի լեռների բարձունքներից բխող չորս գետերի ակունքներին է Աստուած տնկել բարիքներով լի այն սքանչելի պարտեզը, որի մեջ երջանիկ կեանքով ապրում էր առաջին գոյգ մարդը: Երկրորդ առասպելն է. Ջրհեղեղի համատարած կործանման ժամանակ Արարատ լեռան զագաթին փրկւեց այն երկրորդ գոյգը, որ նոր մարդկութեան նախահայր դարձաւ», «Հայաստանի համալսարան», 31 հունվարի 1920 թ., Ալեքսանդրապոլ:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Պարտեզի արքետիպի մասին տե՛ս մասնավորապես՝ **Лихачев Д. С.** Поэзия садов, СПб. 1991, **Корона В. Б.** Поэтическое творчество как активация архетипических структур сознания, в кн. «Архетипические структуры художественного сознания», Екатеринбург, 2001, с. 30-33, **Зубкова Н. Н.** Архетип сада в русской литературе XIX-начала XX вв. как символическое воплощение исторических судьб России, <http://rae.ru/forum2012/18/2961>, **Պետրոսյան Հ.**, «Հայաստան-դրախտ կորուսյալ». հայ ինքնության մի հարացույցի ձևավորման ակունքները, «Ինքնության հարցեր», Տարեգիրք, Ե., 2002 և այլք:

<sup>8</sup> Տե՛ս **Ստեփանյան Ա.**, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, Գիրք Ա, Արտաշիսյան դարաշրջան, Ե., «Սարգիս Խաչենց. Փրինսիփո», 2012, էջ 62-63:

մալսարանի՝ Մեսրոպ եպիսկոպոսը կանխատեսում է ապագայում մշակվելիք հոգևոր տարածքի տեսլականը, որի շնորհիվ արժանի տեղ կհասկացվի հային քաղաքակիրթ ազգերի ընտանիքում:

«**Լուստ լապտերին**» հումանիշ եզրույթներ իրենց հողվածներում և շնորհավորանքներում օգտագործում են նաև համալսարանի հիմնադրմանն անդրադարձող մյուս հեղինակները՝ լուստ ջահ, լուսավոր ջահ (Իս. Տեր-Ներսիսյան), «այն ջահը, որ մենք վառում ենք» (Ն. Աղբալյան), լուսատու ջահ (Գեւորգ Ե Կաթողիկոս), գիտության ջահ (Մայիլյան եղբայրներ), լուսավոր փարոս (Ա. Սահակյան) եւ այլն: «**Ջահը**» միֆոլոգիական բառարաններում բնութագրվում է հետևյալ կերպ. «...մարմնավորում է կյանքը, կյանքի հուրը, որտեղ կրակն ինքնին առնական սիմվոլիկա ունի... Այն աստվածային արական սկիզբն է, որ ծնունդ է առնում կանացի սկիզբը խորհրդանշող ծառից: Հոգի-կրակը միահյուսված է ծառ-մատերիային, այստեղից էլ՝ պտղավորող հոգևոր կրակի, ներշնչանքի, բանականության, անմահության սիմվոլիկան...»<sup>9</sup>: Թերևս այս համատեքստում կարելի է մեկնաբանել նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ծոցում ծնվող «լույսի ջահի»՝ համալսարանի քաղաքակրթական խորհրդանիշը:

Հայաստանի համալսարան-արտաքին աշխարհ փոխհարաբերությունների ծիրում ուշագրավ ուղերձներ կան նաև համալսարանի հիմնադրման առթիվ Հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանի ելույթում: Նա ոչ միայն հավատում է համալսարանի ապագային («Այն ջահը, որ մենք վառում ենք

---

<sup>9</sup> **Дж.Купер**, Энциклопедия символов, [http://ml.volny.edu/dic.html?act=view\\_rec&id=940&t2=%D0%A4%D0%B0%D0%BA%D0%B5%D0%BB&p2=mith\\_t](http://ml.volny.edu/dic.html?act=view_rec&id=940&t2=%D0%A4%D0%B0%D0%BA%D0%B5%D0%BB&p2=mith_t)

Հայաստանի բարձրասնդակի վրա, չի հանգչի և կլուսավորե Առաջաւոր Ասիան»), այլև լավագոյն պարգև է համարում Արեւմուտքի քաղաքակրթական նվաճումների հետ անմիջական հաղորդակցությունը. «Եթէ մենք կարողանանք այդ մեծ քաղաքակրթութեան մեր փոքրիկ մուրճը խփել, այդ իսկ պատիւ է մեզ: ...Կը գայ ժամանակ, երբ մենք էլ ընդունակ կլինենք մի քանի գաղափարներ արտաբերելու մարդկութեան համար, հայ ժողովուրդը ընդունակ է դրան»<sup>10</sup>: Աղբայրանն ըստ էության շեշտում է սերունդներով փոխանցված ազգային ինքնության ներուժը և համալսարանական միջավայրում նրա ինքնաբացահայտման նոր հնարավորությունները:

## **2. Համալսարանը՝ ներհայաստանյան քաղաքակրթական միջավայրի երաշխավոր**

Համալսարանի միջոցով մարդկության քաղաքակրթական ընտանիքում արժանի տեղ գրավելու ցանկությունները մամուլում հաճախ գուգակցվում էին **երկրի ներքին կյանքում քաղաքակրթական միջավայր ստեղծելու** հիմնավորումներին: Դրանք էլ, իրենց հերթին, չորս հիմնական ուղղություն ունեին.

Առաջին՝ **համալսարանը և ժողովրդավարության սկզբունքները**: Այդ սկզբունքները քաղաքակիրթ երկրներում համարվում էին (այժմ՝ նույնպէս) «ճշմարիտ լուսավորութեան» տարածման հիմնական գործոն: Առաջին ռեկտոր Յու. Ղամբարյանի կարծիքով՝ համալսարաններն անկատար են, եթէ նրանց հիմքում ընկած չեն «ազատութեան և դեմոկրատիայի» գաղափարները, և ժողովուրդն էլ մասնակցություն չունի

---

<sup>10</sup> Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացման արարողության նկարագրությունը, «Յառաջ», 5 փետրվարի 1920 թ., N 26:

իր կյանքի «կարգաւորման և ղեկաւարման գործին»: Այս համոզմունքն է նրան մղում եզրակացնելու, որ հայոց համալսարանը պետք է լինի «ազատ, աշխարհիկ և դեմոկրատիկ», որ «կոչված է մշակելու հավասարապէս **գիտութիւնը և առաքիւնութիւնը**, առանց որոնց դեմոկրատիան կամ խաբէութիւն կլինէր, կամ դատարկ հնչիւն»<sup>11</sup> (ընդգծ. մերն են - Դ. Պ.):

Երկրորդ՝ համալսարանի ստեղծումը՝ **մշակույթի, գիտութեան զարգացման գլխավոր նախապայման**<sup>12</sup>: Թերթերում լույս տեսած առանձին հրապարակումներում, ինչպէս նաև համալսարանին ուղղված շնորհավորանքի խոսքերում այս միտքը տարբեր ձևակերպումներով հաճախ է կրկնվում: Մասնավորապէս Ս. Խանոյանը համոզված է. «Նա (համալսարանը - Դ. Պ.) դառնալու է գիտութիւնների և արւեստների այն ծաղկեփունջը, որից, իբր նեկտար հաւաքող ժրաջան մեղուներ, Հայաստանի քաղաքացի երիտասարդն ու պատանին քաղելու են իրենց այնքան անհրաժեշտ գիտելիքները-մտքի նեկտարը»<sup>13</sup>:

Երրորդ՝ համալսարանը՝ նորաստեղծ հանրապետության **պետականաստեղծման կարևոր գործուն**: Համալսարանի հիմնադրման ջատագովներն առանձնակի նախանձախնդրու-

---

<sup>11</sup> **Ս. Խանոյան**, Գիտութեան կաճառը, «Հայաստանի համալսարան», 31 հունվարի 1920 թ., Ալեքսանդրապոլ:

<sup>12</sup> Ի դէպ, մեր օրերում համալսարանական տարածքի ուշագրավ վերլուծությունների հեղինակ է պրոֆ. Տ. Միսյանը, որն իր մի շարք հոդվածներում և «Երևանի պետական համալսարան. տարածության նշանագիտություն, մտավորական լանդշաֆտ, սոցիալական հիշողություն» գրքում ԵՊՀ մշակութային արտեֆակտները նկարագրում և քննում է՝ ելնելով նշանագիտական մեթոդի սկզբունքներից. տե՛ս **Симян Т.**, Ереванский государственный университет: семиотика пространства, интеллектуальный ландшафт, социальная память, Ер., Изд. ЕГУ, 2021, 102 с.

<sup>13</sup> **Ս. Խանոյան**, Գիտութեան կաճառը, «Հայաստանի համալսարան», 31 հունվարի 1920 թ., Ալեքսանդրապոլ:

թյամբ շեշտում են նաև այս իրողությունը: Դ. Խ. Զավրյանը, որ իր ակտիվ գործունեությամբ ( 1919 թ. նա Հայաստանի ժողովրդական լուսավորության մինիստրի ներկայացուցիչն էր Թիֆլիսում) մեծապես նպաստել է հայոց համալսարանի կայացմանը, մամուլում համալսարանի կարևորությունը կասկածի տակ դնողներին պատասխանում է. «Գիտությունը այնքան է յառաջադիմել, նա այն աստիճան պահանջ է դառել պետական և տնտեսական կեանքի բազմապիսի կարիքների համար, որ վաղաժամ համարել մեր երկրում գիտական գործունեության օջախի ստեղծումը՝ կը նշանակե մեր ապագայ կեանքի կարգաւորման գործում գիտութեան ծառայութիւնից հրաժարել»<sup>14</sup>:

Չորրորդ՝ համալսարանը՝ **հայության համախմբման, նրա միասնության խորհրդանիշ**: Այս միտքը՝ իբրև մաղթանք, ուղակիորեն թե անուղղակիորեն հաճախ է հնչում շնորավորանքի խոսքերում և ելույթներում: «Թող այս Գիտութեան Տաճարը համախմբի բոլոր հայերին հայրենիքի հանդէպ սիրով, գիտականօրէն դաստիարակի, հաշտեցնի և միաւորի ներկա սերունդների աշխարհայեցողութիւնը»<sup>15</sup>, - Յու. Ղամբարյանին ուղղված հեռագրում շեշտում է հայ խոշոր գործարանատեր Իլյա Մայիլյանը:

\*\*\*

1919 թ. մայիսի 16-ին՝ համալսարան ստեղծելու մասին դաշնակցական կառավարության որոշումից հետո, ընդդիմա-

---

<sup>14</sup> Դ. Զավրյան, Երևանի համալսարանի բացման հարցի առիթով, «Աշխատանք», 10 սեպտեմբերի 1919 թ., N 66:

<sup>15</sup> «Իլեա Մայիլեանի հեռագիրը համալսարանի տեսուչ Յուրի Ղամբարեանին համալսարանին մեկ միլիոն ռուբլի նւիրաբերելու մասին», «Երեւանի համալսարան», էջ 139:

դիր մամուլում հայտնվում են կարծիքներ, ըստ որոնց՝ իր գոյությունը մի կերպ պահող երկրի համար համալսարան բացելը մեծ շոյալություն է: «Ջարմանալին այն է,- գրում է Հայ ժողովրդական կուսակցության պաշտոնաթերթ «Ժողովուրդը»,- որ անխոհեմ ղեկավարները դեռ շարունակում են ժողովրդի գլխին և նրա հաշուով նոր-նոր փորձեր անել և այն էլ՝ թանգարժեք փորձեր: [...]Հայաստանի կառավարութիւնը որոշել է առաջիկայ ուսումնական տարւանից բաց անել մեր մայրաքաղաքում՝ Երեւանում, համալսարան»<sup>16</sup>: Իր թերահավատությունը հողվածագիրը փորձում է պատճառաբանել երկրում կրթական կյանքի կաթվածահար վիճակով. միջնակարգ դպրոցները հիմնականում փակված են, չկան համալսարանում դասավանդող հեղինակավոր գիտնականներ, դասագրքեր, գիտական գրադարան եւ այլն: Բարեբախտաբար, տարաձայնությունները հետագա ամիսներին չխորացան, իսկ արդեն 1920 թ. սկզբին՝ համալսարանի բացման օրերին, նույն «Ժողովուրդը» իր խմբագրականներից մեկում համալսարանի արժևորման հետ կապված բոլորովին այլ կարծիք է հայտնում. «Եւ զարմանալի չէ, որ Հայաստանի առաջին կօալիցիոն կառավարութեան մէջ մեր կուսակցութեան ներկայացուցիչները առաջինը բարձրացրին այդ հարցը եւ առաջինն էին, որ ռեալ և իրական հիմքերի վրայ դրին այդ խնդրի գործնական մասը»<sup>17</sup>: Նույն կուսակցության կողմից դրսևորված «բազմակարծության» այս օրինակը Առաջին հանրապետության քաղաքական կյանքի բնորոշ կողմերից մեկն է՝ երևույթ, որից անմասն

---

<sup>16</sup> **Քաղաքացի**, Արդեօ՞ք համալսարանի ժամանակն է Հայաստանում, «Ժողովուրդ», օրաթերթ, 24 օգոստոսի 1919 թ., N 94:

<sup>17</sup> «Հայկական համալսարանի բացումը», «Ժողովուրդ», 1 փետրվարի 1920 թ.:

չմնացին նաև հայոց համալսարանը և նրանով քաղաքակրթական նոր միջավայր կերտող մշակութային գործիչները:

### **Ամփոփում**

Հայոց համալսարանը 20-րդ դարասկզբին վերստին կյանքի կոչված հայոց պետականության լավագույն դրսևորումներից մեկն էր: Այն հիմնադրելու գաղափարը Առաջին հանրապետության մամուլում քննարկվում էր նախ և առաջ համալսարանի քաղաքակրթական արժևորման համատեքստում:

Հրապարակումների զգալի մասում համալսարանի ստեղծումը դիտարկվում է իբրև մեր ազգային դիմագծի հաստատման կարևոր քայլ քաղաքակիրթ մարդկության ընտանիքում: Ըստ այդմ մի դեպքում հիշատակվում են Աստվածաշնչից եկող և հայությանն առնչվող արքետիպային խորհրդանիշները, մյուս դեպքում՝ մեր ազգային ինքնության ներուժի և նրա բացահայտման նոր հնարավորությունները համալսարանի հոգեմտավոր տարածքում:

Հոդվածագիրները շեշտում են նաև ներհայաստանյան քաղաքակրթական միջավայրում համալսարանի գործունեության կարևորությունը՝ մատնանշելով չորս հիմնական ուղղություններ՝ ժողովրդավարության սկզբունքների հաստատում, մշակույթի և գիտության զարգացում, պետականաստեղծում, հայության համախմբում:

Սրանք իրողություններ են, որոնք վկայում են համալսարանի ստեղծման գործում հայ պետական-մշակութային այրերի իմաստնությունն ու հեռատեսությունը:

2018 թ.

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ

### Մուտք

Համալսարանը՝ իբրև գիտակրթական կենտրոն, հասարակության քաղաքակրթական ինքնության կարևորագույն քաղաքիչներից է: Նրա անհրաժեշտությունը տարբեր դարերում հիմնավորվել է՝ էլնելով տվյալ երկրում գիտության, կրթության և ընդհանրապես մշակույթի առաջնահերթություններից: Համալսարանը, մերօրյա տեսաբանի կարծիքով, «կոչված է բավարարելու նոր տիպի արհեստավարժների կարիք ունեցող հասարակության պահանջմունքները, մասնավորապես այնպիսի արհեստավարժ մտավորականների, որոնք քաղաքակրթական նոր արժեքների, գիտելիքների ու հմտությունների ձեռքբերմամբ ի վիճակի են դիմակայելու հասարակության ներսում ընթացող քայքայիչ գործընթացները»<sup>1</sup>:

Դեռևս միջին դարերից համալսարանի գոյության անհրաժեշտությունն ու նրա առաքելությունը գիտակցող հայ մտավորականությունը XIX դարում սկսեց նորովի արժևորել բարձրագույն կրթության կարևորությունը: Այս գաղափարի առաջին նվիրյալներն էին (1830-1840-ական թթ.) Դորպատի համալսարանի ուսանողներ Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանը, Խ. Ավագյանը, Գ. Ակիմյանը, Գ. Խատիսյանը և ուրիշներ<sup>2</sup>: 1860-1890-ական թվականներին Եվրոպա կրթության մեկնող հայ

---

<sup>1</sup> Տե՛ս **Латыш Н. И.**, *Идея университета в контексте современной цивилизации*, в кн. «Идея университета: парадоксы самоописания», [http://elib.bsu.by/bitstream/123456789/113858/1/идея%20универ\\_2002.pdf](http://elib.bsu.by/bitstream/123456789/113858/1/идея%20универ_2002.pdf)

<sup>2</sup> Տե՛ս **Տիգրանեան Լ.**, Գերմանական Դորպատ համալսարանը և նորա հայ ուսանողները 1830-1892 թթ., «Լուսնայ», 1903, N 5, էջ 5-33:

ուսանողները շարունակում էին նախապատվությունը տալ գերմանական համալսարաններին<sup>3</sup>:

Անդրկովկասում, մասնավորապես Թիֆլիսում համալսարան ունենալու գաղափարը արևելահայ պարբերականներում սկսում է քննարկվել 1860-ականներից: Հոդվածի նպատակն է քննության առնել այդ գաղափարի նախնական դրսևորումները, նրա կարևորությունը գիտակցելու և արժևորելու հիմնադրույթները արևելահայ մամուլում:

### **1. Գրիգոր Արծրունին և համալսարանի գաղափարը 1860-1870-ական թթ. արևելահայ մամուլում («Հայկական աշխարհ», «Մշակ»)**

19-րդ դարի երկրորդ կեսին եվրոպական համալսարաններում սովորող հայ երիտասարդների համար հայրենիքում սեփական համալսարան ունենալը երազանք էր, որի տեսլականը, թեև հեռավոր ու անիրականանալի, չէր լքում նրանց: Այդ երիտասարդներից մեկը Գրիգոր Արծրունին էր՝ հետագայում հայտնի հրապարակախոս և խմբագիր, որը, 60-ականներին սովորելով Հայդելբերգի համալսարանում (Գերմանիա), հաճախ էր իր թղթակցություններն ուղարկում Թիֆլիսում լույս տեսնող պարբերականներին: Նրա հոդվածներին կարելի էր հանդիպել մասնավորապես «Հայկական աշխարհի» էջերում: Դրանցից երկուսը՝ «Գերդաստանի ազդեցութիւն և համալսարան»<sup>4</sup> և «Կրկին համալսարանի մասին»<sup>5</sup>, անմիջականորեն առնչվում են Թիֆլիսում համալսարան ունենալու

---

<sup>3</sup> Տե՛ս **Գեորգ Մելիք-Կարազեօղեան**, Գերմանիայի հայ ուսանողութիւնը, Թիֆլիս, Կ. Մարտիրոսեանցի տպարան, 1901:

<sup>4</sup> «Հայկական աշխարհ», 1867, N 9, էջ 363-367:

<sup>5</sup> «Հայկական աշխարհ», 1868, N 6-7, էջ 194-200:

խնդրին: Այնուհետև՝ 1870-ականներին, հրատարակելով «Մշակը», նա ժամանակ առ ժամանակ անդրադառնում է արևելահայ իրականության մեջ բարձրագույն դպրոց ստեղծելու գաղափարին:

«Հայկական աշխարհի» հոդվածների մեջ երիտասարդ Արծրունու տեսադաշտում քաղաքակրթական տարբեր հարթություններում գտնվող երկու հասարակություններն են՝ եվրոպական և հայկական: Այն, ինչ նա տեսել էր Եվրոպայում, ակնհայտորեն տարբերվում էր արևելահայ համակեցությանը բնորոշ պայմաններից: Ուստի համալսարանի գաղափարը ազգային միջավայրում Արծրունին դիտարկում է՝ նախ և առաջ քննելով ազգային մտածողության ու հոգեբանության միջարք հիմնարար կողմեր: Դրանք մղում են նրան հոռետեսորեն մոտենալու խնդրին: Մասնավորապես ավագ սերնդին բնորոշ նախապաշարմունքներն ու քարացած մտածողությունը, ըստ Արծրունու, անիմաստ են դարձնում Թիֆլիսում համալսարան ունենալը. «Առաջադիմությունը կեանքիս լուսնալն է,- գրում է նա:-Իսկ երբ որ մարդս նախապաշարմունք ունի, նա չէ կարող իւր կյանքը լուսացնել: [...] Ծնողների հետ ապրելով իւր ուսման ժամանակ, ուրիշ մարդիկներին չտեսնելով, բացի իւր քաղաքի մարդիկներից, երիտասարդը չի կարողանա փոխել իւր սովորությունները, իւր կարծիքները եւ հետացնել իւրանից նախապաշարմունքը»<sup>6</sup>:

Հաջորդ հոդվածում («Կրկին համալսարանի մասին») Արծրունին բերում է Թիֆլիսում առայժմ համալսարանի մտքից հրաժարվելու ևս երկու փաստարկ՝ քաղաքում «գործ-

---

<sup>6</sup> **Արծրունի Գ.**, Գերդաստանի ազդեցություն և համալսարան, «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1867, N 9, էջ 365:

նական միջոցների» (արդյունաբերական հիմնարկներ, գործարաններ, թանգարաններ) և զարգացած հասարակության բացակայություն, առանց որոնց համալսարանական բարեկիրթ միջավայր և ակտիվ ուսանողություն հնարավոր չէ ունենալ:

Հետագայում՝ 1870-ականներին, երբ արդեն «Մշակի» խմբագիրն էր, համալսարանի խնդիրը նա քննում է նոր իրողությունների և փաստարկների տրամաբանությամբ: Անցել էր շուրջ հինգ տարի, Արծրունին հանդես էր գալիս հասարակական կյանքի արմատական վերափոխման գաղափարներով: Տնտեսություն, մշակույթ, եկեղեցի, դպրոց. այս և բազմաթիվ այլ ոլորտներ «Մշակի» խմբագիրը և իր համախոհները դարձրել էին հասարակական աշխույժ քննարկումների առարկա: Այս համատեքստում նա անդրադառնում է նաև բարձրագույն դպրոցին՝ վերանայելով իր նախկին մոտեցումները:

Արևելահայ հասարակության քաղաքակրթական կառույցը, ինչ խոսք, 1870-ականներին չէր փոխվել, բայց քարացած մտածողության ճահիճը շարժելու, հասարակական հարաբերություններում արմատական տեղաշարժեր անելու մղումը ստիպում է Արծրունուն վերանայել նախկինում ասածները:

1873-ին «Մշակում» տպագրած «Հիմի ժամանակ է» խմբագրականում նա գրում է, որ Թիֆլիսում համալսարանի հիմնելը արդեն հասունացած անհրաժեշտություն է, ինչը պայմանավորում է առաջին հերթին արտասահմանում կրթություն ստացած երիտասարդների թվի ավելացմամբ: Փաստարկը համոզիչ չէ, քանի որ համալսարանավարտ երիտասարդների թիվը նախորդ տասնամյակի համեմատ շատ չէր փոխվել: Թերևս առավել կարևոր է նույն հոդվածում մեկ այլ փաստարկի՝ **հասարակական կարծիքի** ձևավորման մասին հարցադրումը: Վերջինիս առկայությունը, հրապարակախոսի

կարծիքով, հատկապես նոր հարաբերությունների հենքի վրա կարող է հաղթահարել հայ ընտանիքներում մտածողության «անշարժութեան չինական պատերը»<sup>7</sup>: Եվ համալսարանը՝ իբրև քաղաքակրթական կարևոր գործոն, վճռորոշ դեր կարող է ունենալ: Արծրունին ըստ էության հերքում է տասը տարի առաջ արտահայտած նախկին դիրքորոշումը՝ եզրակացնելով. «Քանի որ մեր երիտասարդները ստիպւած կլինեն երկրից դուրս գալ համալսարանական ուսումը ստանալու համար, բարձրագոյն ուսումը միշտ կլինի միմիայն մի քանի անհատների սեփականութիւն, այնինչ [...] պրոֆեսորների և ուսանողների բազմութեան ներկայութիւնը մի քաղաքում կրթական ներգործութիւն ունի այն հասարակական շրջանի վրայ, որտեղ գտնուում է համալսարանը»<sup>8</sup>:

Ուշագրավ է նաև համալսարանի նախնական կառուցվածքի մասին Արծրունու պատկերացումը: Ելնելով երկրի առաջնահերթ պահանջներից՝ նա գտնում էր, որ բարձրագոյն կրթությունը պետք է սկզբնավորել առնվազն երեք ֆակուլտետով՝ բնագիտական, բանասիրական և բժշկական. «Գոնե հիմնուի Թիֆլիսում այդ երեք ֆակուլտետներից բաղկացած համալսարանը: Այդ անհրաժեշտ հիմնարկութիւնը գլուխ բերելու համար, բացի տերութեան հոծարութենից, անշուշտ, հարկաւոր է թե՛ քաղաքի եւ թե՛ ամբողջ երկրի մասնակցութիւնը»<sup>9</sup>:

Արծրունին այս հողվածը գրել է 1878 թվականին: Չորս տասնամյակ հետո՝ 1919 թ. մայիսի 16-ին, Հայաստանի առաջին Հանրապետության կառավարությունը որոշում է կայաց-

---

<sup>7</sup> **Արծրունի Գ.**, Հիմի ժամանակ է, «Մշակ», Թիֆլիս, 1873, N 31:

<sup>8</sup> **Արծրունի Գ.**, Համալսարանը որպէս քաղաքակրթական շրջան, «Մշակ», Թիֆլիս, 1878, N 168:

<sup>9</sup> **Արծրունի Գ.**, Ինչի չունենք, «Մշակ», Թիֆլիս, 1878, N 149:

նում. «Երևանում հիմնել համալսարան հետևյալ չորս բաժիններով՝ ա) պատմալեզվաբանական, բ) տնտեսաիրավաբանական, գ) բժշկական և ֆիզիկա-մաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումներով»<sup>10</sup>: «Մշակի» խմբագրի կանխատեսած երեք ֆակուլտետներին ավելացել էր ընդամենը մեկը...

## **2. Գերմանական համալսարանների գաղափարական և կազմակերպական դրվածքի մեկնաբանությունները արևելահայ մամուլում («Փորձ», «Մուրճ»)**

19-րդ դարի երկրորդ կեսին բարձրագույն կրթության խնդիրը ոչ միայն լիբերալների, այլև ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչների համար ազգի հոգևոր կեցության առանցքն էր համարվում: Համալսարանի ստեղծման գաղափարը 1870-1880-ական թվականներին քննարկվում է նաև պահպանողականների պարբերականներում՝ «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք», «Նոր-Դար»: Մասնավորապես «Փորձ» ամսագիրը իր համարներից մեկում տպագրում է «Գերմանական համալսարանների կազմակերպությունը» վերտառությամբ մի հոդված, որտեղ եվրոպացի գիտնականների աշխատություններից քաղվածաբար ի մի են բերվել գերմանական համալսարանների գաղափարական և կազմակերպական գործունեության հիմնական կողմերը:

Հոդվածի վերջում խմբագրության կողմից փոքրիկ հետգրություն կա. «Մեր հանդեսի հետևեալ համարներում ընթերցողը կգտնի յօդուածների մի շարք, որոնք մանրամասն

---

<sup>10</sup> «Երևանի համալսարան, 1918-1920 թթ. վավերագրերի ժողովածու» (կազմողներ՝ Ֆ. Չ. Մամիկոնյան, Ս. Ս. Միրզոյան), Երևան, 1995, էջ 58:

կքննեն **բարձր ուսման հարցը, որ կեանքի ու մահուան խնդիր է մեզ համար»**<sup>11</sup> (ընդգծ. մերն է-Դ. Պ.): Ցավոք, «բարձր ուսմանը» նվիրված այլ հրապարակումների ամսագրի հաջորդ համարներում չհանդիպեցինք, իսկ վերոնշյալ հոդվածը արժանի է առանձնահատուկ ուշադրության: Այն հստակ պատկերացում է տալիս գերմանական համալսարանների կարգավիճակի, ներքին կառուցվածքի, դասավանդման մեթոդների, դասախոսական կազմի և մի շարք այլ հարցերի մասին:

Նախ՝ կանոնադրության մեջ նշվում է, որ համալսարանի նպատակն է «...գիտութեանն ընթացքների և այլ վարժմունքների միջնորդութեամբ ընդհանուր գիտնական և գրականական կրթութիւն մատակարարել այն երիտասարդներին, որոնք սկզբնական ուսուցմամբ պատշաճապէս պատրաստուած են. նա պէտք է նոցա այն տեղը հասցնի, որ գոհացուցիչ ընդունակութիւններով կարողանան մտնել տէրութեան և եկեղեցու ծառայութիւնը, այլև կատարեն այն պաշտօնները, որոնք բարձր գիտնական կրթութիւն են պահանջում»<sup>12</sup>:

Հետաքրքիր և ուսանելի է համալսարան-պետություն փոխհարաբերությունների պատկերը: Գերմանական համալսարաններն անկախ են պետությունից, նրանցից յուրաքանչյուրը փոքրիկ մի «հասարակապետութիւն» է, որտեղ հստակորեն գծված են ղեկավարության (ռեկտոր, դեկան և այլք) և դասախոսների իրավունքներն ու պարտականությունները: Իշխանությունները չեն կարող ազդել համալսարանի գիտակրթական գործընթացի վրա, դասախոսների համար

---

<sup>11</sup> «Գերմանական համալսարանների կազմակերպութիւնը», Թիֆլիս, 1879, թիվ 1, էջ 81:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 71:

(օրդինար պրոֆեսորներից մինչև պրիվատ դոցենտներ և ուսուցիչներ) մեծագույն արժեք է իրենց անկախությունը:

Պետությունը գիտակցում և հարգում է համալսարանների ներդրումը գերմանական ազգի կայացման գործում և ընդունում է նաև, որ «համալսարանները քաղաքագիտութիւնից գուցէ աւելի իրապէս են նպաստել բնաջինջ անելու միջին դարերի մնացորդները և **պատրաստել գերմանական միութիւնը...**»<sup>13</sup> (ընդգծ. մերն Է-Դ. Պ.):

Ուշագրավ պատկեր է ներկայացնում համալսարանական կառույցը: Այն ձևավորում են ֆակուլտետները, որոնցից յուրաքանչյուրն ընտրում է իր դեկանին, իսկ բոլորը միասին «ընդհանուր ժողովում ընտրում են ընկառնիս և Սենատը: [...] Սենատը ներկայացնում է համալսարանի ամենաբարձր իշխանութիւնը, քննում է ամենայն գործ վճռական իրաւասութեամբ: Նա պարտաւորուած է կառավարել ընկերութիւնը և հարկաւոր եղած ժամանակը պաշտպանել իշխանութեան յարձակումներից»<sup>14</sup>:

Ֆակուլտետում ամենահեղինակավորը օրդինար-պրոֆեսորն է: Այդ կոչմանը հասնելու համար դասախոսները երկար ճանապարհ են անցնում՝ բարձրանալով «փոքր համալսարաններից մինչև ամենաերևելիները»: Բայց հասնելով այդ բարձունքին՝ պրոֆեսորը իրավունք չունի հանգստանալու. պիտի շարունակի պահել իր կոչումը «անխոնջ աշխատանքով», քանի որ Գերմանիայում «պրոֆեսորութիւնը երբէք հանգստու-

---

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 64-65:

թեան տեղ չէ կամ մարդուս գիտնական ասպարիզի պսակու-  
մը. դա միշտ մրցարան է...»<sup>15</sup>:

Գերմանական համալսարանները՝ իբրև բարձրագույն կրթության օրինակելի կառույց, շարունակում են մնալ արևել-  
լահայ մամուլի ուշադրության կենտրոնում նաև հետագա տասնամյակներին: Մասնավորապես «Մուրճը» 1890-ին տպագրում է Ենայի համալսարանի տեսչի ճառը՝ «Գերմանա-  
կան համալսարանների ոգու ինքնությունը» վերնագրով (Հ. Բարխուդարյանի թարգմանությամբ): Ճառախոսի հիմնա-  
կան թեզը հետևյալն է. ազգի «քաղաքական ինքնությունութիւ-  
նը» պէտք է անմիջականօրէն կապուած լինի նրա «մտաւոր ինքնությունութեան հետ», իսկ այս գործում ամենամեծ պար-  
տականությունը դրված է համալսարանների վրա, քանի որ նրանք «կանչուած են, բարձր զարգացում մատակարարելով, գիտնական ինքնությունութիւնը պահպանել, որից **կախումն ունի ժողովրդեան ոգու ինքնությունութիւնը**»<sup>16</sup> (ընդգծ. մերն է -Դ. Պ.):

Արևելահայ մամուլում գերմանական համալսարանների նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքը բխում է, նախ, այն իրողությունից, որ XIX դարի երկրորդ կեսին այդ համալ-  
սարանները լավագույնն էին Եվրոպայում, և այս փաստն ըն-  
դունում էին եվրոպական մյուս երկրների նրանց գործընկեր-  
ները նույնպէս: Երկրորդ հանգամանքը անմիջականօրէն կապվում է այդ տարիներին հայկական պարբերականների խմբագիրների՝ գերմանական համալսարաններում կրթու-

---

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 69:

<sup>16</sup> «Գերմանական համալսարանների ոգու ինքնությունութիւնը (համառոտա-  
գրութիւն Ենայի համալսարանի տեսչի ճառի), Հովհաննէս Բարխուդա-  
րեանցի, «Մուրճ», Թիֆլիս, 1890, N 9, էջ 1304:

թյուն ստացած լինելու իրողության հետ: Արծրունուց բացի, Գերմանիայում էին սովորել նաև Աբ. Հովհաննիսյանը («Փորձ», «Արձագանք»), Սպ. Սպանդարյանը («Նոր-Ղար»), Ավ. Արասխանյանը («Մուրճ»), որոնց պարբերականներն այդ տասնամյակներին լուրջ ազդեցություն ունեին հանրային լսարանի վրա:

Երրորդ, ինչպես մեր նշած, այնպես էլ այլ հոդվածներում հայ հեղինակները առանձնակի նախանձախնդրությամբ ընդգծում են գերմանական համալսարանի առանցքային դերը ազգային միասնության ձևավորման, համազգային գաղափարների շուրջ ազգին միավորելու ճանապարհին: Նրանք ըստ երևույթին հույս էին փայփայում, որ ապագայում հայության վերամիավորման, անկախության ձեռքբերման գործում այդպիսի գործառույթներ կարող է իրականացնել նաև հայոց համալսարանը:

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին արևելահայ պարբերականներն առավել ակտիվորեն են արձագանքում արտասահմանյան համալսարաններում տեղի ունեցող գիտական և ուսումնական գործընթացներին<sup>17</sup>, մեծանում է հետաքրքրությունը այդ համալսարաններում սովորող հայ ուսանողների գործունեության հանդեպ: Մասնավորապես առանձին գրքուկով լույս է տեսնում Գևորգ Մելիք-Ղարաբյոզյանի «Գերմանիայի հայ ուսանողությունը» աշխատությունը, որտեղ հեղինակը հետազոտության թեմա է դարձնում Գերմա-

---

<sup>17</sup> Միայն «Մուրճ» ամսագրում 1990-ականների վերջին գետեղված են մեկ տասնյակից ավելի լուրեր, հոդվածներ այս թեմայով: «Մուրճը» նույնիսկ թարգմանաբար առանձին հոդված է տպագրել Ճապոնիայում գործող համալսարանների մասին. տե՛ս **Միվա Գ.**, Գիտությունը և համալսարանները Ճապոնիայում, «Մուրճ», Թիֆլիս, 1904, N 10, էջ 132-142:

նհայում կրթություն ստացող հայ ուսանողների կյանքը, փաստական ու վիճակագրական տեղեկությունների հիման վրա ներկայացնում նրանց մասնագիտական հետաքրքրությունները, հայ ուսանողին բնորոշ բարոյահոգեբանական մի շարք կողմեր և այլն<sup>18</sup>:

20-րդ դարասկզբին ավելի հաճախակի են դառնում Անդրկովկասում (Թիֆլիս, Բաքու) համալսարան հիմնելու մասին խոսակցությունները<sup>19</sup>: Ընդ որում բարձրագույն ուսումնական հաստատությունների հանդեպ մեծ էր հատկապես հայ երիտասարդների հետաքրքրությունը<sup>20</sup>: Այս իրողությունների զարգացումն ի վերջո հանգեցնում է Հայաստանի առաջին Հանրապետության օրոք հայոց համալսարանի հիմնադրմանը, որի շնորհիվ, ինչպես իր ողջույնի խոսքում Գևորգ Ե կաթողիկոսն էր նշում. «[...] ծաղկելոց են պէսպէս գիտութիւնք ի հայ լեզու ի ձեռն հայազնեայ ուսուցչապետաց և դասախօսաց»<sup>21</sup>:

Համալսարանի գաղափարը, այսպիսով, 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ մամուլում քննարկումների նյութ է դառնում իբրև քաղաքակրթական կարևոր գործոն, ինչը բնորոշ էր ժամանակի առաջադեմ ազգերին: Նրա գոյությունն ազ-

---

<sup>18</sup> Տե՛ս **Գևորգ Մելիք-Կարազօզեան**, Գերմանիայի հայ ուսանողութիւնը, Թիֆլիս, Կ. Մարտիրոսեանցի տպարան, 1901:

<sup>19</sup> Տե՛ս **Սարդանեան Ֆ.**, Պոլիտեխնիկում Բազում, «Մուրճ», Թիֆլիս, 1898, N5, էջ 719-722, **Ջալալեան Կ.**, Բարձրագույն ուսումնարան Թիֆլիսում, «Մուրճ», Թիֆլիս, 1907, N1, էջ 65-89:

<sup>20</sup> Դրա վկայությունն է թեկուզ այն, որ հետագայում (1918-1920 թթ.), երբ Թիֆլիսում գործում էր Անդրկովկասյան մասնավոր համալսարանը, 2000 ուսանողներից (ռուսներ, վրացիներ, հրեաներ, թաթարներ և այլք) 1000-ը հայեր էին. տե՛ս «Երևանի համալսարան. 1918-1920 թթ. վավերագրերի ժողովածու», էջ 30:

<sup>21</sup> «Երևանի համալսարան. 1918-1920 թթ. վավերագրերի ժողովածու», էջ 158:

գային միջավայրում նախապատրաստելու համար նախան-  
ձախնդիր էին թե՛ լիբերալ, թե՛ պահպանողական հոսանքի  
ներկայացուցիչները: Վերջիններս իրենց հողվածներում հայ  
ընթերցողին ներկայացնում էին սեփական մոտեցումները,  
նաև թարգմանաբար տպագրում եվրոպական (առավելապես՝  
գերմանական) համալսարանների փորձը: Նրանք ելնում էին  
այն սկզբունքից, որ համալսարանը մեր ազգային ինքնության  
խորհրդանիշներից է, ինչն ի վերջո իրականություն դարձավ  
XX դարասկզբին՝ հայոց պետականության գոյության պայ-  
մաններում:

2019 թ.

## ԳԵՎՈՐԳ ՄԵԼԻՔ-ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԸ՝ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

### Մուտք

Հայ մտավորականները 20-րդ դարասկզբին, պատմական մեծ հեղաբեկումներով պայմանավորված, ազգաշահ գործունեություն էին ծավալել հայոց ինքնության պահպանման և պետականության վերակերտման ուղղությամբ: Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը նրանցից մեկն էր, որի քաղաքական-մշակութային գործունեությանը, ցավոք, հետագա տասնամյակներում համարժեք գնահատական չի տրվել:

Նա ծնվել է Երևանում 1873 թ., բարձրագույն կրթությունը ստացել Բեռլինի համալսարանում: 1903-1905 թթ. եղել է «Кавказский вестник», 1905 թ.՝ «Արշալոյս» պարբերականների խմբագիրը: Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, որպես Հայ ժողովրդական կուսակցության անդամ, ընդգրկվել է կռախնայի կառավարության կազմում: 1918 թ. դեկտեմբերից մինչև 1919 թ. հունիսը եղել է ՀՀ հանրային կրթության նախարար<sup>1</sup>: Գ. Մելիք-Ղարագյոզյանի գիտական, գեղարվեստական ժառանգության զգալի մասը մինչ այժմ հրատարակված չէ: Վերջերս՝ 2017 թ. ռուսերեն լեզվով լույս տեսավ նրա «Հիշողություններ» խորագիրը կրող գիրքը<sup>2</sup>, որտեղ հեղինակը մի շարք հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 1918 թ. Հայոց ազգային ժողովի պատ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Մելիք-Ղարագյոզյան Գ.**, [https://haydzayn.com/am/page/Geworg%20Melik%60-Gharagozyan\\_48786](https://haydzayn.com/am/page/Geworg%20Melik%60-Gharagozyan_48786)

<sup>2</sup> **Мелик-Каратегян Г.**, Воспоминания. Делегация Армянского Национального Совета в Германию и в союзные с ней страны в 1918 году, М. Ереван, 2017.

վիրակության կազմում Գերմանիա կատարած իր ուղևորության մասին<sup>3</sup>:

### **1. Գ. Մելիք-Ղարազյոզյանը և հայ ուսանողության խնդիրները 20-րդ դարասկզբին**

Դեռևս 19-րդ դարավերջին Գ. Մելիք-Ղարազյոզյանը առանձնակի հետաքրքրություն էր ցուցաբերում Եվրոպայի և մասնավորապես Գերմանիայի համալսարաններում հայ ուսանողների ուսումնառության, նրանց ծավալած գործունեության հանդեպ: Իր հետազոտական պրպտումները 1901 թ. հրատարակում է առանձին գրքուկով<sup>4</sup>, որն անմիջապես հայտնվում է արևելահայ մամուլի ուշադրության կենտրոնում: «Լումայ» և «Մուրճ» ամսագրերում գրախոսություններ են տպագրվում<sup>5</sup>:

Ուշագրավ են հեղինակի առաջադրած խնդիրները, որ ներկայացվում են առաջաբանում: Դրանք բխում են 20-րդ դարասկզբի հայ հասարակության սոցիալ-քաղաքական և մշակութային զարգացման առաջնահերթություններից: Լայն առումով փորձ է արվում հստակեցնել ոչ հայկական միջավայրում կրթություն ստացող հայ ուսանողների կյանքի, մտավոր գործունեության, կենցաղի ու հետաքրքրությունների շրջա-

---

<sup>3</sup> Գրքի տպագրության հարցում մեծ է նրա թոռան՝ Միխայիլ Վերմիշևի ներդրումը, որի անմիջական ջանքերի շնորհիվ «Հիշողությունները» դարձել է հայ և ռուս պատմաբանների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների սեփականությունը:

<sup>4</sup> **Մելիք-Պարազեօզյան Գ.**, Գերմանիայի հայ ուսանողութիւնը, Թիֆլիս, 1901:

<sup>5</sup> Տե՛ս **Բրիչ, Գեորգ Մելիք-Պարազեօզյան**, Գերմանիայի հայ ուսանողութիւնը, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանի, «Լումայ», 1902, թիվ 1, էջ 231-238, **Նալբանդեան Վ., Գեորգ Մելիք-Պարազեօզյան**, Գերմանիայի հայ ուսանողութիւնը (արտատպուած «Տարագ»-ից) «Մուրճ», 1902, թիվ 1, էջ 143-147:

նակը. «Ովքե՞ր են կազմում այդ ուսանողութիւնը, որո՞նք են նրա ձգտումները, ի՞նչ և որպէ՞ս է նա ուսանում, թէ նա արտասահմանից ի՞նչ է բերում հայրենիք և այլն, և այլն: Բաւական է մատնանիշ անել, թէ որքան հետաքրքիր է նոյն իսկ միայն վերջին հարցը- ի՞նչ մտաւոր և բարոյական պաշար է բերում հայ ուսանողը Եւրոպայից, ի՞նչ ազդեցութիւն է գործ դնում նա մեր ազգային հոգեկան զարգացման վրա»,– գրում է Գ. Մելիք-Ղարազյոզյանը<sup>6</sup>: Վերջին երկու հարցի վերլուծությունը չկա. թերևս հեղինակն ինքը ևս զգացել է, որ այս փոքրածավալ գրքուկի սահմաններում նման լուրջ և խորքային հետազոտություն հնարավոր չէր կատարել:

Գրքում հեղինակն առանձնացնում է հատկապէս երկու կարևոր խնդիր. դրանցից առաջինը հայ ժողովրդի արևելահայ ու արևմտահայ հատվածները ներկայացնող ուսանողների բնավորության, բարոյահոգեբանական ըմբռնումների համեմատական բնութագիրն է, որը սուբյեկտիվ մեկնաբանություն է ստանում հեղինակի գրչի տակ և դառնում «Լումայ» ամսագրի գրախոսի քննադատության թիրախներից մեկը<sup>7</sup>: Ի դեպ, տաճկահայերի և կովկասահայերի գեղագիտական կողմնորոշմանն առնչվող այն դրույթը, ըստ որի՝ «տաճկահայերը գերադասում են գրականութեան մէջ գեղարւեստը գիտութիւնից և հրապարակախօսութիւնից», իսկ կովկասահայերը՝ «հրապարակախոսութիւնը և գիտութիւնը՝ գեղարւեստից»<sup>8</sup>, կար-

---

<sup>6</sup> Մելիք-Ղարազեօղեան Գ., նշվ. աշխ., էջ 5-6:

<sup>7</sup> Բրիչ, նշվ. աշխ., էջ 232-233:

<sup>8</sup> Տե՛ս Մելիք-Ղարազեօղեան Գ., նշվ. աշխ., էջ 11-12:

ծում ենք, Արշակ Չոպանյանի հողվածներից մեկի անուղակի արձագանքն է՝:

Մյուս կարևոր խնդիրը, որ քննարկում է հեղինակը, հայ ուսանողների և գերմանական միջավայրում նրանց մեկուսացված ապրելակերպի, այդ երկրի մտավորական խավի հետաքրքրություններին հիմնականում անհաղորդ լինելու շուրջ հեղինակի խորհրդածություններն են: Դրանք նույնպես միանշանակորեն չեն ընկալվում՝ տարածայնությունների առիթ տալով «Լումայում» և «Մուրճում» տպագրած գրախոսականներում<sup>10</sup>:

Այս ամենով հանդերձ, Գ. Մելիք-Ղարաբյոզյանի գրքույկը հայ իրականության մեջ առաջին լուրջ փորձերից է<sup>11</sup>՝ հետազոտության առարկա դարձնելու օտար երկրներում կրթություն ստացող հայ (այդ թվում՝ արևելահայ ու արևմտահայ) ուսանողների կյանքը, փաստական ու վիճակագրական տեղեկությունների հիման վրա ներկայացնելու նրանց մասնագիտական հետաքրքրությունները, հայ ուսանողին բնորոշ բարոյա-հոգեբանական մի շարք կողմեր և այլն: Բուհական կյանքի հանդեպ տարիներ առաջ ունեցած առանձնակի հետաքրքրու-

---

<sup>9</sup> Իր «Ռուսահայեր ու թրքահայեր» հողվածում դեռևս 1999 թ. Արշակ Չոպանյանը գրում է. «Ռուսահայոց մեջ տիրական ձգտումը «օգտապաշտությունն» է, տաճկահայոց մեջ՝ «գեղեցկագիտական զգացումը», «Ռուսահայ գրականութիւնը ծայրէ ծայր «հրապարակագրութիւն» մըն է. Աբովեանէն ու Նազարեանէն սկսեալ մինչեւ Մուրացան եւ Լեօ, [...] Տաճկահայ գրականութեան մեջ տիրող ձգտումը գեղեցկագիտական ձգտումը եղած է», «Անահիտ», 1899, թիվ 11, էջ 318, 322-323:

<sup>10</sup> **Բրիչ**, նշվ. աշխ., էջ 233-235, **Նալբանդեան Վ.**, նշվ. աշխ., էջ 144-146:

<sup>11</sup> «Լումայի» գրախոսության տողատակում հեղինակը հիշատակում է հայ ուսանողների մասին Իս. Հարությունյանի հետևյալ աշխատությունը՝ «Գերմանիայի մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնների գործունեութիւնը և հայ ուսանողները»: Տե՛ս **Բրիչ**, նշվ. աշխ., էջ 231:

թյունը, կարծում ենք, կարևոր դեր է խաղացել, որ Առաջին հանրապետության տարիներին բազմաշնորհ այս մտավորականը սիրով ու պատասխանատվությամբ ընդունի Հանրային կրթության նախարարի պաշտոնը:

## **2. Գ. Մելիք-Ղարազյոզյանի գործունեությունը Հայոց համալսարանի ստեղծման նախապատրաստական շրջանում (1918 թ. դեկտեմբեր-1919 թ. մայիս)**

Վերականգնված պետականության պայմաններում մայր բուհի հիմնադրմանն անմիջականորեն առնչվող գործիչներից առաջին ամիսներին առանձնանում են հատկապես Գևորգ Մելիք-Ղարազյոզյանը և Դավիթ Զավրյանը: Նրանց գործունեության այդ շրջանը ներկայացված է Առաջին հանրապետության օրոք Երևանի համալսարանին նվիրված փաստաթղթերի ժողովածուում<sup>12</sup>:

Երկրում տիրող ծանրագույն վիճակը (կաթվածահար տնտեսություն, սով, համաճարակներ, անօթևան գաղթականներ), բնականաբար, հիշյալ ամիսներին (1918 թ. դեկտեմբեր-1919 թ. մայիս) Երևանում հայկական համալսարան ունենալու հույսեր չէր ներշնչում: Ուստի որպես այլընտրանք՝ կոալիցիոն կառավարության կազմավորումից անմիջապես հետո Հանրային կրթության նախարարության օրակարգում դրվում է Թիֆլիսում գործող Անդրկովկասյան համալսարանին նախ՝ ֆինանսական օգնություն տրամադրելու, իսկ հետագայում նաև Երևան փոխադրելու հարցը: Բանն այն է, որ այս համալսարանը հիմնել էին «մի խումբ հայ ինտելիգենտներ», ուսա-

---

<sup>12</sup> «Երևանի համալսարան, 1918-1920 թթ. վավերագրերի ժողովածու» (կազմողներ՝ Ֆ. Չ. Մամիկոնյան, Ս. Ս. Միրզոյան), Երևան, 1995:

նողների կեսը հայեր էին, մեծ թիվ էին կազմում նաև հայազգի դասախոսները<sup>13</sup>: Թիֆլիսում խորհրդային կարգերի հաստատումից հետո համալսարանը հայտնվել էր ֆինանսական առումով անմխիթար վիճակում:

Նախարար նշանակվելով՝ Գ. Մելիք-Ղարազյոզյանն սկսում է ակտիվ գործունեություն ծավալել: Դ. Ջավրյանը, որ Անդրկովկասյան համալսարանի դասախոս էր, դառնում է նրա պաշտոնական ներկայացուցիչը Թիֆլիսում: 1919 թ. հունվար-ապրիլ ամիսներին Ջավրյանի հետ նամակագրության, ինչպես նաև առանձին հանդիպումների միջոցով Գ. Մելիք-Ղարազյոզյանը խնդիրը մշտապես պահում էր իր տեսադաշտում: 1919 թ. հունվարի 25-ին օգտվելով Ջավրյանի՝ Երևանում գտնվելու առիթից, նա խորհրդակցություն է հրավիրում նախարարությունում, որին մասնակցում էին նաև Հայաստանի բարձր տարրական և միջնակարգ դպրոցների մանկավարժական և ծնողական խորհուրդների 16 ներկայացուցիչներ: Համակողմանի քննարկման վերջում ժողովականներն ընդունում են, որ հայ ժողովրդի համար համալսարան ունենալն անհրաժեշտություն է՝ սկզբնական շրջանում թեկուզ 200 ուսանողներով: Հարցի վերջնական լուծումը վստահվում է նախարարին հետևյալ որոշմամբ. «Թողնել ժողովրդ[ական] լուսավորության մինիստրին համալսարան բաց անել առաջին հնարավորության դեպքում»<sup>14</sup>:

Փետրվարին շարունակվում է Դ. Ջավրյանի և Գ. Մելիք-Ղարազյոզյանի նամակագրությունը, իսկ մարտի սկզբին վերջինս Հայաստանի կառավարությանն է ներկայացնում գեկու-

---

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 30:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 25:

ցագիր «Անդրկովկասյան մասնավոր համալսարանը Երևան տեղափոխելու նպատակահարմարության մասին»: Նրա փաստարկումներն ու հիմնավորումները մատնանշված են երկու հիմնական ուղղություններով: Նախ՝ համոզված է, որ այդ մակարդակի բարձրագույն դպրոց կառավարության սուղ միջոցներով Երևանում հիմնելը «[...]արդիս (այսինքն՝ այդ օրերին – Չ. Պ.) կանգնած է անհաղթելի դժվարությունների առաջ»: Երկրորդ, իբրև տեղափոխման հիմնական առավելություններ նշվում են. ա) Անդրկովկասյան համալսարանի՝ Երևան փոխադրման շնորհիվ Հայաստանում «հնարավորություն է ստեղծվում ունենալու լիուլի կազմակերպված և բավականին հարուստ կահավորված համալսարան»<sup>15</sup>, և բ) «Անդրկովկասյան» մասնավոր համալսարանը, որպես հայ ինտելիգենցիայի երախայրիք, շատ հեշտությամբ կարող է հենց առաջին քայլերից ազգայնանալ, հիմնելով զուգընթաց ամբիոններ, եթե երևան գան հայ գիտական ուժեր»<sup>16</sup>: Մինչ այդ անհրաժեշտ էր ապահովել համալսարանի գոյությունը Թիֆլիսում, եթե Հայաստանի կառավարությունը 2.500.000 ռուբլու ֆինանսական աջակցություն ցույց տար (այն խիստ անհրաժեշտ էր դասախոսներին «ռճիկ տալու», պատրաստի գիտական ուժերը չցրելու, համալսարանի հայ ուսանողների շահագրգիռ վերաբերմունքը չթուլացնելու համար և այլն):

Հայաստանի նախարարների խորհրդի պատասխանն ուշանում է, իսկ Զավրյանի նամակներում մտահոգություններն ու տազնապները օրեցօր ավելի են մեծանում: 1919 թ. մայիսի 5-ին Հանրային կրթության նախարարի նախաձեռնությամբ

---

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 31:

գումարվում է նախարարության խորհրդի նիստ՝ Անդրկովկասյան համալսարանին նպաստ տալու հարցով: Որոշվում է «հատկացնել 500000 ռ. Համալսարանը Թիֆլիսում պահելու համար, եթե ոչ ամբողջովին, գեթ մասամբ»<sup>17</sup>, որից երկու օր անց Գ. Մելիք-Ղարազյոզյանը կրկին դիմում է Հայաստանի նախարարների խորհրդին: Գրության մեջ նա մեկ անգամ ևս տեղեկացնում է այս ընթացքում Անդրկովկասյան մասնավոր համալսարանի տեղափոխման հետ կապված իր քայլերի մասին՝ նախկին փաստարկներին ավելացնելով մի քանի նոր հիմնավորումներ ու առաջարկներ: Խնդրանքը նույնն է՝ նյութական օգնությամբ տեր կանգնել համալսարանին: Պատճառաբանումների մեջ ավելացել էր նաև հետևյալը. «[...] մայիսի 10-ին համալսարանի խորհուրդը պետք է որոշի՝ Ադրբեջանի կառավարության առաջարկը ընդունում է, թե ոչ, իսկ այդ հարցը կարող է բացասաբար որոշվել միայն ապագա տարվա նյութական օգնության ապահովության դեպքում» (մեր կառավարության կողմից – Դ. Պ.)<sup>18</sup>:

Հանրային կրթության նախարարության քայլերն այս անգամ ավելի կտրուկ էին, ուստի Հայաստանի կառավարության մայիսի 7-ի նիստում քննարկվում է հարցը: Քաղվածքում մասնավորապես նշվում է.

«Լսեցին.

Հ[անրային] կրթության մինիստրի զեկուցումը Անդրկովկասյան համալսարանին 500000 ռ. նպաստ տալու մասին:

Որոշեցին.

Մերժել և հանձնարարել Հ[անրային] կրթության մինիստրին զեկուցում ներկայացնել Հայաստանի համալսարան բաց

---

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 45-46:

անելու մասին՝ ներկայացնելով համալսարանի ծրագիրը և նախահաշիվը»<sup>19</sup>:

Մրանով փաստորեն փակվում է Անդրկովկասյան մասնավոր համալսարանը Երևան տեղափոխելու հարցը:

Դժվար է ասել՝ ինչ ընթացք կստանային հետագա իրադարձությունները, եթե կառավարությունը հաստատեր համալսարանին ֆինանսապես օժանդակելու՝ նախարարության որոշումը: Գ. Մելիք-Ղարազյոզյանը կրթական կյանքին քաջատեղյակ մտավորական էր, խորապես ծանոթ էր խնդրին, իր ներկայացուցչի հետ չորս ամիսների ընթացքում բազմիցս քննարկել էր այդ հարցը, լսել տեղափոխման հետ կապված դրական և բացասական կարծիքները:

Այդուհանդերձ, կարծում ենք, երկու կարևոր գործոն օբյեկտիվորեն լուրջ խոչընդոտներ դարձան: Առաջինը ֆինանսական այն ծանր կացությունն էր, որն առկա էր հանրապետությունում: 2.5 միլիոնը, անգամ 500.000 ռուբլին այդ ամիսներին շոշափելի գումար էին աղքատիկ բյուջ ունեցող կառավարության համար: Երկրորդը տրանսպորտային միջոցների խնդիրն էր: Նշված ամիսներին հիմնականում չէր գործում երկաթուղին, ճանապարհները մեծ մասամբ փակ էին ու վտանգավոր: Ուստի Թիֆլիսից Անդրկովկասյան համալսարանի գույքն անգամ Երևան տեղափոխելը կապված էր լուրջ դժվարությունների հետ: Հնարավոր է՝ կային նաև սուբյեկտիվ գործոններ՝ կապված միջկուսակցական (Գ. Մելիք-Ղարազյոզյանը Հայ ժողովրդական կուսակցության անդամ էր) ու միջանձնային փոխհարաբերությունների հետ, բայց դրանց մա-

---

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 48:

սին փաստական տվյալներ և տեղեկություններ դժվար է գտնել<sup>20</sup>:

### **3. Գ. Մելիք-Ղարաբյոզյանի գործունեությունը 1919 թ. մայիս-հունիս ամիսներին**

Կառավարության մայիսի 7-ի որոշման մեջ, մերժումից բացի, կար նաև երկրորդ կարևոր կողմը. «[...] հանձնարարել Հ[անրային] կրթության մինիստրին զեկուցում ներկայացնել Հայաստանի համալսարան բաց անելու մասին՝ ներկայացնելով համալսարանի ծրագիրը և նախահաշիվը»<sup>21</sup>: Գ. Մելիք Ղարաբյոզյանը, ելնելով ստեղծված նոր իրավիճակից ու առաջադրված պահանջներից, շարունակում է ակտիվ գործունեությունը: Ի վերջո, գլխավոր նպատակը Հայաստանում համալսարան ունենալն էր:

Մի քանի օր անց՝ 1919 թ. մայիսի 12-ին, նա պատրաստում է զեկուցագիր և ուղեկից փաստաթղթեր «Հայաստանում բարձրագույն կրթարան հիմնելու վերաբերյալ»: Դրանցում նկատելի են համալսարան հիմնադրելու նախապայմանների

---

<sup>20</sup> Ասվածին թերևս անուղղակիորեն առնչվում է Գ. Մելիք-Ղարաբյոզյանի հիշողությունների անտիպ տետրի հետևյալ հատվածը. «Մի օր [չեմ յիշում քանիսին էր դա, յամենայն դեպս դա 1919 գարնան ամիսներից մեկին էր] Հայաստանի կառավարության նիստին վարչապետ Աղ. Խատիսեանը ինձ համար բոլորովին անսպասելի յայտարարութիւն արավ. «Ժամանակ է արդէն հայկական համալսարան ստեղծել: Ես դնում եմ այդ հարցը»: [...] Ես լռութեամբ ընդունեցի վարչապետի յայտարարութիւնը, թէն միննոյն ժամանակ մտքովս անցաւ ենթադրութիւնը, որ Խատիսեանը իր այդ կտրուկ յայտարարութիւնը բերել է կառավարութեան նիստը Դաշնակցութեան բիրոյից»: Տե՛ս **Մելիք-Ղարաբեօզեան Գ.**, Երևանի համալսարանի ծագումը և նրա կազմակերպչական շրջանը, տետր թիվ 1, ձեռագիր // Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 502, գործ 173, էջ 5-7:

<sup>21</sup> «Երևանի համալսարան, 1918-1920 թթ. վավերագրերի ժողովածու» (կազմողներ՝ Ֆ. Չ. Մամիկոնյան, Ս. Ս. Միրզոյան), Երևան, 1995, էջ 48:

խորհմացությունը, երկրի կյանքում նորաստեղծ բուհի ռազմավարական ու մարտավարական խնդիրների հստակ պատկերացումը: Մասնավորապես Ուղեկցագրի առաջին մասում Գ. Մելիք-Ղարագյոզյանը հիմնավորում է համալսարանի անհրաժեշտությունը Հայաստանում, ապա ըստ առաջնահերթության մատնանշում այն ոլորտները, որոնք «Բարձրագույն կրթարանի» շնորհիվ կդառնան երկրի տնտեսական ու մշակութային զարգացման լուրջ խթաններ: Նախարարի կարծիքով Հայաստանի պայմաններում առաջնային նշանակություն պետք է ունենան ֆիզիկամաթեմատիկական, գյուղատնտեսական, բժշկական, իրավաբանական գիտելիքները, հայոց պատմության և գրականության իմացությունը: Սրանց հիմքի վրա նախ և առաջ կձևավորվեն չորս ֆակուլտետներ՝ պատմաբանասիրական, իրավաբանական-տնտեսական, բժշկական և ֆիզիկամաթեմատիկական՝ համապատասխան բաժիններով: Փաստաթղթերում Գ. Մելիք-Ղարագյոզյանը առանձնաբար անդրադառնում է նաև համալսարանում դասավանդման լեզվին, ներկայացնում շենքի ընտրության, շինարարական աշխատանքների, ուսումնական լաբորատորիաների կահավորման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը:

Գ. Մելիք-Ղարագյոզյանի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա կառավարությունը 1919 թ. մայիսի 16-ի նիստում քննարկման է դնում հարցը, որից հետո ընդունվում է «Օրենք Հայաստանում համալսարան բանալու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 300000 ռ. հատկացնելու մասին»: Այնտեղ մասնավորապես նշված է. «1. Հիմնել Երևանում համալսարան հետևյալ չորս բաժիններով՝ ա) պատմալեզվաբանական, բ) տնտեսաիրավաբանական, գ) բժշկական և ֆիզի-

կա-մաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումներով:

2. Համալսարանը բանալ 1919-20 ճեմարանական տարում:

3. Առաջին հերթին բանալ պատմալեզվաբանական բաժինը:

4. Մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է Մինիստրների խորհուրդը ըստ Հանրային կրթության մինիստրի առաջարկության»<sup>22</sup>:

Մայիսի 16-ի այս պատմական որոշումը հետագայում դառնում է Հայոց համալսարանի հիմնադրման օր<sup>23</sup>:

Գ. Մելիք-Ղարազյոզյանը պաշտոնավարում է մինչև 1919 թ. հունիսի կեսերը<sup>24</sup>, այնուհետև նախարարի պաշտոնում նրան փոխարինում է Սիրական Տիգրանյանը, իսկ 1919 թ. օգոստոսին՝ Նիկոլ Աղբալյանը: Հատկապես վերջինիս օրոք համալսարանի հիմնադրման աշխատանքները բուռն թափով շարունակվում են: Հանդիսավոր բացումը տեղի է ունենում 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի Առևտրական դպրոցի շենքում<sup>25</sup>: Ուշագրավ է, որ համալսարանի բացման արարողությանը նվիրված և նրան նախորդող մամուլի հրապարակումներում բազմաթիվ հյուրերի, հրավիրյալների և ելույթ ունեցողների շարքում մեզ չհաջողվեց հանդիպել Գևորգ Մելիք-Ղարազյոզյանի անվանը...

---

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>23</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Մաղալյան Վ.**, Երևանի պետական համալսարանի հիմնադրումը, «Էջմիածին», 1999, թիվ Ը-Թ, էջ 80-92:

<sup>24</sup> «Երևանի համալսարան» վավերագրերի ժողովածուում Գ. Մելիք-Ղարազյոզյանի վերջին գրությունը թվագրված է 1919 թ. հունիսի 21-ով: Տե՛ս «Երևանի համալսարան, 1918-1920 թթ. վավերագրերի ժողովածու», էջ 73:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 139-164:

Ընդհանուր գծերով այսպիսին է մեր նորագույն պատմության մեջ կրթության առաջին նախարարներից մեկի գործունեության համառոտ պատկերը, որն անմիջականորեն առնչվում է հայոց համալսարանի հիմնադրման նախապատրաստական շրջանին:

### **Ամփոփենք:**

Հայաստանի առաջին Հանրապետության կոալիցիոն կառավարության կազմում Հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարազյոզյանի թեկնածությունը հաջողված էր: Նրա հետաքրքրությունների կիզակետում դեռևս տարիներ առաջ հյուսվել էր ապագա Հայաստանում համալսարան ունենալու տեսլականը, որի նախապատրաստական աշխատանքներին մասնակցելու բախտ է վիճակվում Առաջին հանրապետության տարիներին: Իր գրություններում, նամակներում, ելույթներում նա բազմիցս շեշտում է, որ նորանկախ Հայաստանի ապագան նրա մտավորական ուժերի համախմբման մեջ է, և նրանց գիտական, ստեղծագործական հնարավորությունների օգտագործման լավագույն կենտրոնը պետք է դառնա հայոց համալսարանը: Շուրջ վեց ամիս Գ. Մելիք-Ղարազյոզյանը այդ գործին տրվել է անմնացորդ նվիրումով՝ օգտագործելով նախարարի պաշտոնը, կուսակցական և ոչ կուսակցական կապերը և իր ամբողջ կարողությունները ծառայեցրել Հայաստանում համալսարան հիմնադրելու գաղափարին:

Այս իրողությունները պատգամ ունեն՝ ըստ արժանվույն գնահատելու տաղանդաշատ մտավորականի վաստակը:

2019 թ.

ԱԶԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶՍՏՈՒԹՅԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ «ՓՈՐՁ» ԱՄՍԱԳՐՈՒՄ (1876-1881 ԹԹ.)

**Մուտք**

Ազգային արժեհամակարգը՝ իբրև տվյալ ազգի մտահոգևոր հարստության մնայուն գործոն, սնվում է արքետիպային իրողություններից, բայց և ժամանակի ընթացքում կարող է փոփոխություններ կրել: Այդ համակարգի որոշ հատկանիշներ, կախված տվյալ դարաշրջանում ազգային-պետական կառուցվածքի յուրահատկություններից, մղվում են երկրորդ պլան: Դա նկատելի է հատկապես այն ժամանակ, երբ առաջնային են դառնում ազգի գոյատևման խնդիրը, ինքնապահպանման բնագործ:

Այսպիսին էր պետականագուրկ հայ ժողովրդի վիճակը 19-րդ դարում: Ուստի նրա ընտրախավը փորձում էր ազգային ինքնագիտակցության խթանմամբ վերստին ստեղծել գաղափարական այն արժեհամակարգը, որ նախորդ դարերի ընթացքում խամրել կամ մոռացության էր մատնվել:

Այս նպատակն էին հետապնդում 19-րդ դարի երկրորդ կեսին հայ իրականության մեջ կազմավորված հոսանքները, որոնց ներկայացուցիչները, գաղափարական այս կամ այն ուղղությանը տուրք տալով, իրենց պարբերականներում առաջարկում էին ազգային առաջընթացի սեփական ըմբռնումները: Դրանով իսկ, ուղղակիորեն թե անուղղակիորեն, նրանք արծարծում էին ազգային արժեհամակարգի մի շարք խնդիրներ, որոնց վերանայումը ժամանակի հրամայականն էր:

Այդ տասնամյակներին գաղափարապես ամենաազդեցիկը պահպանողական հոսանքն էր, որի մամուլի օրգանների,

դրանց խմբագիրների, աշխատակիցների մասին պատմա-  
քննական մի շարք ուսումնասիրություններ են գրվել հայ մա-  
մուլի պատմաբանների կողմից:<sup>1</sup>

Մեր նպատակն է քննության առնել «Փորձ» ամսագրի  
(1876-1881 թթ., խմբագիր՝ Արգար Հովհաննիսյան) էջերում ազ-  
գային համակարգի երկու բաղադրիչները՝ ազգությունը և քա-  
ղաքական ազատությունը մարմնավորող առանցքային մի քա-  
նի դրույթներ և դրանց մատուցման առանձնահատկություննե-  
րը պահպանողական գաղափարախոսության դիտանկյունից:

\*\*\*

Մինչ նշված խնդրին անդրադառնալը՝ մի քանի խոսք  
պահպանողական հոսանքի գաղափարական հայեցակարգի  
մասին: Պահպանողականությունը սկիզբ է առել 18-րդ դարի  
վերջին Եվրոպայում: Նրա գաղափարախոսներից մասնավո-  
րապես է. Բերքը գտնում էր, որ «քաղաքական սկզբունքները  
պետք է հարմարեցնել ազգային ավանդույթներին, սովորույթ-  
ներին և հասարակական-քաղաքական ինստիտուտների ար-  
դեն արմատավորված ձևերին»: Եվ հասարակության նպա-  
տակն է ոչ թե թվացյալ ազատությունների ստեղծումը, «որը  
հանգեցնում է համընդհանուր անարխիայի, այլ արդեն գոյու-

---

<sup>1</sup> Տե՛ս մասնավորապես **Մխիթարյան Մ. Հ.**, XIX դարի երկրորդ կեսի արևելա-  
հայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Հայկ.  
ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1976, **Հովհաննիսյան Ա.**, 19-րդ դարի 50-60-ական թվա-  
կանների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, Պատմա-  
բանասիրական հանդես (ՀՄՍՌ ԳԱ), 1965, № 4. էջ 55-78, 1966, № 1, էջ 33-62,  
**Խատասյան Ա.**, Հայ հասարակական հոսանքները XIX դ. 50-70-ական թվա-  
կաններին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, N 1, էջ 272-284 և  
այլք:

թյուն ունեցող ավանդույթների վրա հիմնված ազատությունների պահպանումը»<sup>2</sup>:

Պահպանողականության առանցքային դրույթները դրված են նաև 19-րդ դարի երկրորդ կեսին ձևավորված հայ ազգային-պահպանողական հոսանքի գաղափարական հիմքում: Մասնավորապես այդ հոսանքի գլխավոր՝ ազգային պահպանողական թևի ներկայացուցիչները, մերօրյա հետազոտողի կարծիքով, ելնում էին «արևմտահայ և արևելահայ հաստիքների, ինչպես և գաղթօջախների հայության ազգային-հոգևոր միասնության գաղափարից: Հայ Առաքելական եկեղեցու ավանդույթների, դավանական ինքնության, ազգային լեզվի պահպանության ու մշակման և դրանց ընդառաջող կրթության ու լուսավորության համակարգի ստեղծումը այն նշանախեցերն էին, որոնց վրա ազգային պահպանողականները հիմնում էին իրենց աշխարհայացքային կողմնորոշումները»<sup>3</sup>:

Մինչ «Փորձ» ամսագրի հանդես գալը պահպանողական և լիբերալ ուղղությունների կողմնակիցները որոշակի ճանապարհ էին անցել: 1850-60-ականներին ազգի վաղվա օրվա, նրա հասարակական-տնտեսական կառուցվածքների, լեզվի, եկեղեցու և մի շարք այլ հիմնախնդիրների շուրջ սուր բանակռիվներ էին ընթացել արևելահայ ու արևմտահայ պարբերականների էջերում, դրանք շարունակվում էին նաև 70-ական թվականներին: Ուստի «Փորձի» խմբագիրը, նախքան հանդեսի հրատարակումը, ճշտում է իր գաղափարական դիրքորոշումը և ամսագրի առիթով հրապարակած «Հայտարարու-

---

<sup>2</sup> **Մարգարյան Մ.**, Պահպանողականություն, «Պահպանողական հոսանքներ և գաղափարներ», Եր., 2010, էջ 6:

<sup>3</sup> **Խառատյան Ա.**, Հայ հասարակական հոսանքները XIX դ. 50-70-ական թվականներին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, N 1, էջ 273:

թյան» մեջ մասնավորապես ընդգծում, որ ինքը շարունակելու է նախորդ պարբերականներից «Հիւսիսափայլի» և «Կռունկ հայոց աշխարհին»-ի սկսած գործը<sup>4</sup>: Խմբագրի նախընտրած պարբերականներն արդեն իսկ խոսում են նրա աշխարհայեցողության սահմանների մասին: «Հիւսիսափայլը» լուսավորական, դեմոկրատական գաղափարներ քարոզող ամսագիր էր: Վերջինիս հետ իր հոգեհարազատությամբ Աբգար Հովհաննիսյանը նախապատրաստում էր լսարանին, որ «Մշակի»՝ պահպանողականների հասցեին արվող բնութագրումները միակողմանի են և չեն համապատասխանում ազգային արժեհամակարգի այն ըմբռնումներին, որոնցով հանդես են գալու «Փորձի» խմբագիրը և իր թիմակիցները: Այդ արժեհամակարգի երկու դրույթների՝ ազգության և քաղաքական ազատության քննությամբ փորձենք մատնանշել ամսագրի գաղափարական ընթացքը 1870-ական թթ. վերջին:

### 1. Ազգության խնդիրը «Փորձի» էջերում

Դեռևս 18-րդ դարավերջին սկիզբ առած քաղաքակրթական նոր շարժումը, ի դեմս ֆրանսիական հեղափոխության, ազգային ինքնագիտակցության արթնացման գորեղ խթան հանդիսացավ եվրոպական ազգերի համար: Ազգության գաղափարը, եվրոպացի որոշ տեսաբանների կարծիքով, դարձել էր 19-րդ դարի գլխավոր «հատկանիշը»<sup>5</sup>:

---

<sup>4</sup> Տե՛ս Մխիթարյան Մ. Հ., XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1976, էջ 129-130:

<sup>5</sup> Տե՛ս «Ազգության խնդիրը, պրոֆեսոր Զիգֆրիդ Բրի», «Փորձ», 1877, թիվ 3, էջ 203:

Ազգության խնդիրը արևելահայ պարբերականներում առանձնակի սրությամբ դրվեց դարի երկրորդ կեսին: Վերջինիս կարևորությունն ընդգծում էին հատկապես Ստ. Նազարյանն ու Մ. Նալբանդյանը, որոնք, քաջատեղյակ լինելով եվրոպական մտածողների աշխատություններին, «Հիւսիսափայլի» էջերում հիմնահարցը քննում էին հայ իրականության համատեքստում: Նշելով, որ «ազգությունը ապրում է, եթե նորա մեջ կա արտաքին, ավերիչ ուժերի հավասարակշիռ գորություն», Նալբանդյանը համոզված էր, որ, «եթե չկա այդ գորությունը, արտաքին ուժերը, հաղթահարելով ազգությունը, լուծում են նորա կազմվածքը»<sup>6</sup>:

«Փորձի» տեսաբանները շարունակում են ընդլայնել «Հիւսիսափայլի» գաղափարախոսների մտորումները հայ ազգի անցած ճանապարհի, ներկա դրության, քաղաքակիրթ ազգերի շարքում նրա արժեհամակարգը վերականգնելու և մի շարք այլ խնդիրների շուրջ: Այս հարցում ակտիվ էին հատկապես «Փորձի» աշխատակիցներ Ստեփանոս Պալասանյանը և Ալեքսանդր Երիցյանը: Երկուսն էլ քաջատեղյակ էին այդ տասնամյակներին ազգության մասին եվրոպական տեսական մտքի խոշոր ներկայացուցիչների աշխատություններին: Ուստի «Փորձի» հրատարակության առաջին իսկ տարիներին նրա էջերում, ինքնուրույն հոդվածներից բացի, թարգմանաբար տպագրվում են գերմանացի պրոֆեսոր Զիգֆրիդ Բրիի՝ ազգության խնդրի մասին կարդացած դասախոսությունը<sup>7</sup>, «Ազգերի զարգացման օրենքները» խորագրով հոդվածը<sup>8</sup> (ֆրանսերենից

---

<sup>6</sup> Նալբանդյան Մ., Երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր., 1985, էջ 505:

<sup>7</sup> «Ազգութեան խնդիրը, պրոֆեսոր Զիգֆրիդ Բրի», «Փորձ», 1877, թիվ 3, էջ 202-219:

<sup>8</sup> Տե՛ս «Ազգերի զարգացման օրենքները», «Փորձ», 1877, թիվ 3, էջ 222-256:

հայերենի փոխադրել էր Ստ. Պալասանյանը) և այլ հրապարակումներ: Ստ. Պալասանյանը որոշ ժամանակ անց ինքն է տպագրում ծավալուն մի հոդված՝ «Տասնևիններորդ դարու նշանաբանը», հանգամանորեն ներկայացնում է ազգության խնդրին առնչվող հիմնարար դրույթները և հայոց ազգային ինքնության, նրա դարավոր ու ներկա ընթացքի հիմնական ուղղությունները:

Հեղինակին հուզում է ազգության խնդիրն իր ամբողջության մեջ, ինչը ենթադրում է այդ գաղափարի քննությունը մի շարք հարթություններում՝ ազգություն-քաղաքակրթական առաջադիմություն, ազգություն-քրիստոնեություն, ազգություն-ընկերային կյանքի երևույթներ (սեփականության իրավունք, լեզու, ավանդույթներ, քաղաքական կյանք, պետություն և այլն): Հիշյալ խնդիրների տեսական քննությունը հիմք է տալիս Պալասանյանին անցում կատարելու դեպի ազգային փոխհարաբերություններ<sup>9</sup> և կանգ առնելու մասնավորապես մեծ և փոքր ազգերի գոյության իրավունքի, նրանց զարգացման հեռանկարների վրա:

Այս համատեքստում ուշագրավ են հայության՝ իբրև ազգային միավորի մասին նրա մտորումները: Աշխատության վերջում հռետորական հարց հնչեցնելով՝ «Հայաստան աշխարհը արժանի՞ է արդեոք արևմտեան ազգերի համակրութեանը...»՝ Պալասանյանը դրական եզրակացությունների է հանգում՝ մասնավորապես նշելով. «Ոչ ոք կարող չէ գոյութեան իրաւունքից զրկել այն ազգին, որի ուսերի վրայ բարձած էր

---

<sup>9</sup> Ի դեպ, հոդվածում հստակորեն տարանջատված չեն «ազգ» և «ազգություն» հասկացությունները: Հիմնական մասում «ազգությունը» դիտարկվում է իբրև ազգային առանձնահատկությունների էութենական բնութագրում, թեև որոշ տեղերում ազգությունը ներկայացվում է նաև «ազգ» իմաստով:

անցելալում քրիստոնէական գաղափարի համար տուած պատերազմի ծանրութիւնը, և որին, նոյնիսկ արևմտեան ազգերի կարծիքով, վիճակուած է ապագայում նոր քաղաքակրթութեան միջնորդ հանդիսանալ եվրոպական և ասիական ազգերի մէջ»<sup>10</sup>:

## **2. Քաղաքական ազատություն. խնդիրներ և հեռանկարներ**

Ազգության խնդրի արդիական հնչեղությունը, վերջինիս շուրջ «Փորձի» հեղինակների մտորումները նրանց մղում են հաջորդ կարևոր հանգրվանին. դարավոր ավանդույթներով հարուստ, ձևավորված ազգի զարգացման ընթացքն անհնար է պատկերացնել առանց նրա քաղաքական ազատության: Խնդրի դրվածքն առավել սուր բնույթ է ստանում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին: Ամսագրի՝ այս շրջանում լույս տեսած համարներում տպագրվում են մի շարք հոդվածներ, որոնցում փորձ է արվում համատեղել միջազգային պրակտիկան և ազգային կյանքի քաղաքական հնարավորություններից բխող ներքին միտումները:

«Փորձի» 1877-1878 թթ. 1-4 համարների հրապարակումների վերնագրերն արդեն իսկ խոսուն են՝ «Տաճկաստանի հայոց իրավունքները և նոցա սահմանադրութիւնը» (1876, NN 1, 2, 1877, NN 3, 4), «Տաճկական Հայաստանի անկախութիւնը» (1877-1878, N1), «Տաճկական Հայաստանի ինքնաւարութիւնը» (1877-1878, N3), «Տաճկական Հայաստանի ազատութիւնը և անգլիական մամուլը» (1877-1878, N2) և այլն: Սրանց զուգահեռ հոդվածագիրների տեսադաշտում է եվրոպական փոքր

---

<sup>10</sup> **Պալասանյան Ս.**, Տասնիններորդ դարու նշանաբանը, «Փորձ», 1877-1878, թիվ 1, էջ 133:

ազգերի (հույներ, սերբեր, բուլղարներ) պայքարը իրենց քաղաքական ազատության համար և այդ հարթակում մեծ տերությունների դիվանագիտական խաղերը:

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը «Փորձի» հեղինակների այն հիմնավորումներն են, որոնք հնարավորություն կտային հայերին՝ իրենց քաղաքական ազատությունը խոչընդոտող արգելքները հաղթահարելու:

Ընդհանրացնենք առավել կարևորները.

ա) Հայկ Նահապետի՝ մեզ ավանդած անկախության արքետիպը և նրա վերարթնացումը XIX դարի քաղաքակրթական նոր զարգացումների պայմաններում,

բ) Հայ ազգի դարավոր ինքնամեկուսացումը. օտարների կարծիքը նրա մասին,

գ) Հայերի նոր առաքելությունը՝ միջնորդ դառնալու Արևմուտքի և Արևելքի միջև,

դ) Արևմտյան (Տաճկական) Հայաստանի՝ իբրև առանձին քաղաքական միավորի ինքնավարությունը, նրա օգտակարությունը տարածաշրջանի համար:

Նշված ընդհանրացումներից յուրաքանչյուրը «Փորձի» հոդվածներում ներկայացվում է համապատասխան փաստերով ու փաստարկումներով: Ավելին, հարկ եղած դեպքում հեղինակները հռետորական և հուզական երանգներ են հաղորդում իրենց խոսքին՝ ընթերցողի ազգային արժանապատվությունը վերստին արթնացնելու մղումով. «Հայկը ներշնչել է մեր մէջ անկախութեան ոգին, Արամը ժառանգել է մեզ անձուեր հայրենասիրութիւն, Արտաշէսներն ու Տիգրանները-անվեհեր

քաջասրտութիւն, Տրդատներն ու Ներսէսները-աշխարհաշինութիւն...»<sup>11</sup>, -վստահեցնում է հոդվածագիրը:

Մրան զուգահեռ՝ «Փորձի» հրապարակումներում քիչ չեն նաև ազգի ներկա տխուր վիճակի սթափ գնահատումները: Հատկապես սուր քննադատության է ենթարկվում դարերով «մեր վարած փակ ու անհաղորդ կեանքը», որի արդյունքում քաղաքակիրթ աշխարհից մեկուսացած հայը հայտնվել է քաղաքակրթական զարգացումների լուսանցքում: Ներքին անվստահությունն ու ինքնօտարումը անտարբերություն են առաջացրել նույնիսկ օտարի կարծիքի հանդէպ:

Այս ամենով հանդերձ, հոռետեսության երանգները «Փորձի» հոդվածներում թույլ են, քանի որ խմբագրության և նրա աշխատակիցների առաջնային խնդիրը, հատկապես ռուս-թուրքական պատերազմի տարիներին, ազգային լսարանին քաղաքականապես հասունացնելն ու լավատեսությամբ համակելն էր: Ուստի կարևոր են մասնավորապես մեր նշած վերջին երկու ենթակետերի ուղղությամբ այդ հրապարակումներում արված դիտարկումները:

Հայերի առաքելությունը՝ միջնորդ դառնալու Արևելքի ու Արևմուտքի միջև, գայթակղիչ գաղափար էր և հոդվածներում շրջանառվում է մի շարք անգամներ: Ուշագրավ է, որ հոդվածագիրները հաճախ են մեջբերում օտարազգի գործիչների կարծիքները: Մա ազգային հարցին միջազգային հնչեղություն հաղորդելու յուրօրինակ հնարանք էր, որի մասին պետք էր տեղեկացնել ինքնամեկուսացման նիրհից արթնացող հային: «Փորձի» հեղինակը օտար մատենագիրներից հղում է անում

---

<sup>11</sup> «Տաճկական Հայաստանի անկախութիւնը», «Փորձ», 1877-1878, թիվ 1, էջ 361:

Բարոն Հակստհաուզենին: «Բոլոր նշաններից երևում է,- գրում է Հակստհաուզենը,-որ հենց այս ազգը աստուածային տեսչութեամբ ընտրուած է **իբրև միջնորդ քրիստոնէութիւնը և քաղաքակրթութիւնը տարածելու Արևելքում** (ընդգծումը հեղինակինն է- Դ. Պ.): Տարակոյս չկա, որ մեծ պատմական համաշխարհային նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ այս քրիստոնէայ ժողովուրդը ցրուած է մի մեծ տարածութեան վրայ, Մարօկկոյից սկսած մինչև Չինաստան, և միևնոյն ժամանակ նորա բոլոր անդամները կապուած են միմեանց հետ հասարակական, քաղաքական ու կրօնական կապերով և մի ազգային միութիւն են կազմում»<sup>12</sup>:

«Միջնորդ դառնալու» առաքելութիւնը, բնականաբար, ենթադրում էր եվրոպական տերութիւնների կողմից հայ ազգին սատարելու և նրան պետական-քաղաքական մարմնի լիազորութիւններով օժտելու անհրաժեշտութիւն: «Փորձի» հեղինակները, իբրև լավագոյն տարբերակ, դիտարկում են Օսմանյան կայսրոյթյան տարածքում հայ ժողովրդի ինքնավարոյթյան հնարավորութիւնը, որ «միջոց կտա...քրդերի հարստահարութիւններից և տեղական վարչութեան անիրաւութիւններից ազատուելու»<sup>13</sup>: Ընդ որում, ինքնավարութիւն ձեռք բերելու կարևորութիւնը կրկին ընդգծվում է եվրոպական մամուլում քաղաքական հայտնի դեմքերի մատնանշած փաստարկումներով: «Տաճկական Հայաստանի անկախութիւնը» հոդվածում հեղինակը (ըստ երևոյթին՝ Ստ. Պալասանյանը) հանգամանորեն անդրադառնում է «Inde'pendence Belge» լրագրի էջերում Վ. Բ. ստորագրոյթյամբ հրատարակմանը: Վերջինս

---

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 363:

<sup>13</sup> «Տաճկական Հայաստանի ինքնավարութիւնը», «Փորձ», էջ 358-359:

աչքի է ընկնում հստակ հարցադրումներով, կառուցվածքային ամբողջականությամբ և ըստ էության տեսական նախադրյալների հայտ է ներկայացնում ռուս-թուրքական պատերազմից հետո կայանալիք վեհաժողովին: Այլ հարց է, թե դրանք որքանով օգտակար եղան սեփական շահերն ունեցող մեծ տերությունների դիվանագիտական խաղերում:

Հողվածագրի հարցադրումներն էին. ո՞ւմ համար օգտակար կլինե՞ր Հայաստանի ազատությունը և ինչո՞ւ, ո՞ւմ համար էր վնասակար, ի՞նչ կասի Տաճկաստանը և էթե չհամաձայնի Տաճկաստանը...<sup>14</sup>:

Հողվածում թեև առկա է միամիտ լավատեսությունը, բայց և այնպես Հայաստանի և հայ ժողովրդի դերակատարությունը քաղաքական կյանքում մատնանշելը, նրա քաղաքական ազատությունների մասին խոսք բացելը որակապես նոր փուլ էր նշանավորում դարավոր նիրհից արթնացող ազգի համար: Եվ «Փորձն» այս առումով իսկապես շարունակում էր «Հիւսիսափայլի» սկսած գործը:

Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի (1878 թ.) կնքումից հետո «Փորձի» համարներում զգալիորեն նվազում է քաղաքական հողվածների թիվը: Ցարական գրաքննությունը սկսում է արգելել դրանց տպագրությունը: Մասնավորապես 1879 թ. փետրվարյան համարում «Ազգային տեսութիւն» խորագրի ներքո խմբագիրը տալիս է հետևյալ ծանուցումը. «Ցաւով սրտի յայտնում ենք, որ «Հայկական ինդիքը եւրոպական

---

<sup>14</sup> Տե՛ս «Տաճկական Հայաստանի անկախութիւնը», «Փորձ», 1877-1878, թիւ 1, էջ 364-366:

շահերի տեսակետից» վերնագրով յոդվածը լոյս չտեսաւ խմբագրութիւնից միանգամայն անկախ պատճառներով<sup>15</sup>:

Նայ ազգի քաղաքական ազատության շուրջ «Փորձի» էջերում ծավալված քննարկումները հետագայում ավելի են ակտիվանում 1880-ականների երկրորդ կեսին և 90-ականներին հայ ազգային քաղաքական կուսակցությունների մամուլում: Դրանք նույնպէս հանգամանակից ուսումնասիրության կարիք ունեն:

### **Ամփոփում**

Ազգային արժեհամակարգի երկու առանցքային դրոյթներին՝ ազգության և քաղաքական ազատության խնդիրները 1870-ականների վերջին, կապված 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հետ, արևելահայ իրականության մեջ լուրջ քննարկումների առիթ են դառնում:

Ազգության խնդիրը՝ իբրև «տասնհիններորդ դարու նշանաբան», «Փորձի» հոդվածագիրներին մղում է համակողմանիորեն քննելու հայ ազգային ինքնության, նրա դարավոր ու ներկա ընթացքի հիմնական ուղղությունները և եզրահանգելու, որ նոր ժամանակներում մեր ազգը կարող է քաղաքակրթական միջնորդ դառնալ եվրոպական և ասիական ազգերի միջև:

Այս դիտարկումները նոր շարունակություն են ստանում հայ ժողովրդի քաղաքական ազատության մասին գրված հոդվածներում: Քննության առարկա դարձնելով նրա անցած ճանապարհը և տխուր ներկան՝ «Փորձի» հեղինակները, այնուհանդերձ, չեն կորցնում լավատեսությունը: Իբրև նախընտրելի գաղափար՝ շեշտվում է հայերի միջնորդական առաքելություն-

---

<sup>15</sup> Տե՛ս **Յովհաննիսեան Ա.**, Ազգային տեսութիւն, «Փորձ», 1879, թիւ 2, էջ 146:

նը Արևմուտքի և Արևելքի միջև, իսկ իբրև քաղաքական միավոր ձևավորվելու տարբերակ՝ Հայաստանի ինքնավարությունը Օսմանյան կայսրության տարածքում: Այս գաղափարները, ի դեպ, շրջանառվում են եվրոպացի մշակութային և քաղաքական գործիչների տեսակետների հիմքի վրա:

Հիշյալ երկու դրույթները, հատկապես վերջինը, հետագայում նոր զարգացումներ ստացան 1880-ականների երկրորդ կեսին և 1890-ականների սկզբին ասպարեզ իջած հայ քաղաքական մամուլի էջերում:

2018 թ.

DAVID PETROSYAN  
MEDIA TEXT: A DIALOGUE OF TIMES  
SUMMARY

Time materializes in parallel with the physical and spiritual biography of a person. Culture accompanies the time giving an esthetic meaning to the latter with its communicative possibilities.

In this context, we have considered the internal boundaries and value creating activities of one of the cultural realities - **the media text**. The term "*internal boundaries*" contributes to a deep penetration into the narrative layers of the media text in order to identify the semantic and sometimes semiotic features of the latter.

In most of the articles included in the first section of the book ("Value Boundaries of Communication"), the primary task is to study the **internal time** and **space** characteristic of the media text and its author, which may seem unusual in the case of media text. The implementation of this task was possible through interdisciplinary research, in the case of which, in addition to the methods of journalism studies, the methods of history, psychology, literary criticism, culture studies, etc., were in the focus of our attention.

The **internal time** of the author opens up new opportunities to present the remarkable aspects of the his worldview, how he presents the material and interacts with the audience. In this context, the **dialogic nature** of internal time, embodied in the internal dialogues of the text, is also revealed.

The second section ("The Presence of the Conventional") includes articles in which we have tried to evaluate the attitude of

the Armenian intelligentsia **to the civilizational and cultural values** covered by the Armenian press in the second half of the 19th and early 20th centuries. We have referred to publications related to national and cultural identity, Armenian statehood, the concept of university, in particular, the civilizational assessment of the Armenian university. The **comparative image** of the ideological, semantic, thematic trends of the Armenian press of those years and the remarkable developments of today's media, takes on a new meaning when viewed in the dialogue of times.

Thematically diverse articles as a whole are combined with internal logical unity. Thus, the collection can be considered a **fragmentary monograph**. Both in the past and today, the media text, embodying the Armenian reality in the virtual space, creates a parallel spiritual reality, the study of which is essential in order to outline the value boundaries of the Armenian society in our times.

**ДАВИД ПЕТРОСЯН**  
**МЕДИАТЕКСТ: ДИАЛОГ ВРЕМЕН**  
**РЕЗЮМЕ**

Время материализуется параллельно с физической и духовной биографией человека. Культура – спутница времени, своими коммуникативными возможностями она эстетически осмысливает присутствие времени.

В этом контексте нами рассмотрены внутренние границы и ценностно-формирующая деятельность одной из культурных реалий – медиатекста. Термин «внутренние границы» способствует глубокому проникновению в нарративные пласты медиатекста с целью выявления его семантических, а иногда и семиотических особенностей.

В большинстве статей, вошедших в первый раздел книги («Ценностные границы коммуникации»), первостепенной задачей является исследование внутреннего времени и пространства, характерного для медиатекста и его автора. Реализация этой задачи возможна посредством междисциплинарного исследования. В данном случае в фокусе нашего внимания оказались, помимо методов журналистики, методы истории, психологии, литературоведения, культурологии и др.

Внутреннее время автора открывает возможности для представления мировоззрения автора, подачи материала, взаимодействия автора с аудиторией. В этом контексте раскрывается диалогичность внутреннего времени, воплощенная во внутренних диалогах текста.

Во второй раздел («Присутствие традиционного») вошли статьи, в которых мы попытались дать оценку отношению армянской интеллигенции к цивилизационным и культурным ценностям, освещаемым армянской прессой во второй половине XIX-начале XX века. Мы ссылались на публикации, связанные с национальной и культурной идентичностью, армянской государственностью, идеей университета, в частности, с цивилизационной оценкой армянского университета. Сопоставительная картина идейных, семантических, тематических направлений, выдвинутых на страницах армянской прессы тех лет, а также примечательных событий в современных медиа, обретает новый смысл, если рассматривать ее в диалоге времен.

Тематическое разнообразие статей в целом сочетается со смысловыми и структурными переходами. И поэтому сборник можно рассматривать как фрагментарную монографию. Как в прошлом, так и в наши дни виртуальное пространство медиа-текста, олицетворяющего армянскую действительность, создает параллельную духовную реальность, изучение которой актуально для того, чтобы очертить ценностные границы современного армянского общества.

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Երևանի համալսարան, 1918-1920 թթ., վավերագրերի ժողովածու», Եր. համալս. հրատ., Եր., 1995, էջ 94, 335 էջ:

2. **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, 670 էջ:

3. **Հակոբյան Ա.** Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Եր., 2005, 64 էջ:

4. «Հայ պարբերական մամուլի պատմություն, XVII-XIX դարեր», հ. 1, Կահիրե, 2006, 702 էջ:

5. «Հայ պարբերական մամուլի պատմություն, 1900-1922», հ. 2, Եր., 2017, 787 էջ:

6. **Մելիք-Կարազեօղեան Գ.**, Գերմանիայի հայ ուսանողությունը, Թիֆլիս, Կ. Մարտիրոսեանցի տպարան, 1901:

7. **Մելիք-Ղարազեօղեան Գ.**, Երևանի համալսարանի ծագումը և նրա կազմակերպչական շրջանը, տետր թիվ 1, ձեռագիր // Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 502, գործ 173:

8. **Մխիթարյան Մ. Հ.**, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ., Եր., 1976, 560 էջ:

9. **Նալբանդյան Մ.**, Երկեր, «Սովետական գրող», հրատ., Եր., 1985, 632 էջ:

10. «Պահպանողական հոսանքներ և գաղափարներ», Եր., ՀՀԿ, 2010, 44 էջ:

11. **Պետրոսյան Դ.**, Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում, Ե., Եր. համալս. հրատ., 2007, 368 էջ:

12. **Պետրոսյան Դ.**, Պատում, մեղիատեքստ, հակառակ հեռանկար, Ե., 2017, 184 էջ:

13. **Ստեփանյան Ա.**, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, Գիրք Ա, Արտաշիսյան դարաշրջան, Եր., «Մարգիս Խաչենց. Փրինթինգ», 2012, 385 էջ:

14. **Арнольдов А. И.**, Путь к храму культуры: образование как социокультурный феномен, М. 2000, 108 с.

15. «Архетипические структуры художественного сознания», Екатеринбург, 2001.

16. **Бахтин М. М.**, Литературно-критические статьи. М., «Художественная литература», 1986, 543 с.

17. **Бахтин М. М.**, Собрание сочинений, т. 6. М., 2002, 800 с.

18. **Бергсон А.**, Непосредственные данные сознания. Время и свобода воли, Л. Изд-во ЛКИ, 2010, 226 с.

19. **Гуссерль Э.**, Феноменология внутреннего сознания времени, т. 1, М., Гнозис, 1994, 162 с.

20. «Идея университета: парадоксы самоописания», (под ред. М. А. Гусаковского, А. А. Полонникова), Мн., БГУ, 2002, 244 с.

21. **Кирия И. В., Новикова А. А.**, История и теория медиа, М. Изд. дом Высшей школы экономики, 2020, 423 с.

22. **Лихачев Д. С.**, Поэзия садов, СПб. «Наука», 1991, 371 с.

23. **Лысак И., Косенчук Л.**, Формирование персональной идентичности в условиях сетевой культуры, Изд. «Спутник», М. 2016, 147 с.

24. **Манович Л.**, Язык новых медиа, М. Ад маргинем пресс, 2018, 400 с.

25. **Мелик-Карагезян Г.**, Воспоминания. Делегация Армянского Национального Совета в Германию и в союзные с ней страны в 1918 году, М.-Ереван, 2017, 160 с.

26. «Мифы народов мира», Энциклопедия, изд. «Советская энциклопедия», т. 1, М. 1980, 1147 с.

27. **Ремизов В. А.**, Культура личности /ценностно-мировоззренческий анализ/, М. 2000.

**28. Сидоров В. А., Ильченко С. С., Нигматулина К. Р.,** Аксиология журналистики /под общ. ред. В. А. Сидорова/, СПб. 2009, 174 с.

**29. Симах Т.,** Ереванский государственный университет: семиотика пространства, интеллектуальный ландшафт, социальная память, Ер., Изд. ЕГУ, 2021, 102 с.

**30. «Философский словарь»** (под ред. И. Т. Фролова), М. «Республика», 2001, 719 с.

**31. Фролова Е. В.,** Академические ценности современного университета: социально-философский анализ, Диссертация, М. 2006, 144 с.

**32. Хайдеггер М.,** Бытие и время, Харьков, «Фолио», 2003, 503 с.

### **ՀՈՂՎԱԾՆԵՐ**

1. «Ազգության խնդիրը, պրոֆեսոր Զիգֆրիդ Բրի», «Փորձ», 1877, թիվ 3, էջ 203:

2. **Բրիչ, Գեորգ Մելիք-Կարազեօղեան,** Գերմանիայի հայ ուսանողությունը, Թիֆլիս, տպ. Վ. Մարտիրոսեանի, «Լուսնայ», 1902, թիվ 1, էջ 231-238:

3. **Գ. Լ.,** Ներածություն հայոց գեղարուեստի պատմության, «Գեղարուեստ», 1913, № 5, էջ 32:

4. **Գ. Լ.,** Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչության (փորձ ուսումնասիրության), «Գեղարուեստ», 1908, № 1, էջ 25:

5. **Գ. Լ.,** Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչության, «Գեղարուեստ», 1909, № 3, էջ 25:

6. «Գերմանական համալսարանների կազմակերպությունը, «Փորձ», Թիֆլիս, 1879, էջ 81:

7. «Գերմանական համալսարանների ոգու ինքնուրույնությունը (համառոտագրություն Ենայի համալսարանի տեսչի ճառի), Հովհաննես Բարխուդարեանցի», «Մուրճ», Թիֆլիս, 1890, N 9, էջ 1304:

8. **Դանիելյան Տ.,** Մատենագիտական գովազդը թիֆլիսահայ պարբերական մամուլում (1865-1905 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», 2020, N 2 (32), էջ 93-103:

**9. Թորամանեան Թ.**, Հայաստանի արքունական ու իշխանական ապարանքները եւ անոնց ներքին կենցաղը, «Գեղարուեստ», 1917, № 6, էջ 78-79:

**10. Լեւոնյան Գ.**, Ներածութիւն հայոց գեղարուեստի պատմութեան, «Գեղարուեստ», 1917, № 6, էջ 32:

**11. Խառատյան Ա.**, Հայ հասարակական հոսանքները XIX դ. 50-70-ական թվականներին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2006, N 1, էջ 272-284:

**12. Հովհաննիսյան Ա.**, 19-րդ դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4. էջ 55-78, 1966, № 1, էջ 33-62:

**13. Հովհաննիսյան Ա.** Ազգային տեսութիւն, «Փորձ», 1879, թիւ 2, էջ 146:

**14. Ղալթախչյան Տ.**, «Համազգային մեծ հորելյանի» տոնակատարություններն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում, «Ցեղասպանագիտական հանդես, N 5 (2), 2017, էջ 104:

**15. Մաղալյան Վ.**, Երևանի պետական համալսարանի հիմնադրումը, «Էջմիածին», 1999, թիվ Ը-Թ, էջ 80-92:

**16. Մարդանեան Ֆ.**, Պոլիտեխնիկում Բազում, «Մուրճ», Թիֆլիս, 1898, N5, էջ 719-722, Ջալալեան Կ., Բարձրագոյն ուսումնարան Թիֆլիսում, «Մուրճ», Թիֆլիս, 1907, N1, էջ 65-89:

**17. Միվա Կ.**, Գիտութիւնը և համալսարանները Ճապոնիայում, «Մուրճ», Թիֆլիս, 1904, N 10, էջ 132-142:

**18. Նալբանդեան Վ., Գեորգ Մելիք-Կարազեօզեան**, Գերմանիայի հայ ուսանողութիւնը (արտաստպուած «Տարագ»-ից), «Մուրճ», 1902, թիվ 1, էջ 143-147:

**19. Զոպանեան Ա.**, Ռուսահայեր ու թրքահայեր, «Անահիտ», 1899, թիվ 11, էջ 318:

**20.** «Ազգերի զարգացման օրենքները», «Փորձ», 1877, թիվ 3, էջ 222-256:

**21. Պալասանյան Ս.,** Տասնիններորդ դարու նշանաբանը, «Փորձ», 1877-1878, թիվ 1, էջ 133:

**22. Պետրոսյան Հ.,** «Հայաստան-դրախտ կորուսյալ» (Հայ ինքնության մի հարացույցի ձևավորման ակունքները), «Ինքնության հարցեր», Տարեգիրք, Ե., 2002:

**23. Ստեփանյան Ա., Մարգարյան Ե.,** Ժամանակի կառույցը Ֆ. Բրոդելի պատմահայեցողության ծիրում, «Պատմություն և կրթություն», Եր., 2005, N1-2, էջ 33-42:

**24. Ստեփանյան Ա.,** Ինքնության ազգային չափումը (նախնական դատողություններ) , «Ինքնության հարցեր», Երևան, 2002, էջ 11-31:

**25.** «Տաճկական Հայաստանի անկախութիւնը», «Փորձ», 1877-1878, թիվ 1, էջ 361:

**26. Տիգրանեան Լ.,** Գերմանական Դորպատ համալսարանը և նորա հայ ուսանողները 1830-1892 թթ., «Լուսմայ», 1903, N 5, էջ 5-33:

**27. Асмолов А. Г., Асмолов Г. А.,** От Мы-медиа к Я-медиа: трансформация идентичности в виртуальном мире, «Вестник Московского университета», сер. 14, «Психология», 2010, N 1.

**28. Асташкин А. Г.,** Социокультурная среда в России начала XX века и ее влияние на становление журналистики, «Ученые записки Казанского университета. Серия «Гуманитарные науки», 2017, т. 159, кн. 3, էջ 732-741.

**29. Бахтизина Д. И.,** Время в музыке, «Вестник Омского университета», 2009, № 4, с. 30.

**30. Брежнева Е. В.,** «Время внешнее» и «время внутреннее» в поэтике романов Вирджинии Вулф, «Вестник Пермского университета», 2011, вып. 4 (16), էջ 225-231.

**31. Войскунский А. Е., Евдокименко А. С., Федунина Н. Ю.,** Альтернативная идентичность в социальных сетях, «Вестник Московского университета», Сер. 14, «Психология», 2013, N 1, с. 66-83.

**32. Дильтей В.**, Категории жизни, «Вопросы философии», 1995, N 10, с.132.

**33. Жаркова Е. С.**, Социальные сети и личность: проблема идентичности, «Известия вузов. Серия «Гуманитарные науки», 2017, N 8 (2), с. 124-127.

**34. Карабанова В. А.**, Хронотоп дороги/пути в хоррор-культуре, «Вестник Новгородского государственного университета», 2015, N 87, ч. 1, с.104.

**35. Козлова Н. С.**, Реальная и виртуальная идентичность, «Социум и власть», N 2(52), 2015, с. 118-121.

**36. Косенкова И. О.**, Субъективное время в романе Гайто Газданова «Возвращение Будды», «Вестник КГУ им. Н. А. Некрасова», 2012, N 4, 82 85-88.

**37. Липатова М. Е. Богатырева А. А.**, Актуализация межкультурного диалога в современном интернет-пространстве, «Вестник РУДН», 2016, том 16, N 1, с. 72-84.

**38. Матузкова Е. П.**, Культурная идентичность: к определению понятия, «Вестник Балтийского федерального университета им. И. Канта», 2014, вып. 2, с. 62-68.

**39. Млечко А. В.**, Семантика мифологемы пути в художественном дискурсе журнала «Современные записки» (1920–1940). «Вестник Волгоградского государственного университета», сер. 2, «Языкознание», 2008, №2(8), с. 6-12.

**40. Наумова Н. Ф.**, Время человека, «Социологический журнал», М., 1997, N 3, с. 163.

**41. Петросян Д. В.**, Ценности национальной и глобальной культуры: мастерство диалога», «Медиаальманах», 2015, N 5, с. 47-53.

**42. Пилипюк Л. А.**, Субъективное восприятие времени героями Оноре Бальзака, «Молодой вчений», N 7 (22), ч. 1, л., 2015, с. 150-154.

**43. Пронин В. В.**, Трансформация идентичности в пространстве интернета, «Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского», Серия «Социальные науки», 2011, N4(24), с. 126-132.

**44. Пронкина Е. С.**, Репрезентации личной жизни в социальных медиа (на примере социальной сети «В контакте»), «Обсерватория культуры». 2017. т. 14, № 4, с. 404—410.

**45. Радугина О. А., Бойматов У. Ф.**, Проблематизация культурной идентичности в эпоху глобализации, «Вестник ВГУ», серия «Философия», 2018, с. 53-61.

**46. Рыльская Е. А., Погорелов Д. Н.**, Идентичность личности в виртуальном пространстве социальных сетей и реальная идентичность: сравнительные характеристики, «Ярославский педагогический вестник», 2021, N1 (118), с.111-112.

**47. Сботова С. В., Пац М. В.**, Осмысление феномена пути в русской гуманитаристике XIX-XX вв. (В.О. Ключевский, Н.А. Бердяев, М.М. Бахтин), «Известия Пензенского государственного педагогического университета имени В. Г. Белинского, Гуманитарные науки», № 27, 2012, с. 58-61.

**48. Солдатова Е. Л., Погорелов Д. Н.**, Феномен виртуальной идентичности: современное состояние проблемы, «Образование и наука», т. 20, N 5, 2018, с. 112.

**49. Солдатова Е. Л., Погорелов Д. Н.**, Феномен виртуальной идентичности: современное состояние проблемы, «Образование и наука», т. 20, N 5, 2018, с. 114.

**50. Старцев А. А. Гришанин Н. В., Кириллина Н. В.**, Идентичность и идентификация личности в социальных сетях, «Коммуникология», 2018, т. 6, N. 4, с. 76-87.

**51. Тихонов О. В.**, Социальные сети как пространство самопрезентации индивида, «Вестник Казанского технологического университета». Казань, Изд-во КНИТУ, 2012, т. 15, № 22, с. 196–199.

52. **Шиханов А. В.**, Влияние социальных сетей на сближение представлений о личности «в кадре» и «за кадром», «Ярославский педагогический вестник», 2017, № 3, с. 355.

53. **Guibernau M., D.**, Anthony Smith on Nations and National Identity: A Critical Assessment, “Nations and Nationalism”, 10 (1/2), 2004, p. 136.

## **ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼՈՒՄ ԵՎ ԿԱՅՔԵՐՈՒՄ**

1. **Աթանեսյան Ա.**, Բարդութափոխության անհրաժեշտության մասին, <http://theanalyticon.com/?p=10643>

2. **Ավագյան Լ.**, Հանրապետականներ, մոտեցե՛ք ելքին... <http://armtimes.com/hy/article/136438>

3. **Արծրունի Գ.**, Գերդաստանի ազդեցություն և համալսարան, «Հայկական աշխարհ», Թիֆլիս, 1867, N 9, էջ 365:

4. **Արծրունի Գ.**, Հիմի ժամանակ է, «Մշակ», Թիֆլիս, 1873, N 31:

5. **Արծրունի Գ.**, Համալսարանը որպես քաղաքակրթական շրջան, «Մշակ», Թիֆլիս, 1878, N168:

6. **Արծրունի Գ.**, Ինչի չունենք, «Մշակ», Թիֆլիս, 1878, N 149:

7. **Բաղդասարյան Մ.**, Ժողովրդավարություն առանց կուսակցությունների <https://hetq.am/hy/article/119923>

8. **Բայադյան Հր.**, Մեդիա և մշակույթ, <https://hetq.am/hy/article/-8099> 12 մարտի 2004:

9. **Բայադյան Հ.**, Տեղեկատվամիջոցներ և մշակութային ինքնություն, <https://hetq.am/hy/article/31574>

10. **Գալստյան Ա.**, Ամեն ինչ դեռ նոր է սկսվում. թավշյա հեղափոխության սցենարները Հայաստանում <http://www.ankakh.com/-article/95583>

11. **Գրիգորյան Ա.**, Հեղափոխության դոնկիխոտները. <http://www.ilur.am/news/view/68338.html>

12. **Գրիգորյան Ռ.**, Թավշյա հեղափոխությունը և Սերժ Սարգսյանի ճակատագրական սխալը, <http://galatv.am/hy/news/227179/>

13. **Դանիելյան Ստ.**, Նախագահի «երկու մարմինը» կամ այն, ինչը Սերժ Սարգսյանը չէր հասկացել, <https://hetq.am/hy/article/88677>

14. **Դեմիրճյան Մ.**, Թավշյա հեղափոխություն. հայկական տարբերակ <http://theanalyticon.com/?p=10646>

15. **Զավրյան Դ.**, Երևանի համալսարանի բացման հարցի առիթով, «Աշխատանք», 10 սեպտեմբերի 1919 թ., N 66:

16. «Իդեալական հեղափոխությունը նույնպես զին ունի». Խմբագրական <http://armtimes.com/hy/article/136985>

17. «Իլյա Մայիլյանի հեռագիրը համալսարանի տեսուչ Յուրի Ղամբարյանին համալսարանին մեկ միլիոն ռուբլի նվիրաբերելու մասին», «Երեւանի համալսարան», 1919:

18. **Իշխանյան Ա.**, Անկախության մանկական հիվանդությունը <https://yerkirmedia.am/hy/article/2020/07/30/16524/>

19. **Խանոյան Մ.**, Գիտության կաճառը, «Հայաստանի համալսարան», 31 հունվարի 1920 թ., Ալեքսանդրապոլ:

20. **Խաչատրյան Մ.**, 11 օր, որ փոխեցին Հայաստանը, <https://azg.am/AM201804703>

21. **Համբարյան Ռ.** Սերիալի կոճակը սեղմելիս..., «Ազգ-Մշակույթ», 11.08. 2008, թիվ 21:

22. Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացման արարողության նկարագրությունը, «Յառաջ», 5 փետրվարի 1920 թ., N 26:

23. «Հայկական համալսարանի բացումը», «Ժողովուրդ», 1 փետրվարի 1920 թ., [http://elib.bsu.by/bitstream/123456789/113858/1/-идея%20универ\\_2002.pdf](http://elib.bsu.by/bitstream/123456789/113858/1/-идея%20универ_2002.pdf)

24. **Հարությունյան Լ.**, Իմ որոշումը սերն է. Տիգրան Մանսուրյան, <https://www.qahana.am/am/christian/show/844497382/70>

25. **Հովհաննիսյան Վ.**, «Հետևությունների ժամանակը. մաս երկրորդ», <https://yerevan.today/all/politics/61313/hetevoutyounneri-jamanaky-mas-erkrord%E2%80%A4-vahe-hovhannisyann>

26. **Մանվելյան Ա.**, Չախողված պետության ակտորիթմը, azg.am/AM/2020030606

27. **Մավյան Ս.**, Վերջաբան. քայլել Հայաստանով, <http://arteria.am/hy/1544981957>

28. **Մդղեայան Ա.**, Թավշյա հեղափոխություն. ինչպես է տեղի ունենալու իշխանության փոխանցման գործընթացը, <http://www.arm-times.com/hy/article/136152>

29. **Նաիր Յան**, «Ինչպես տեսա «Ատամնաբույժն...նորեն» ներկայացումը», <https://www.azg.am/AM/culture/2020022804>

30. **Նաիր Յան**, «Մաեստրոն», [azg.am/AM/culture/2019020101](http://azg.am/AM/culture/2019020101)

31. **Չալաբյան Ա.**, Ինչպես ամրապնդել հեղափոխության ժողովրդավարական նվաճումները, [https://mediamax.am/am/column/-12849/?fb\\_comment\\_id=1925961424105136\\_1926460374055241?fb\\_comment\\_id=1925961424105136\\_1926460374055241](https://mediamax.am/am/column/-12849/?fb_comment_id=1925961424105136_1926460374055241?fb_comment_id=1925961424105136_1926460374055241)

32. «Չարլի Չապլինի նամակն իր դասերը՝ Ջերալդինային», <http://www.magaghat.am/2014/04/>

33. **Սարգսյան Ս. Թ.**, «Մենք պետականության գաղափարը հավերժ կրող ժողովուրդ ենք», <https://www.azg.am/AM/2020061904>

34. **Սենտ-Էքզյուպերի Ա. դը**, Գիշերային թռիչք, [https://lib.mskh.am/images/books/Gisherayin-trichq\\_Antoine-de-Saint-Exupry.pdf](https://lib.mskh.am/images/books/Gisherayin-trichq_Antoine-de-Saint-Exupry.pdf)

35. **Սուրենյան Վ.**, «Չէ, օ, Տոլստոյ, չէ», «Ազգ-Մշակույթ», 14.07.2007, թիվ 14:

36. «Ցանկ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների, Հավելված ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման», [http://www.dipacademy.am/u\\_files/file/](http://www.dipacademy.am/u_files/file/)

37. **Քաղաքացի**, Արդեօ՞ք համալսարանի ժամանակ է Հայաստանում, «Ժողովուրդ», օրաթերթ, 24 օգոստոսի 1919, N 94:

38. **Бахтин М. М.**, Формы времени и хронотопа в романе. Очерки по исторической поэтике, <http://philologos.narod.ru/bakhtin/hronotop/-hronmain.html>



50. **Осипова Н. О.**, Мифологема пути в художественном пространстве «Петербургских повестей» Гоголя <http://domgogolya.ru/science/researches/1470/>.

51. **Пастухов А. Г.**, О границах медиа: новые медиа и новая медийная культура. Ученые записки Орловского государственного университета, N1(64), 2015, с. 182-188, <https://boon.am/>

52. **Плешков А. А.**, О времени и вечности в философии Платона и Плотина C:/Users/Comp/Downloads/o-vremeni-i-vechnosti-v-filosofii-platona-i-plotina.pdf

53. **Раш М.**, Новые медиа в искусстве, <https://knizhnik.org/majkl-rash/novye-media-v-iskusstve>

54. **Семенова А. Л.**, Русская философская публицистика начала XX века, <https://cyberleninka.ru/article/n/russkaya-filosofskaya-publitsistika-nachala-hh-v-etapy-razvitiya-polemiki-mezhdu-idealistami-i-pozitivistami>

55. Субъективное и объективное время, <https://studopedia.ru/119973-sub-ektivnoe-i-ob-ektivnoe-vremya.html>

56. **Умберто Эко:** Культура не находится в кризисе; она сама - постоянный кризис, <https://inosmi.ru/world/20160222/209379533.html>

57. «Художественное пространство», [https://studme.org/37376/-etika\\_i\\_estetika/hudozhestvennoe\\_prostranstvo#778](https://studme.org/37376/-etika_i_estetika/hudozhestvennoe_prostranstvo#778)

## Բովանդակություն

Երկու խոսք .....	3
<b>Մեղիատեքստ. հաղորդակցության արժեքային սահմանները.....</b>	<b>7</b>
Ներքին ժամանակը Հովհաննես Թումանյանի խմբագրականներում .....	9
Հեղինակի ներքին ժամանակը գեղարվեստական պատումի համապատկերում .....	20
Հեղինակի ներքին ժամանակը հայկական մեղիատեքստերում (2018 թ. ապրիլ-մայիս) .....	30
Ներքին երկխոսությունը նամակի և էսսեի համատեքստում.....	41
Հայ արվեստը հայաստանյան մշակութային կայքերում. փոխակերպման միտումներ .....	55
Ճանապարհի առասպելային հայաստանյան մեղիախոսություն .....	65
Անհատի ինքնության նոր որակները վիրտուալ իրականության մեջ («Ֆեյսբուքի» հայ օգտատերերի օրինակով) .....	79
Ավանդականի ներկայությունը (Հայ մամուլը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարասկզբին).....	89
Հայ մամուլը 20-րդ դարասկզբի քաղաքական, մշակութային գործընթացների համատեքստում (քննական ակնարկ).....	91
Հայ մշակութային ինքնության իմաստավորումը Գարեգին Լևոնյանի «Գեղարուեստ» ամսագրում .....	106

Հայոց համալսարանի քաղաքակրթական արժևորման խնդիրները Հայաստանի առաջին հանրապետության մամուլում .....	120
Համալսարանի գաղափարը 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ մամուլում .....	130
Գևորգ Մելիք-Ղարաբյոզյանը՝ հայոց համալսարանի հիմնադրման ակունքներում .....	142
Ազգության և քաղաքական ազատության խնդիրները «Փորձ» ամսագրում (1876-1881 թթ.).....	155
Summary .....	168
Резюме .....	170
Մատենագրություն .....	172

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՄԵԴԻԱՏԵԲՍ.  
ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ  
ԵՐԿԻՈՍՈՒԹՅՈՒՆԸ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ջ. Կճանյանի  
Հրատ. սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Ստորագրված է տպագրության՝ 19.09.2022  
Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 11,625:  
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.y-su.am](http://www.publishing.y-su.am)



ՎՐԱՏԱՐԱԿՆԵՐՆԵՐ  
ԵՐԵՎԱՆ 2022  
[publishing.ysu.am](http://publishing.ysu.am)